

10797

891.99

m-34



891.99

10-34 ար 29

ՔՐԻՏԻԿԱԿԱՆ ՀԱՅԱՅ ՀՐԱՏԱՐԱԿԱԳԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

№ 156

ՄԱՐԻԱՄ ԽԱՏԻՍԵԱՆՑ

ԴԺԲԱԽՏ ԿԻՆ

1001  
1902

Կ Է Գ

ՔՐԻՏԻԿ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԱՆՑԻ

Типография М. Д. Ротинянца, Гол. пр., д. № 41.

1899

8003



անուշ անուամ, համ սիրով նայում էի, թէ որպիսի  
ախորժակով նրանք էին ուտում: Սովոր լինելով  
թէ երիտասարդ բարեկամիս և թէ մանաւանդ նրա  
միշտ ուրախ, միշտ աշխույժ կնոջ սիրալիլը ընդու-  
նելութեան՝ ես չափազանց զարմացած մնացի,  
տեսնելով նրանց տխուր երեսները:

— Ը՛ր, քնն է պատահել... կարծես երկուսդ  
էլ թրջած հաւեր լինէք, — հարցրի ես, երկիւղ կրե-  
լով, մի գւղէ որեւէ փորձանք է պատահել: Կրկնած  
հարցմունքիս երիտասարդ տանտիկինը տխուր-  
տրտում պատասխանեց.

— Է՛հ, ոչինչ... խաչեղբայր. մենք հէնց նոր  
վերադարձանք գերեզմանատնից, ուր գնացել էինք  
այցելելու հորաքրոջս աղջկալ գերեզմանը, հան-  
գուցեալի մօրաքրոջ հետ:

— Բայց վաղուց է, որ նա մեռել է:

— Նրկու տարի կլինի: Այսօր նրա մահուան  
տարեդարձի օրն է:

— Մինչև այժմ, կարծեմ, կարելի էր արդէն  
մխիթարուել, — փոքր ինչ խիստ կերպով խօսքը  
կտրեցի ես. բայց նկատելով արտասուքի երկու  
խոշոր կաթիլ, որոնք գլորուեցան երիտասարդ  
կնոջ այտերով՝ ես իսկոյն զգացի մի տեսակ խղ-  
ճահարութիւն:

— Այ՛ն, եթէ տարաբախտ Մանեայի մահը սո-  
վորական երևութներից մէկը լինէր՝ այն ժամանակ  
այլ հարց էր. բայց նրա մահուան մէջ ծածկուած

է մի անսովոր, մի տարօրինակ բան, — մէջ մտաւ  
իմ բարեկամը:

— Ի՛նչ բան, — ահամայ հետաքրքրուեցայ ես,  
աչքս չպոկելով նրանից:

Այն բոլորը, ինչ որ խորհրդաւոր էր լինձ  
միշտ հրապուրում, գրաւում էր:

Նրիտասարդ բարեկամս հակացրեց ինձ, որ  
չէ ուզում խօսել կնոջ ներկայութեամբ, որ ա-  
ռանց այն էլ խիստ լուզուած էր երեւում: Այն-ինչ  
իմ հետաքրքրութիւնն անզսպելի էր. ուզում էի  
չուտով իմանալ, թէ բանն ինչո՞ւմն է: Իմ բախ-  
տից՝ հարեան սենեակից լսուեց սանիկիս լացի  
ձայնը: Նրիտասարդ մայրը մի ակնթարթում դուրս  
վազեց հլւրասենեակից:

— Այ՛ն, հանդուցեալը զո՞ գնաց Ատունի իշ-  
խանների ազահութեան և ծալրայեղ անափառու-  
թեան, — արտասանեց բարեկամս, և նրա միշտ ան-  
դորր ու հեզահալեաց աչքերը վառուեցան հրով:

— Է՛, Քրիստափոր, քո ասածն ուրեմն էլի  
այն հին կրգն է, — հիասթափուած նկատեցի ես:  
— Յիշում եմ, չորս թէ հինգ տարի առաջ ամենքն  
էլ խօսում էին, որ իշխան Ատունին մօր հետ  
միասին՝ իրանց գործերը դրստել են շնորհիւ մի  
ինչ-որ կապալառուի աղջկալ կէս միլիօնանոց օ-  
ժիտի: Է՛հ, բարեկամ, ժամանակ է, որ ընտելտ-  
նանք այդ տեսակ ալլանդակութիւնների: Որ մ-  
զանում ամուսնութեան ժամանակ փողն առաջին

տեղն է բռնում, իսկ հարսնացուն երկրորդ տեղը՝ դա հին հէքիաթ է. դու նոր բան ասա:

— Ա՛խ, ծանր է մտաբերել,— ձեռքն ուժգնութեամբ թօթափեց Ակումեանը:

Ներքին յանկարծակի վրդովմունքը ցնցեց նրա ամբողջ երեսը. չետոյ մի քիչ հանդարտուելով, նա շարունակեց.— այ՛ն, կեանքը, յուսախաբութեամբ լի կեանքն այնպիսի մի ծանր, ճնշող բռնը դարձաւ դեռ տակաւին երիտասարդ կնոջ համար, որ նա չզիմացաւ, շատ վաղ ընկաւ...

— Ձարմանալի խորհրդաւոր եղանակ ես տալիս խօսքերիդ, բարեկամս, — անհամբերութեամբ ընդհատեցի ես նրան:— Ատունի իշխանների հետ ես վաղուց եմ ծանօթ, թէպէտ և այժմ էլ չեմ լինում նրանց տանը. բայց, իրաւն ասած, երբէք չեմ լսած, որ նրանք, քաղաքի մէջ ամենքից յարգուած, ամենքից պատուուած այդ մարդիկ՝ ընդունակ լինէին որևէ սոսկալի գործ կատարելու:

— Այ՛ն, սոսկալի գործ, — կարծես ինքն իրան արտասանեց Ակումեանը:— Մեղանում, Նակով ի վանովիչ, ճշմարիտ է, միշտ օժիտի լետեխցն են ընկնում,— չուզենալով առաջ տարաւ նա իւր խօսքը, — և որքան էլ անհամակրելի լինի այդ ձրդատումը՝ պէտք է խոստովանել, որ նա շատ ու շատ զէպքերում ունի և՛ իւր արդարացուցիչ կողմը, այն է՝ ընտանիքի ապագայի ապահովութիւնը: Սակայն այս զէպքում, հանդուցեալի վերաբերմամբ.....

մի խօսքով, բոլորովին ուրիշ բան էր: Բայց ես բոլորը կարգով կպատմեմ քեզ:

Մինչև ճաշը դեռ երկու ժամ ժամանակ կար: Երկուսս էլ ծխախոտներս կպցնելով՝ աւելի մօտ նստեցինք բուխարուն:

«Իժբախտ հանդուցեալ Մարիա Եգօրովնան հարուստ կապալառու Մկրտումեանի մինուճար աղջիկն էր. կապալառուն մեռաւ սրանից իննը տարի առաջ: Լինելով հասարակ կոչման տէր և համարեա անդրադէտ, բայց վերին աստիճանի մըտաբաց և ձեռներէց՝ կապալառու Մկրտումեանը հարստացաւ շատ կարճ միջոցում: Նա առաջ համեստ էր ապրում, բայց չետոյ իւր մօրաքրոջ աղջկայ, գնդապետի կին Մամուլովայի ազդեցութեան տակ ընկնելով, որ համոզում էր նրան, թէ անհրաժեշտ է նիստուկացի եղանակը փոխել՝ նա տեղափոխուեց մինչև այդ օրը վարձով տրուող իւր փառաշէն տունը, ճոխ կերպով զուգեց-զարդարեց նրան և սկսեց առհասարակ ուրիշ կեանք վարել: Բայց մի բան, որ Մկրտումեանի բնաւորութեան որոշիչ գիծն էր կազմում— դա նրա առատածեռնութիւնն էր, որ հօրից ժառանգել էր նաև աղջիկը: Նա առաջ տեղի թւում, սրտնք օգտուում էին Մկրտումեանի բարերարութիւնից, ինչպէս չալտնի է քեզ՝ գտնուում էր և՛ խոնարհ ծառայ: Այ՛ն, տաւր տարեկան հասակից ես նրա թոշակաւորն էի, առաջ զիմնազիւլում, լետոյ համալսարանում: Կեան-

քիս մէջ չեմ մոռանալ այն բարերարութիւնը, որ նա արել է ինձ»:

Ես նաչեցի պատմողի երեսին, որ ուղղակի անկեղծութիւն էր արտայայտում:

«Հանգուցեալը մեռնելիս՝ իւր աղջկանը չանձնեց Մամուլովայի խնամատարութեան, որովհետեւ վերջինս չնորհիւ իւր խորամանկութեան և խարդախութեան՝ մեծ հեղինակութիւն էր վախճում նրանց տանը: Այդի Մկրտումեանը վերին աստիճանի բարի, բայց և չափից գուրո զիջող ու կարճամիտ կին լինելով՝ անմիջապէս իւր ամուսնի մօրաքրոջ աղջկայ ձեռքումն էր գանձում: Իրերի այս դուրսեան մէջ հասկանալի է, որ Մանեայի դաստիարակութեան ղեկավարը նոյնպէս Մամուլովան էր, որ անդաւակ լինելով՝ սիրում էր Մանեային, բայց մի առանձին սիրով: Ես նոյնպէս փայփայում ու երես էր սալիս նրան՝ ինչպէս երբ որ տանեցիք: Պէտք է ասել ձեզ, որ այսպիսի լարաբերութիւնը դէպի փոքրիկ աղջիկը բնաւ չփչացրեց նրան, որովհետեւ նրա բնութեւնը չափազանց մաքուր ու անարատ էր: Միայն մի բան ցաւալի էր.— Մանեայի մէջ, որը զուրկ չէր խելքից ու ընդունակութիւնից՝ սպանեցին ամեն տեսակ ձգտումն դէպի անկախութիւն, դէպի ինքնուրոյնութիւն: Հէնց որ երեխան որեէ ցանկութիւն էր լայնում կամ մի բան էր ուզում անել՝ ծնողներն իսկոյն սկսում էին մտածել, կշռադա-

տել, թէ ինչպէս կնայի այդ բանի վրայ «տեօտեա Անէտը», արդեօք, Տէրը մի արայցէ, չի բարկանալ նա: Աղջիկը շարունակ հէնց այս էր լսում. «այ՝ ինչ բանը հրամայել է «տեօտեա Անէտը», պէտք է խորհուրդ անել «տեօտեա Անէտի» հետ. առանց «տեօտեա Անէտի» անկարելի է բանը զլուխ բերել: չէ որ նա այնքան խելօք է և փորձառու» — այս և սրանց նման բացազանջութիւններ առւօտից մինչև իրիկուն հնչում էին երեխայի ազանջին: Գծուար չէ հասկանալ, թէ ինչ պէտք է գուրո գար մի այս տեսակ դաստիարակութիւնից: Այժմ ձեզ կասեմ, թէ ինչ կրթութիւն տուին Մանեային: Նորան սովորեցրին բաւականին վարժ խօսել ուսման, Ֆրանսերէն և անգլիերէն, վարժ գաշնամուր անել, գեղեցիկ նկարել ատլասի և ձենապակու վրայ իսկ մնացեալ բաների մասին նա չափազանց տարրական գաղափար ստացաւ: Հայրը, որ տանը միշտ հայերէն էր խօսում, ցանկութիւն լայտնեց, որ իւր աղջիկը կատարելագործուի մայրենի լիզում. սակայն մի անգամ իմ ներկայութեամբ, տիկին Մամուլովան ծաղրի առարկայ չինեց նրան, ասելով թէ տիրացու հօ չէ ուզում դարձնել իւր Մանեային, որ հայոց լեզուն գիտէ շատ աւելի՝ քան այդ պահանջում է կարգին հասարակութեան մէջ: Իմ կատարողութիւնն եկաւ, և այդ պատճառով էլ ինձ պահել չկարողացաւ և շատ կծու բաներ ասացի տիկին Մամուլովային: Ես

աստիկ զայրացաւ և այդ բանն ինձ այլևս երբէք  
չներեց: Ինքը Մանեան էլ այնպիսի ջերմ եռան-  
դով սկսեց պաշտպանել նրան, խնդրելով ինձ մէջ  
չմտնել, որ ես խորին սրտացաւութեամբ վճռեցի  
էլ չխառնուել նրանց ոչ մի գործում: Սակայն  
խօսքիս տէր չեղայ և մի քանի անգամ փորձ փոր-  
ձեցի փոխել բարերարիս աղջկայ կրթութեան սիս-  
տեմը. ես աշխատում էի ապացուցանել թէ Մա-  
մուլովային և թէ դաստիարակչուհիներին գիտու-  
թիւնների ուսումնասիրութեան անհրաժեշտութիւ-  
նը. բայց նրանք միշտ խօսքս կտրում էին, ասե-  
լով թէ գիտութիւնները չեն զարգացնում, այլ  
չորացնում են մատաղ աղջիկների խելքն ու հո-  
գին, դարձնելով նրանց ոչնչականներ. թէ գիմ-  
նադիական ուսումը հարկաւոր է լոկ միայն դիպ-  
լոմ ստանալու համար, որի կարիքն ամենեկին  
չէ զգում այսպիսի մի հարուստ հօր ժառան-  
գուհին: Ես կամաց-կամաց հաշտում էի այն  
մտքի հետ, որ հազիւ թէ կարող եմ մի որևէ ազ-  
դեցութիւն ունենալ Մկրտումեանի տանը, ուր քա-  
նի գնում՝ պակասեցնում էի այցելութիւններս:  
Վերջին տարին, մարդու գնալուց առաջ՝ Մանեան  
մեծ չափշտակութեամբ անձնատուր եղաւ բոման-  
ների ընթերցանութեան, սակայն կարդացած գրք-  
քերի ընտրութեան գործում նա չուներ ոչ մի դե-  
կալար: Մի քանի անգամ փորձեցի զարգացնել  
նրա գրականական ճաշակը, բայց, ինչպէս ինքնե-

քըդ էլ պարզ նկատեցիք իմ բոլոր պատմածից՝  
ոչինչ չկարողացայ անել, փորձերս ապարդիւն ան-  
ցան: Նա միշտ ծիծաղելով ասում էր, որ ընտրած  
գրքերս էլ այնպէս անհամ են՝ ինչպէս և իմ նշա-  
նակած տեղերը: Մանեան, ինչպէս արդէն ա-  
սացի ձեզ, մանկական հասակից ամեն բանի վրայ  
տիկին Մամուլովայի աչքով նայելով՝ զուրկ էր  
սեփական անկախ, ազատ դատողութիւնից: Բարե-  
քախտաբար, նրա դաստիարակչուհիները, որոնցից  
առաջինը զվիցերիացի էր, իսկ երկրորդը անգլիա-  
ցի, իրանք բարոյական կանայք լինելով՝ չէին  
փչացնում իրանց սանուհուն, ինչպէս որ այդ շատ  
չաճախ պատահում է. միայն նրանք Մամուլովայի  
դրդմամբ աղջկայ գլուխը լցնում էին ամեն տեսակ  
անափառական ձգտումներով. քարոզում էին նորան  
արիստոկրատիայի, աղնուացիղութեան և աշխար-  
հային փալ ու շուքի վսեմութիւնն ու բարձր արժա-  
նիքները: Աղջկայ լսածը հէնց այն էլ լինում.—  
bon ton, mauvais ton, այս-ինչն ընդունուած է  
կամ ընդունուած չէ բարձր շրջանում,—մի խօս-  
քով՝ վայելչադեղ ձևերն ու շարժուածքները և  
que dira t'on? դարձաւ նրա կեանքի նշանաբանը,  
նրա կեանքի խորհուրդը: Մամուլովան, որ ամ-  
բողջ Թիֆլիզին չարտնի էր բարձր դասակարգն  
ընկնելու, այնտեղ մի դեր խաղալու իւր բուռն  
ձգտումներով՝ մեծ սէր ու համակրանք էր ցոյց  
տալիս իշխանուհի Ատունուն և միշտ շողոքոր-

թում էր նրան: Ի՞նչ-ինչ միջոցներ ասես չէր գործածում նա՝ իշխանուհուն հաճոյանալու համար: Ամենից առաջ այդ կինն իշխանուհու ամենաեռանդուն աջակիցը դարձաւ բարեգործական ընկերութեան գործերում. նա դադար չէր տալիս ոչ ոքին, ամեն անցուդարձողի օձիքից կսլչում, փող էր պոկում բարեգործական նպատակով: Նորան չէր յաջողում միայն իմ կին Գայիանէին գործիք դարձնել իւր նպատակների համար:

— Ի՞նչ յարաբերութեան մէջ էին Գայիանէն և հանդուցեալ Մարիա Նգորովնան միմեանց հետ, — ընդհատեցի ես պատմողի խօսքը:

— Մանուկ հասակից համարեա միեւնոյն բաղում ապրելով՝ նրանք չափազանց մտերիմ էին իրար հետ. բայց լետոյ, երբ Գայիանէն գիմնադիոն մտաւ, Մկրտումեանն էլ տեղափոխուեց իւր փառաչէն տունը և, նամանաւանդ, շնորհիւ Մամուլովայի գործ դրած ջանքերին՝ նրանց մտերմութիւնն սկսեց հետզհետէ սառչել ու թուլանալ. երկուսի էլ դատարարակութեան, հասկացողութիւնների, բնաւորութեան, զգալու և մտածելու եղանակների տարբերութիւնն օրէցօր աւելի և աւելի նկատելի էր դառնում ու հեռացնում էր նրանց միմեանցից: Սակայն չնայելով այդ բոլորին՝ մանկութեան լիշողութիւններն այնպէս սաստիկ սպաւորուել էին մատաղահաս աղջիկներին սրտերում, որ նրանք երբէք չէին դադարում իրար սիրելուց:

Հնա, ի՞նչ տեղ կտրեցի խօսքս... միտս եկաւ: Մամուլովան կամենալով իւր կապն ամրացնել հասարակութեան բարձր դասակարգի հետ՝ նպատակ դրաւ Մանեային մարդու տալ անպատճառ արխատակրատի: Դէպքը ներկայացաւ: Մամուլովան բուն եռանդով աշխատում էր այդ դէպքը բաց չթողնել ձեռքից, մանաւանդ որ նա դրանով շահում էր իւր պաշտած կուռքի—իշխանուհի Ատունու սիրտը. իսկ իշխանուհին ամուսնու մահից լետոյ, որը նոյնպէս սիրահար էր շքեղ կեանքի, փառաւոր նիստ ու կացի՝ իւր միակ զաւակի հետ միասին շատ կրիտիկական վիճակի մէջ էր ընկած: Այն, նրանց փրկութեան միակ խարխիւսը երկուսարդ իշխանի ամուսնութիւնն էր հարուստ ժառանգուհու հետ:

Բաղձաթիւ «հին մեղքեր» ունենալով՝ իշխանը կանխապէս 30,000 ռ. վերցրեց այլի Մկրտումեանից: Ախ, եթէ իմանայիք, Նակով Իվանովին թէ որպիսի ստոր սակարկութիւն էր սկսել իշխանըն այդ գումարն ստանալու համար: Ո՛չ մի գործակատար, երբևէ եմ ձեզ իրան թող չէր տալ այնչափ ստորանալ: Մամուլովային, ի հարկէ, շատ հեշտ յաջողուեց համոզել Մանեային, որ նա իշխանի կինը դառնայ: Այդ բոլորն այնպէս ձեռաց գլուխ բերին, որ ես ու Գայիանէն, հարսնացուի ամենամօտ մարդիկս, մինչև նշանադրութեան օրը ոչինչ չգիտէինք: Բայց այն էլ պէտք է

ասած, որ Վաչիանէն այդ միջոցներին հիւանդութեան պատճառով տնից չէր դուրս գալիս, իսկ ես գործով տեղ էի ուղարկուած: Երևակայել չէք կարող, թէ սրպիսի անախորժութիւն պատճառեց ինձ Մանեայի նշանադրութիւնը, երբ գործից վերադառնալով՝ իմացայ այդ բանը: «Ինչի՞ չէք ուրախանում, որ մարդու եմ դնում,— անսահման հրճուանքով հանդիպեց ինձ Մանեան, երբ նրա նշանադրութիւնից լետոյ առաջին անգամ դնացի նրանց մօտ:— Ա՛յ սպասէք, ես էլ ձեզ չեմ շնորհաւորի, երբ որ կ'նշանուէք»: Կեղուս կապ ընկնելով՝ ես ինչ-որ քրթմնջացի, որպէսզի արդարացնեմ ինձ: Ինձանից լետոյ մի քիչ ժամանակ անցած՝ եկաւ Վաչիանէն: Հարսնացուն փաթաթուելով ընկերուհու վզով՝ համարեա արտասուքն աչքերին սկսեց մեղադրել Վաչիանէին՝ նրա անտարբերութեան համար: «Չէ որ ես երկու անգամ գրել էի քեզ մօտալուս նշանադրութեանս մասին, ինչ կ'լինէր, զոնէ մէկ հատիկ խօսքով պատասխան տալիք ինձ»,— սրտմտած դուչեց Մանեան: Այսօրուան պէս լինում եմ այդ տեսարանը: Վաչիանէն երզուեց, որ նրանից ոչ մի նամակ չէ ստացել: «Ի՞նչպէս թէ չես ստացել,— զարմացած առարկեց Մանեան.— հարցրու «տեսեա Անէտին»): Ես քեզ երկու նամակ եմ գրել, և երկու անգամն էլ նա է նամակներն առել ձեռքիցս, որ քեզ ուղարկէ»:

Մենք, ի հարկէ, զլխի ընկանք, թէ ինչ էր

այդ նամակների թագցնելու նպատակը: Հետեալ օրը ես ու Վաչիանէն երկար խօսում էինք, թէ ինչ կերպ կարելի է խանդարել այդ ամուսնութիւնը: Սակայն տեսնելով, որ Մանեան հրապուրուած է իշխանից, կամ աւելի շուտով նրա տիտղոսից, և ուրախութիւնից իրան, ինչպէս ասում են, եօթներորդ երկնքումն է զգում՝ մենք լուսերս բոլորովին կտրեցինք. միևնոյն ժամանակ Մամուլովան երկիւղ կրելով մեր ազդեցութիւնից՝ համարեա անբաժան միշտ Մանեայի հետ էր լինում—կամ իւր հետ ման էր ամուսնորան զանազան խանութներ, կամ կողքիցը չէր հեռանում մինչև մեր գնալը: Ես ու Վաչիանէն փորձեցինք մօր միջոցով մի բան անել. բայց մալրը, ինչպէս որ նախազգում էի այդ՝ մեր խօսքին ականջ չդրեց. նա ասաց, որ մենք դեռ ջահէլ ու անփորձ լինելով՝ այդպիսի խնդիրներ մեզ անհասկանալի են, որ Մամուլովան սիրելով Մանեային, որպէս հարազատ զաւակի՝ երբէք նրա վատը չի ցանկանալ:

Նշանադրութիւնից մի ամիս անցած՝ կատարեցին հարսանիքը: Օ՛, եթէ միայն լսէիք, Նակով Խվանովիչ, թէ սրպիսի շողքորթիչ խօսքերով և անիրագործելի խոստումներով էր որսում պալծառափաղ փեսացուն իւր զոհին: Ես ու Վաչիանէն շատ պարզ տեսնում էինք այդ կեղծիքը, բայց հարսնացուն, տարաբախտաբաշ, բոլորովին կուրացած էր:

Բարեկամիս պատմութիւնը ընդհատեց տան-  
տիկնոջ երեւոյլը, որ ներս մտաւ՝ երեխան ձեռքին:  
Նրա դէմքի վրայ նախկին անհանգստութեան փո-  
խարէն այժմ փայլում էր մաշկական երջանկու-  
թիւն: Հայրը երեխային առնելով իւր գիրկը՝  
խոզրեց կնոջը, որ շուտով ճաշի պատրաստութիւն  
տեսնէ:

Ճաշի ժամանակ երեքս էլ խմեցինք Մարիա  
Նգորովնայի ողորմաթասը: Բարեկամներս խոտա-  
ցան տալ ինձ մի օրագիր, որ հանդուցեալը գրել  
էր իւր մահից քիչ առաջ: Միայն պալման դրին,  
որ ոչ ոքի ցոյց չտամ: Ճաշը վերջացնելուց լետոյ  
հէնց նոր առօք-փառօք տեղաւորուել էինք բուխա-  
րու առաջ և սուրճ էինք խմում՝ երբ մարդ եկաւ.  
բարեկամիս կանչելու մի աղքատ գիւղական քա-  
հանայի մօտ. գիւղը դռնուում էր քաղաքից տասն-  
ուհինգ վերստ հեռաւորութեան վրայ: Ուշադրու-  
թեամբ լսելով ուղարկուած մարդու քացատրու-  
թիւնները՝ Ակումեանն անպապազ սկսեց պատրաս-  
տութիւններ տեսնել ճանապարհ ընկնելու: Կինը  
վազեց ճանապարհորդական փոքրիկ դեղարկղը բե-  
րելու: Այդ բոպէին ես մի այնպիսի անպապելի  
պահանջ էի դրում ճաշից լետոյ մի լաւ քէֆ անե-  
լու, որ առանց մտածելու՝ առաջարկեցի բարեկա-  
միս գիւղ գնալը լետածգել միւս օրուան կամ մի  
ուրիշ բժշկի առաջարկել քահանայի հիւանդ կնոջ  
մօտ գնալ:

— Ո՛չ ամեն բժիշկ սիրով կգնալ այնտեղ, մա-  
նաւանդ ձրով և այն էլ այնպիսի ցեխ ու անձրերին,  
— պատասխանեց երիտասարդ բժիշկը:— Ինչպէս  
երևում է՝ քահանայի կնոջ դրութիւնը վտանգա-  
ւոր է, որ լետեիցս մարդ են ուղարկել, որովհետև  
հակառակ դէպքում միշտ տնային դեղերով ու մի-  
ջոցներով են ելալ գնում:

— Կարծեմ նրանք վեց երեխայ ունին, և  
մէկը միւսից փոքր, — ցաւակցանքով կցեց կինը  
իւր ամուսնու խօսքերին:— Ինչ կլինի խեղճ երե-  
խաների վիճակը՝ եթէ նրանց մայրը մեռնի: Գէ՛հ,  
չտապիր, Քրիստափոր, ժամանակ է ճանապարհ  
ընկնելու, — վճռական ձայնով արտասանեց կինը:

Ես ամաչեցի իմ ետասիրական զգացմունքնե-  
րիս համար: Ես գիտէի, որ բարեկամս միշտ պա-  
տրաստ է օգնել իւր մերձաւորներին և հպարտա-  
նում էի, որ վաչելում եմ այդպիսի մարդու մտեր-  
մութիւնը:

— Չմոռանաս, Քրիստափոր, խուրջինդ կօ-  
նեակ և կարմիր գլինի եմ դրել հիւանդի համար,  
— նկատեց կինը հրաժեշտ տալիս իւր ամուսնուն:  
Այ, տեսա՞ք, երբ հարկաւոր եկան ձեր ընծաները,  
խաչեղբայր:

Մի քանի բոպէից լետոյ սրտագին սեղմելով  
տանիկներին ձեռքը՝ ես վերադարձալ տուն: Այն-  
պիսի մի տրամադրութեան մէջ էի, որ տեղ գնա-  
լու բնաւ ցանկութիւն չունէի, մի բան, որ շատ

1001  
1909

սակաւ էր պատահում ինձ հետ: Այն բոլորը, ինչ որ լսել էի, այնպիսի խոր տպաւորութիւն էր գործել վրաս՝ որ բուռն ցանկութիւն էի զգում ծանօթանալու հանդուցեալ երիտասարդ կնոջ կեանքի լետազայ մանրամասնութիւններին հետ: Ծառալիս հրամայեցի, որ լսպտերը վառէ և սկսեցի օրագրի ընթերցումը:

1890 թ. 8 դեկտեմբերին:

Վաղը ուղիղ ութ ամիս կլինի, ինչ որ մենք ամուսնացել ենք. բայց արդեօք քանի ուրախ ու երջանիկ օրեր ճաշակեցի եւ այդ ժամանակամիջոցում: Գասարկ ու տաղակալի է չորս կողմս. չըկայ ոչ ոք, որի առաջ բանամ իմ սիրտը. մինչդեռ վշտերս մէկին խոստովանելու պահանջն օրէցօր աւելի ու աւելի սաստկանում է իմ մէջ և պաշարում է ինձ: Այսօր անակնկալ մի մխիթարական միտք ծագեց իմ մէջ, այն է՝ թղթին չանձնել այն բոլորը՝ ինչ որ զգացել եմ և զգում եմ...

Եւ այդպէս ուրեմն, իմ այն բոլոր ակնկալութիւններից, որոնցով մի ժամանակ ձգտում էի դէպի բախտաւոր ապագան՝ այժմ մնացել է միայն այն լուրը, որ դարձեալ կարողանամ նախկին տրամագրութիւնն ու հրապուրանքը ներշնչել ամուսնուս, որին դեռ այնքան սիրում եմ: Այն,

~~միացնել երկու սիրտ, միախառնել երկու զգացմունք, գտնել նրա մէջ ընկեր ու ղեկավար — անկամ երազած ամենամեծ երջանկութիւնը. սակայն այդ բոլորն առայժմ դեռ լոկ ցնորքների պէտք է համարել... հարկւ միայն լրացել է քսան տարիս, և արդէն հիասթափութիւնն — օ, այդ սարսափելի է, այդ անտանելի է...~~

Միշէլն ինձ հետ տեսնում է միայն կարճ միջոցներով և լաճախ ոչ միայն արժան չէ համարում հետս խօսել, այլ նորն-իսկ կարծես թէ չէ էլ նկատում իմ ներկայութիւնը: Նա գտնում է, որ ես դեռ լաւ չեմ պատրաստուած կեանքի համար և ծանօթ չեմ աշխարհային պահանջներին: Գուցէ լետույ, երբ զարգացումով երկուսս էլ կմտնանք միմեանց՝ մեր լարաբերութիւնները կլաւանան: Բայց մի բան անտարակուսելի է ինձ համար. — ամուսինս երբէք չի ների ինձ իմ ստոր ծագումը և չի բարեկամանալ ազգականներս հետ: Այն, այդ բանը ցերեկուտ լուսի պէս պարզ է, և պէտք է հաշտուել այդ մտքի հետ: Բայց միթէ այն շրջանը, որին Միշէլն է պատկանում, անթերի ու անպարտուելի է իւր արած գործերում: Օ՛, քանի-քանի անգամ ես եկել եմ բոլորովին հակառակ համոզման. բայց, է՛հ, առայժմ թողնենք այդ: Ես ուզում եմ քալ առ քալ հետեւ իմ անցեալին, քննել իմ տեսածն ու զգացածը, սկսած այն օրից՝ երբ առաջին անգամ հանդիպեցինք իրար ..

Սակայն անցեալի վիշտութիւնները միանգամից  
 ահնայէս պաշարեցին ինձ, որ չգիտեմ ինչպէս և  
 ինչ տեղից սկսել... Որ այդպէս է՝ շարունակու-  
 թիւնը կ'իջողնեմ վազուան:

9 դեկտեմբերի:

Ս', սրպիսի բախտաւորութիւն և փառուն ա-  
 պագայ էր խոստանում ինձ «տեօտեա Անէտը» երբ  
 աշխատում էր գլուխ բերել իմ մարդու գնալը Մի-  
 շէլին: Ո՛րքան արժանիքներ էր վերագրում նա  
 իշխանուհուն— Միշէլի մօրը և նրանց բոլոր ազգա-  
 նաններին: Առաջին անգամից Միշէլը իւր առերև-  
 ոյթ գոռոզ տեսքով աչնքան էլ դուր չեկաւ ինձ.  
 Բայց լետոյ նրա աչքի ընկնող գեղեցիկ արտաքի-  
 նը, նրա նուրբ, աշխարհային ձևերն ու կրթու-  
 թիւնը, նրա արտասույթը սիրելիութիւնը, որ ցոյց  
 էր տալիս ինձ ու մօրս, աչն աստիճան գրաւեցին  
 սիրտս, որ երեք թէ չօրս անգամ հեռը տեսնուե-  
 լուց լետոյ, համարեա սիրահարուեցի: Իսկ նա,  
 Տէր իմ Աստուած, սրպիսի անդաւաճան սիրոյ եր-  
 դումն էր տալիս ինձ: Ի՞նչպէս աշխատում էր հա-  
 շատացնել, որ ինձանյ լաւ և մաքուր արարած  
 նա երեակայել չէ կարող: Իշխանուհի belle mère-ը  
 իւր սիրապանձ, հրամայողական տեսքով ներշնչեց  
 իմ մէջ մի տեսակ անբացատրելի երկիւղ, որից ևս

դեռ մինչև այժմ էլ չեմ ազատուած. սակայն մի  
 քանի անգամ իմ ներկայութեամբ որդուն կրկնած  
 նրա մի քանի ֆրագները, թէ տեսքս բոլորովին  
 արխտոկրատական է, ձևերս ու շարժուածքս վայե-  
 լուչ են և թէ առհասարակ ես լաւ եմ դատախա-  
 րակուած—այդ կարծիքները կամաց-կամաց փոխե-  
 ցին տրամադրութիւնս դէպի իշխանուհին: Ես սկը-  
 սեցի նորան էլ համակրել: Բայց փեսացուիս ամենից  
 աւելի ուրախացնում էր աչն, որ ևս քաջ կերպով  
 խօսում էի ֆրանսերէն և անգլիերէն: Ես ոչ միայն  
 չափազանց զո՛հ էի փեսացուիս և նրա մօր վրայ  
 գործած տաւաորութիւնիցս, այլ մինչև անգամ հը-  
 պարտանում էի դրանով: Մայրս, որ բացի իմ  
 բախտաւորութեան հոգսից, էլ ուրիշ մտածելու  
 բան չուներ աշխարհիս երեսին՝ ցնծում, ուրա-  
 խանում էր ինձ հետ միասին: Ա՛խ, եթէ իշխա-  
 նուհին չլինէր, ևս այլ վիճակի մէջ կլինէի: Ո՛ր-  
 քան ցաւալի է, որ ամուսինս այդ աստիճան կն-  
 թարկուած է նրա ազգեցութեան: Ասենք, ինչո՞ւ  
 այդպէս լուսահատուել. Միշէլը հօ միշտ մօր աչքով  
 չի նայի ամեն բանի վրայ այդ անկարելի բան է...:

Քալլերի ձաչն է գալիս. չլինի թէ belle-mère-ն  
 է: Պէտք է բաժանուիմ իմ օրագրից, գաղտնիքնե-  
 րիս այդ միակ հաւատարմատարից, և փակեմ նը-  
 բան արկղում:



ծանր ու զժուար էր ինձ համար պարզել, բացա-  
 րել Քրիստափոր Ակումեանին, որ նա չես առնէ  
 շափերս լինելու խոստումը: Տեսնելով իմ վերին  
 աստիճանի անհամ գրութիւնը՝ նա աշխատում էր  
 հանգիստ երևալ և միևնույն ժամանակ ասաց, որ  
 իշխանական տխրոսը քիչ զոհաբերութիւններ չի  
 պահանջի ինձանից, որ պէտք է կանխօրէն պա-  
 տրաստ լինել ամեն տեսակ զժուարութիւնների ու  
 ճնշումների, որոնք դեռ սպասում են ինձ ազա-  
 գայում: Ես միայն տխրեցի և ոչինչ չպատասխա-  
 նեցի: Հետեւեալ օրը, երբ նոյն հարցի վերաբեր-  
 ւածը չալանեցի ես իմ անբաւականութիւնը տի-  
 կին Մամուլովին՝ նա զրկեց ինձ և ասաց. «ա-  
 պրել իմանալը, սիրելիս, մեծ գիտութիւն է: Գիտո-  
 ցած եղիր, որ ինչքան անուանի, բարձրաստիճան  
 է հասարակութիւնը՝ այնքան բարդ են նրա պա-  
 հանջները»: Ես այստեղ միայն առաջին անգամ  
 սկսեցի խորհել այն զժուարութիւնների մասին,  
 որոնք սպասում էին ինձ ապագայում: Սակայն  
 հարսանիքի պատրաստութիւնները և այդ առիթով  
 տեղի ունեցած իրարանցումն այն աստիճան կլա-  
 նել էին իմ ամբողջ ժամանակը և ուշ ու միտքս, որ  
 խորհրդածութիւններս շատ շուտով օդը ցնդեցին:  
 Գլխիս մէջ սարսափելի խառնափնթորութիւն էր  
 տիրում: Միշէլն ու մայրը շտապեցնում էին հար-  
 սանիքս: Ահա վերջապէս պսակեցին մեզ: Անք  
 տեղափոխուեցինք մի շքեղ, փառաւոր բնակարան,

որը գտնուում էր իշխանուհու տան կողքին: Մեր  
 երկրաչին եղեմը, ինչպէս որ նրան անուանում էր  
 տիկին Մամուլովան, կարգ ու սարքի բերելու հա-  
 մար՝ քաղաքի ամենալաւ կահագործներին ու բնա-  
 կարան զարդարողներին ուղքի էին հանել. տիկին  
 Մամուլովան, առանց խնայելու, խեղճերի հողին էր  
 հանում իւր հազար ու մի ցուցմունքներով—«այս  
 աչպէս արէք, այն այնպէս արէք» և այլն: Սե-  
 փական ճաշասեղան չունէինք. ճաշում էինք belle-  
 mere-ի մօտ:

Այն, մոռացաչ ասել, որ հարսանիքից ե-  
 րեք օր չետոյ մօրս սարքած երեկոյթին իշխա-  
 նուհին ներկայ չգտնուեց, պատուակ բերելով հի-  
 ւանդութիւնը, թէև նա իրան շատ լաւ էր զգում:  
 Իսկ ես ու ամուսինս գնացինք շատ ուշ. հրաւիր-  
 ուածների մէջ մենք էինք ամենից վերջը եկողնե-  
 րը: Միշէլը, որ շատ տարօրինակ կերպով էր պա-  
 հում իրան երեկոյթին՝ կէս ժամ անցած առաջար-  
 կից ինձ տուն գնալ, պատճառ բերելով իւր գլխա-  
 ցաւը: Միշէլի առաջարկութիւնը վերին աստիճա-  
 նի անյարմար գրութեան մէջ զրեց ինձ իմ բարի  
 և պարզասիրտ ազգականներիս վերաբերմամբ, ո-  
 ռոնք սիրով ու հպարտութեամբ բոլոր ժամանակ  
 մեզ վրայ էին նայում: Ես փորձեցի խնդրել ամուս-  
 նուս, որ նա մի քիչ էլ սպասէ. մնալ երեկոյթին,  
 բայց նա այնպիսի աչքերով նայեց վերաս, որ էլ  
 չհամարձակեցաւ հակառակել նրա կամքին: Խեղճ

մայրս արտասուքը հաղիւ զսպելով՝ իւր երկու եղբայրների հետ միասին ճանապարհ դրեց մեզ մինչև կառքը: «Ատելով ատում եմ այդ ծայրայեղ գգուանքներն ու փափկութիւնները, որ չատուկ են միայն հասարակ ծագումի մարդկանց, — ասաց ինձ ամուսինս ֆրանսերէն: — Marie, ասա նրանց, խնդրեմ, որ կարդին մարդիկ ուղղակի աննկատելի են հեռանում հիւր եղած տեղից, — ասելացրեց նա՝ կառք նստելով և հաղիւ ուշադրութիւն դարձնելով սրտիս այնքան մօտ մարդկանց բարեմաղթութիւնների և չափազանց սիրալիր վարմունքի վրայ: «Մի մոռանար, Միշէլ, որ սա մի բացառիկ դէպք է: Մայրս ու աղգականներս անչափ կարօտում էին մեզ պսակուած տեսնել, և չէ որ այսօր նրանք մեր հարսանիքն են տօնում», — պատասխանեցի ևս, և երկուսս էլ անբաւական միմեանցից՝ եկանք տուն: Ես զգում էի, որ մենք դիպանք մօրս ու աղգականներին սրտերին, ցոյց տալով նորանց մի տեսակ արհամարհանք, և դա անչափ ցաւալի էր ինձ համար: Միւս օրը Միշէլը դարձեալ ուրախ էր և փաղաքշանքով էր վարուած ինձ հետ, բայց երբ կէսօրից լետուց, երկու ժամին մօտ, մայրս ու Գալիանէն ինձ տեսութիւն եկան: Միշէլը նորից աչքունքը կախեց: Ծուսով լայտնուեցաւ և իշխանուէին: Արդին ակնածութեամբ համբուրեց նրա ձեռքը, ևս էլ հետեեցի ամուսնուս օրինակին, թէև ծնողներս ձեռքը երբէք չէի

համբուրած: Դեռ հարսնացու եղած ժամանակս, նկատած լինելով իշխանուէու գոռոզ վերաբերմունքը դէպի ծնողներս՝ ես սաստիկ հեռաքրքրուեցայ տեսնելու, թէ ինչպէս կվերաբերուի նա այժմ նրանց առաջին այցելութեանը: Ս', ևս երբէք չեմ մոռանալ այդ տեսարանը, իշխանուէու այդ հանդիպումը նրանց հետ: Իմ և ամուսնուս ձակատները համբուրելով՝ իշխանուէին ստուն կերպով բարեց հիւրերիս և հաղիւ մի քանի աննշան խօսքեր փոխանակելով նրանց հետ՝ նա երկար ու բարակ զրուցարանութիւն սկսեց Միշէլի հետ ֆրանսերէն լեզուով, կարծես թէ հիւրերիս ներկայութիւնը չէր էլ նկատում: Երեք ժամին իշխանուէին լիչեցրեց ինձ, որ ժամանակ է գնալ ձաշուտելու: Ես դիտէի, որ նրանք միշտ հինգ ժամին էին ձաշում, բայց հակառակել չհամարձակուեցայ: Ինձ չափազանց զարմացրեց այն, որ իմ belle-mère-ը ոչ միայն ձաշի չհրաւիրեց մօրս և Գալիանէին, այլ մինչև անգամ հարկաւոր չգտաեց ներդրութիւն խնդրել նրանցից՝ որ մենք նրանց թողնում, հեռանում էինք: «Marie, լաւ կանէիր, խորհուրդ տալիր բարեկամուհուդ, որ նա իսկի տանից դուրս չգաւ. հաւատան, անվախուչ բան է այդ պիսի անշնորհ կերպարանքով և արտաքինով մարդկանց աչքին երևալ» — կատակի եղանակով դարձաւ ինձ ամուսինս ձաշի ժամանակ:

«Մեղք է, ի հարկէ, մարդուն դատապարտել

իւր արտաքինի համար, որ Աստուց է մեզ տուած», — առարկեց իշխանուհին, աչքերը երկիւղածութեամբ վեր բարձրացնելով. — «բայց ինչպէս ինքք կինը չպէտք է հասկանալ, որ ալգպիսի անձոնի հազուատով որեէ կարգին առն մտնելն ուղղակի անքաղաքավարութիւն է»:

«Մօրեղբօրաղջիկս սկզբունքով չէ հետեում մօղային և առհասարակ պարզութիւն է պաշտպանում ամեն բանում», — սկսեցի բացատրել ես: «Անուրեմն իզուր տեղը չէր, որ նա նիհիլիստիկ երեւաց իմ աչքում», — ատամների միջով արտասանեց իմ belle-mère-ը և այնպէս նայեց երեսիս, որ մրանդամայն կաշկանդեց իրան հակաձառելու ցանկութիւնս: Միւս օրը ճաշին շատ հիւրեր կային հրաւիրուած. առհասարակ մեզ մօտ միշտ մի քանի կողմնակի մարդիկ էին ճաշում: Սկզբներում ինձ վիրաւորական էր թւում, որ մայրս չէր լինում երբէք հրաւիրուածների թւում. բայց լսող ես հաշտուեցի այդ բանի հետ՝ որպէս մեր կեանքի մի անխուսափելի պայմանի հետ: Մեր հարսանիքից մի երեք շաբաթ անցած՝ մի օր մայրս մեզ բոլորիս ճաշի հրաւիրեց իւր մօտ: «Վաղուց է, զաւակըս, որ ես ու դու մի սեղան չենք նստած», — տխրութեամբ առայ նա ինձ: Այդ արդէն երրորդ անգամն էր, որ մայրս մեզ ճաշի էր հրաւիրում, սակայն Միշէլը միշտ զանազան պատճառներ բերելով՝ հրաժարում էր գնալ: Վերջապէս այս ան-

գամ նա համաձայնեց գնալու, միայն թէ պայման դրաւ, որ բացի մեղանից ոչ ոք չլինի այնտեղ: Քէպէտ մօրս համար շատ ծանր էր ընդունել այդ պայմանը, որովհետեւ նա համարեա թէ հրաւիրել էր իւր մօտիկ ազգականներից շատերին, բայց զիջանելով իմ թախանձանքներին՝ պէտք է ընդունէր այդ պայմանը: Խեղճ կինը զրկուած էր այդ ընտանեկան հանդէսը իւր հասկացողութեամբ, ըստ հարկին տօնիլու անմեղ հաճոյքից: Իշխանուհին չարգելի պատրուակ գտնելով՝ հրաժարուեց մօրս մօտ գնալու: Ճաշից լսող մի քիչ ժամանակ անցած՝ լանկարծ զանդի ձայն լսուեց: Ես վախեցայ, մտածելով, որ մի գուցէ եկողը իմ ազգականներից ըստ մէկն է: Ես երկիւղ էի կրում, որ ամուսինս այդ բանից լսող այլևս չի համաձայնի երբեք մօրս մօտ ճաշելու: Բարեբախտաբար, դա Քրիստափոր Ակումեանն էր: Ինձ թւում էր, թէ մօրս տունը ելումուտ ունեցողներից նա ամենից աւելի է համապատասխանում ամուսնուս ճաշակին և այդ պատճառով սիրտս հանդարտուեց: Միշէլն արհամարհանքով և հեղնօրէն վերաբերուեց երկուսսարդ բժշկի լայտնած մի քանի կարծիքներին, միայն չեմ չիշում, իսկայէս որ կարծիքներին: Ակումեանն սկզբում կարծես քաշուած էր համարձակ խօսելուց. բայց լսող տեսնելով, որ ես չեմ հաւանում ամուսնուս հեղնական եղանակը՝ կամայկամաց սկսեց սիրտ առնել և վերջիվերջոյ պա-

տասխանեց նորան մի քանի կծու ֆրազներով, որոնք բաւականին անել զրութեան մէջ զրին Միշէլին: «Այդ ձեր Ակումեանը շատ անտաշ մարդ է, — դարձաւ նա ինձ ճանապարհին, երբ տուն էինք դառնում: Յետոյ Միշէլն սկսեց լանդլիմանել մեզ՝ մեր փոխադարձ մտերմական չարաբերութիւնների համար և խնդրեց, որ ես ինձ հեռու պահեմ նրանից: Ես սկսեցի արդարացնել ինձ, ասելով որ մենք վաղուցուայ մտերիմ բարեկամներ ենք. բայց ամուսինս նկատելի սրտամտութեամբ պատասխանեց. «Ես չգիտեմ և չեմ էլ ուզում գիտենալ, թէ քնն էք եղել դուք երկուսդ առաջ. բայց այժմ դու մտել ես մի ուրիշ ընտանիք, որի հետ Ակումեանը ոչ մի առընչութիւն չպէտք է ունենայ: Յուսով եմ, Marie, դէպք եղած ժամանակը դու կլիշեցնես նորան օրով յետոյ ինքն իր շնորհակցութեամբ: Ես լսում էի նորան շունչս կտրուած: Իրաւ է, այդ կարճ ժամանակամիջոցում թէև պարզուել էր ինձ համար այն հանգամանքը, որ ամուսինս գարշում էր իմ ազգականներից, սակայն այդպիսի մի պահանջ ես նրանից չէի սպասում: Փոքր ինչ ազատուելով անխորժ զգացմունքներիցս՝ ես աշխատում էի ապացուցանել ամուսնուս, որ նրա դատողութիւնները Քրիստափորի վերաբերմամբ անարդարացի են. բայց նա չէր համաձայնում, նա անդրդուելի էր... Ցաւալի է մտաբերելը...»

24 դեկտեմբերի:  
 Մօրս մօտ եղած ինձ համար այնքան լիշատակելի ճաշկերոյթից մի քանի օր լետոյ՝ իշխանուհին լիշեցրեց մեզ մեր անելիք այցելութիւնները, որոնց ցուցակն ինքն էր կազմել: Երբ օրում հազիւ կարողացանք այցելել ամուսնուս բոլոր ազգականներին ու ծանօթներին. այժմ հերթը իմ ազգականներին էր գալիս: Երբ խօսք բացի այդ մասին, մալր ու որդի լօնքերը կիտելով՝ լայտնեցին իրանց դժգոհութիւնը: Հետեւաւ օրը նորից շօշափեցի այդ նիւթը: Ամուսինս նկատելով, որ ես չափազանց նեղացած ու անբաւական եմ նրա մերժումով՝ զիջեց ինձ և խոստացաւ զիմել «տեսեա Անէտի» միջնորդութեան: Իշխանուհին տիկին Մամուլովայի հետ երկար խորհրդակցելուց լետոյ, նրանք ընտրեցին միայն վեց ընտանիք, որոնք աւելի ունեւոր էին և հետեւապէս, ի հարկէ, աւելի պատուարժան՝ իշխանուհու աչքում: «Իմ ահագին ազգականութիւնից միայն այդքան ընտանիք», — բացազանչեցի ես, նայելով ցուցակին, որ բերել էր տիկին Մամուլովան ինձ ցոյց տալու: «Ի՞նչ արած, սիրելիս, երբ իշխանն ու իշխանուհին այդպէս են կամենում: Նրանց մեղադրել չէ կարելի. նրանք իրանք էլ քիչ ազգականներ չունին: Գու այժմ նոր շրջան ես մտել, և խոհեմութիւնը պահանջում է, որ չարմարուխ այդ շրջա-

նին)։ «Բայց միթէ խոհեմութիւն է վիրաւորել բոլորովին անմեղ մարդկանց։ Մայրս սաստիկ ուղում է, որ մենք այցելենք բոլորին։ Համողեցէք նրանց, թանկազին «տեօտեա Անէտ», որ գոնէ մէկ անդամ զիջումն անեն ինձ, իսկ չեսող, եթէ ամուսինս ուզում է՝ թող էլ երբէք նրանց աչքին չերևար» — աղերսում էի ես։

—Մի լար, սիրելիս,—կարեկցանքով ասաց տիկին Մամուլովան և խոստացաւ աշխատել ուղածս գլուխ բերելու։

Եւ ցուցակում աւելացան բաւականին ազգանուններ, որոնք ցանկալի էին ինձ համար։ Այդ էլ բաւարար չթուաց ինձ. բայց պէտք էր հնազանդել։ Երբէք չեմ մոռանալ, թէ սրպիսի թըթուած երեսով էր ամուսինս այցելութիւններ անում իմ ազգականներին։

«Միշէլ, այստեղ մօտերքում ապրում է կաթուածա հար հղած իմ մի ազգականուհին, որ շատ է ուղում, քանի չէ մնուել, գոնէ մէկ անգամ տեսնել քեզ» — աղերսանքով դիմեցի ես ամուսնուս։ «Ես հօ չեմ կարող ամբողջ հայոց բաղարը չափչփել։ Ահա ինչտեղ են նստած քո այդ բոլոր աղակականները», — ասաց նա, ձեռքը տանելով ծոծրակին։ «Միշէլ, մեծահոգի եղբւր, մի մոռանար, որ թշուառ կիներ գերիզմանի ափին է կանգնած» — անչափ վիրաւորուած նկատեցի ես։

Ամուսինս, կարծես, փոքր ինչ ամաչեց և

լուռումունջ կատարեց իմ ցանկութիւնը։ Օգտուելով նրա այդ տրամադրութիւնից՝ ես նրան ստիպեցի հետս էլի ուրիշ երեք տուն գնալ։ Այնպէս արդէն սովորել էի յարմարուել ամուսնուս ճաշակին, որ այդ զիջողութիւնն իմ աչքում մի անագին զոհաբերութիւն երևաց նրա կողմից։ Ճաշից չետոյ Միշէլը, առանց քաշուելու ինձանից, իմ ներկայութեամբ, ծաղրաբանելով պատմում էր մօրը քաղաքի Մուրտառխանի փողոցներում իւր արած ճանապարհորդութեան մասին. այդպէս էր անուանում նա քաղաքի հին մասը, ուր բնակւում էին համարեա իմ բոլոր ազգականները։ Իշխանուհին ծիծաղում էր և չափից դուրս ցինիկական դարձուածներով սրախօսում։ «Միթէ այս է վախելչախօսութիւնն ու բարեկրթութիւնը», — զարմանում էի ես։ Առաջին անգամ սրտիս մէջ ծագեց մի տեսակ ատելութեան զգացմունք դէպի ամուսինս։ Նոյն տեսակ վերաբերմունք դէպի կեանքն ու մարդիկը նկատում էի ես մեր տունը յաճախողների մեծամասնութեան մէջ և այդ պատճառով օրըստօրէ աւելի ու աւելի հիասթափւում էի այդ բարձր հասարակութեան վերաբերմամբ, որի մասին ես բոլորովին սխալ զաղափար էի կազմած։

Ամուսինս երբեմն փաղաքշելով ինձ այն աստիճան հրապուրիչ էր լինում, որ շատ բան ներում էի նրան։ Այդպէս անցաւ երեք ամիս։ Տեսնելով, որ Միշէլը միշտ ուրախ-ուրախ, սիրալիր,

մի խօսքով՝ լաւ տրամադրուած է լինում միմիայն իւր շրջանում՝ ես, սիրելով նրան՝ ինձ հետու էի պահում այն բոլորից, ինչ որ կարող էր վրդովել նրան. այդ պատճառով հետու էի և՛ իմ ազգականներից, որոնց լոկ տեսքն անգամ չուզում էր Միշէլին: Ինձ համար ծանր էր այդպիսի մի քալ անելը, բայց այն չօտը, թէ Միշէլը սիրելով ինձ, վերջապէս մի օր կզիջանի իմ ցանկութեան — այդ չօտը քաջալերում էր ինձ: Նրբեմն-երբեմն լսելով միշտ համբերող և հեղահամբուր մօրս գանգատները, որ մենք խորշում ենք իրանցից՝ հս պաշտպանում էի ամուսնուս՝ բոլոր մեղքը նրա մօր վրայ ձգելով և մօր ազգեցութեանը վերագրելով Միշէլի բոլոր պախարակելի արարմունքները: Այն համոզմունքը, թէ ժամանակով ամեն ինչ կփոխուի զէպի լաւը՝ մխիթարում էր ինձ: «Ա՛խ, զաւակս, ես ամեն բանի կզիմանամ, միայն թէ դու բախտաւոր լինիս», — հառաչում էր մայրիկս: Խեղճ կիները սկսեց աւելի ուշ-ուշ չաճախել մեր տունը: «Արդեօք չես ցանկանում, ma mignone, գնալ մօրդ մօտ. այն շաբաթ մենք նրա հետ չենք տեսնուած», — մի անգամ երեկոյեան առաջարկեց ինձ ամուսինս: Ես անչափ սրախացած՝ համբուրեցի՝ նրան և պատրաստուեցի գնալու: Ճանապարհին բոլոր ժամանակ նա չափազանց քաղցր ու սիրալիր էր վարում ինձ հետ: Մեղանից կէս ժամ լետոյ եկաւ իմ սկեսուրը: Նա չափից դուրս մեղմ և սիրալիր

էր մօրս հետ, և մի բան, որ ինձ աճաղին բաւականութիւն պատճառեց՝ այդ այն էր, որ իշխանուհին խնդրեց մօրս հետեակ օրը մեզ հետ միասին ճաշել: Յետոյ, հէնց այդտեղ ևեթ, ստիպեց ինձ հրաւիրատուներ գրել Գալիանէին և բժիշկ Ակումեանին: Բացի նրանցից ոչ ոքին չհրաւիրեցինք: Միշէլն ու մայրը չափազանց ուշադիր էին զէպի իմ հիւրերը: Ես անպատմելի բախտաւոր էի զգում ինձ, կարծելով որ այդ բանը կշարունակուի ընդ միշտ: Եւ իրաւ, մէկ-երկու շաբաթից լետոյ թէ իմ ամուսինը և թէ նրա մայրը շատ սիրով և չորգանքով էին վերաբերում զէպի իմ մերձաւորները: Այդ բանից լետոյ Միշէլն անհամեմատ աւելի սիրելի եղաւ ինձ, և ես պատրաստ էի նրա համար ամեն տեսակ զոհաբերութեան: Ես ի բոլոր սրտէ շնորհակալ էի տիկին Մամուլովայից, որ նա ինձ սովորեցրեց համբերութեամբ սպասել աւելի լուսաւոր օրերի:

«Ալժմ ես միանգամայն բախտաւոր եմ, էլ ոչինչ չեմ ուզում», — փաթաթուելով տիկին Մամուլովայի վրով՝ բացազանչեցի ես, հէնց որ պատահեցի նորան: Նա պատասխանեց որ և թէ իրան լսեմ՝ շահուող միշտ ես կլինիմ և որ առհասարակ ոչ ոք ինձ այնքան բարիք չէ ցանկանում, որքան ինքը:

Այդ բոլորից լետոյ մի քանի օր անցած՝ ես նկատեցի, որ ամուսինս սաստիկ մտահոգութեան

մէջ է, և այդ բանն, ի հարկէ, խիստ անհանգստացրեց ինձ: Նա երկար ժամանակ ոչինչ չէր ուզում ասել ինձ, թէ ինչ էր իւր մտատանջութեան պատճառը. բայց իմ երկարատե թախանձանքներից չետոյ, համբուրելով ու գրկելով ինձ՝ վերջապէս խոստովանեց, որ նիւթական նեղ գրութեան մէջ է, ներկայումս փողի կարիք է զգում, միևնույն ժամանակ աւելացնելով, որ մօտիկ ապագայում սպասում է մեծամեծ եկամուտների իւր տոհմական կալուածներից: Բուռն ցանկութիւն զգալով ամուսնու մխրթարել՝ ես լսել չէի ուզում նրա նիւթական գործերի պատմութիւնը, և խփոյն ձեռքովս փակելով նրա բերանը՝ ասացի. «Այ՛ բա՛ւր ունեցածը քեզ է պատկանում, Միշէր»: Եւտով իշխանուհին կանչել առաւ նօտարին, և ես 200,000 ռուբլի փողս փոխադրեցի իմ ամուսնու անունով: Նրանից չետոյ մօտ մի ամիս Միշէրն ու մալրը դեռ քաղցր էին վարում իմ ազգականների հետ, բայց չետոյ կամաց-կամաց սկսեցին առաջուպ սառնութեամբ վերաբերուել: Նրանց չարաբերութիւնների այդ փոփոխութիւնն ինձ տարակուսանքի մէջ ձգեց: Սկան բոպէներ՝ երբ ես կասկածանք զգացի դէպի ամուսինս... Այդ կասկածանքներն այնքան տանջանք պատճառեցին ինձ, որ ամեն կերպ աշխատում էի նրանց հեռացնել ինձանից և ինքս ինձ համոզում էի, որ այդ բանը միայն հանգամանքների պատահական բերմունք է և ուրիշ ո-

չինչ: Ասենք, իշխանուհին դեռ կարող էր ընդունակ լինել՝ իւր նպատակներին հասնելու համար այդպիսի ստոր միջոցների դիմելու, բայց Միշէլը... երբէք: Օ՛, ի հարկէ, երբէք. այդպիսի մտքերը ստորացուցիչ են նրա համար. նա անչտփ բարձր է կանգնած այդ տեսակ մտքերից: Սակայն ժամանակ է ընդհատել, չոգնեցալ գրելուց. կէս գիշերից արդէն անց է:

10 նոյեմբերի 1891 թ.

Ահա մօտ երկու շաբաթ է արդէն, որ ես մալր եմ: «Մայր»... Օ՛, որքան թովիչ և դիւթական է այդ խօսքը: Ո՛րքան չափազանցութիւն, որքան ուրախութիւն կայ այդ խօսքի մէջ կնոջ համար. բայց ինձ համար, աւանդ... Այն-ինչ որպիսի անհամբերութեամբ սպասում էի մալր դառնալու երջանկութեան, և ի՞նչ եղաւ... Օ՛, Ատոռած իմ, սուր ինձ համբերութիւն: Վաղուց է, որ օրագիրը ձեռքս չեմ առել. ես այնքան գոհ էի և այնքան բախտաւոր, որ օրագիրը մտքովս էլ չէր անցնում: Ներքի ինձ, իմ լսիկ, անբարբառ ընկեր. ա՛ժմ դու անբաժան կլինիս ինձանից: Չէ՛ որ մարդս միայն անբախտութեան ժամանակ է անդապելի պահանջ զգում սիրտը մէկին բանալու, հոգեկան զեղումներին ազատութիւն տալու: Այ՛ն. դեկտեմ-

բերի քսանուչորսից ոչ մի խօսք չէ գրուած իմ տետրակում: Այն-ինչ այդ օրից սկսած սրբան փոփոխութիւններ տեղի ունեցան իմ կեանքում, սրպիսի տխուր գոչներով ներկուեցին իմ օրերը... Բայց ինչ եմ առաջ ընկնում. կսկսեմ կարգով:

Օրագրիս ընդհատումից մի կարճ միջոց անցած՝ ամուսինս և իշխանուհին սկսեցին անհանգստութեան նշաններ ցոյց տալ իմ առողջութեան վերաբերմամբ. այդ բանը ես առաջ էլ էի նկատում, բայց այդ օրից նրանք լուրջ ուշադրութիւն դարձրին ինձ վրայ: Ախտեցան անվերջ խորհրդողակցութիւններ մանկաբարձներէ և զխտուն մանկաբարձուհիներէ հետ, որոնք, չնայելով որ ես հաւատացնում էի, թէ բուրրովին առողջ եմ՝ անընդհատ ենթարկում էին ինձ իրանց անտանելի հետազօտութիւններին: Վերջապէս մի օր աւետեցին, որ ես արդէն «չալտնի» և ամուսնուս ու նրա մօր համար լոյժ ցանկալի վիճակի մէջ եմ: Աս այժմ միայն հասկացալ նրանց անասման ուրախութեան ամբողջ իմաստը: Այժմ ես զաւակ չունենալի՝ իմ անշարժ կայքը, որ մօտ երեք հարիւր հազար արժէք՝ կտակի զօրութեամբ պետք է անցնէր բարեգործական ընկերութիւններին: Այդ բանը ես առաջ էլ գիտէի, բայց, ճշմարիտն ասած՝ երբէք մտածմունքի նիւթ չէի յինձ այդ հարցը: Ինն ամսուայ ընթացքում ինձ խնամում էին ամենայն զգուշութեամբ և կատարում իմ ամեն մի

գիտքրիկ հաճուքը: Ամուսինս քիչ էր մնում ձեռքերի վրայ ման ածէր ինձ, երկիւղ կրելով, որ ինձ որեէ ֆիզիքական կամ բարոյական ցաւ չբախտատուին: Որպէսզի բուրրովին ապահով լինիմ զանազան պատահականութիւններից և, որ ամենադժուարն է, սանդուխներով բարձր ու ցածր անելու նեղութիւնից՝ իշխանուհին մեզ տեղափոխեց իւր մօտ՝ պարպելով իւր տան ներքին լարկը: Մայրս ինձ հետ միասին ուրախանում էր, տեսնելով կեանքիս մէջ տեղի ունեցած փոփոխութիւնը: «Նորհակալ եմ քեզանից, Ա՛ստուած, աղջկանս պարգեւածդ բախտաւորութեան համար»,— անդադար կրկնում էր նա՝ հպեացքն ու ձեռքերն ամբարձած զէպի երկինք: «Աս մինչև այժմ չգիտէի, որ իշխանուհին այդպիսի մի հրաշալի կին է եղած. նա իսկ մալրական խնամք է տանում իմ աղջկայ վրայ»,— ամենքին ասում էր մայրս՝ ստէպստէպ տեսութեան դալով ինձ: Գայիանէն թերահաւատութեամբ էր վերաբերում մօրս խօսքերին, և այդ բանը շատ էր վալրացնում ինձ: Աս այժմ արդարացնում եմ նրան, համոզուելով, որ նա գլխի էր ընկել, թէ ինչ նպատակ ունէր շրջապատողներին այդ սրտեռանդ խնամատարութիւնը: Վերջապէս, ես ունեցալ ժառանգ, որին, ի վշատակ ամուսնուս հանգուցեալ հօրը՝ անուանեցին Ալէքսանդր: Մայրս չափազանց զգածուած լինելով այն հոգածութիւնից, որով շրջապատել էին ինձ՝

կամեցաւ մի բանով նշանաւոր անել իւր թողան  
աշխարհ գալու տօնախմբութիւնը: Տիկին Մամու-  
լովայի հետ ունեցած կարծատե խորհրդակցութիւ-  
նից լետոյ, նա նուիրեց ամուսնուս հինգ հազար  
ռուբլի: Այդ պարգեւը շատ ժամանակին էր, որով-  
հետեւ նրա պարտքերը ծածկիլու համար փողերիւ  
կէսից աւելին ձեռքից գնացել էր: Մալրս երբ  
իմացաւ, որ ես փողերս փոխադրել եմ ամուսնուս  
անունով՝ սաստիկ նեղացաւ և սկսեց լանդիմանել  
ինձ. սակայն ես զայրացած՝ խնդրեցի, որ նա  
ալլևս խօսք չբանալ այդ խնդրի մասին, և մալրս  
աջնուհետեւ էլ ոչինչ չէր ասում: Իշխանուհին երե-  
խային տարաւ իւր մօտ վերև և մօտից չէր հե-  
ռացնում: Ես համոզուած էի, որ առողջանալուս  
պէս՝ նրան կփոխադրեն ներքև, իմ սենեակը: Ես  
սրտանց ուզում էի ինքս կաթ տալ երեխային,  
բայց ինձ թոյլ չտուին—առաջինը՝ ի նկատի ու-  
նենալով իմ թոյլ կազմուածքը, իսկ երկրորդը՝  
ամուսնուս հասարակական գիրքը: Սկսուերս շատ  
մեծ նշանակութիւն էր տալիս այդ գիրքին, մինչ-  
դեռ իւր որդին ոչ ալլ ինչ էր՝ եթէ ոչ առանձին  
լանձնարարութիւնների աստիճանաւոր վեցերորդ  
կարգի գլխաւոր կառավարութեան մէջ և այն  
էլ առանց ուժիկի: Այդ պաշտօնի հետ, որքան  
ինձ թւում է՝ հապուած չեն մի այնպիսի առան-  
ձին պարտաւորեցուցիչ գործեր, և առհասարակ լո՛ւ

ամուսինը ոչ մի լուրջ զբաղմունք չունի, եթէ  
լուրջ չհամարել այն, որ նա բարեգործական հի-  
մարկութիւններից մէկում գանձապահի պաշտօն  
է կատարում: Նա ոչինչ չէ կարդում, բացի տեղա-  
կան լրագիրներից, և իսկապէս երբ կարդայ: Վեր-  
ջին ժամանակներս Միշէլն ամենաչնօր, բացի մեր  
jours fixes-ի օրերից, այնպէս ուշ է տուն գալիս,  
որ միայն կէսօրներին է քնից զարթնում: Անկող-  
նից վեր կենալով՝ նա մի ժամի շափ զբաղում է  
իւր հալուստը կարգ ու սարգի բերելով և ասպ  
դուրս է գալիս տնից: Երբեմն նա վերադառնում  
է տուն հագուստը փոխելու. նա համապատասխան  
չօր է հագնում այն անձի աստիճանին, որին ու-  
զում է այցելութիւն անել: Առաջ ես կարծում էի,  
թէ ամուսինս գործով է դէս ու դէն գնում, ինչ-  
պէս որ նա սովորաբար հաւատացնում էր ինձ,  
երբ հարցնում էի, թէ ինչ տեղ է անց կացնում նա  
իւր օրը մինչև ճաշի ժամը. բայց լետոյ մօր հետ  
ուրեցած նրա խօսակցութիւններից և իշխանուհու  
հարց ու փորձերից իմացալ, որ ամուսնուս այցե-  
լութիւնների նպատակը եղել է մէկի տօնը կամ  
անուանակոչութեան օրը շնորհաւորել, միւսի շքա-  
նշան ստանալը, երրորդին բարի ճանապարհ մաղ-  
թելը և այլն. իսկ ամենից աւելի նա լաճախելիս է  
եղել կոմսուհուն՝ նրանից բարեգործական զանա-  
զան լանձնարարութիւններ ստանալու և միևնույն  
ժամանակ իւր մօր կողմից հարցնելու նրա թան-

կազին առողջութիւնը: Մի խօսքով՝ ես համոզուեցի, որ ամուսնուս միակ և զլիսաւոր հոգսն էր խստիւ հետեւել աշխարհային քաղաքավարական կանոններին և կապեր պահպանել բարձր հասարակութեան մէջ:

Է՛հ, բաւական է... Ինչի մասին էր խօսքս... հա լիշեցի, երեխայիս մասին... Ծծմայրը, որին օր առաջ վարձել էր իշխանուհին՝ առողջ և բանիմաց կին էր, և նա անկեղծ կերպով կապուեց ինձ հետ: Փառք Աստուծոյ, որ Ալէքսանդրիկս առողջ երեխայ էր, ապա թէ ոչ... ծծմայրն, իբրև դադտնիք, լալտնեց ինձ, որ իշխանուհին ծածուկ տնօրինել էր, որ եթէ բան է... օ, Աստուած իմ... երեսաս կարելի լինի փոխարինել ուրիշ երեխայով...

Ո՛րքան նախազգուշութիւններ էր ձեռք առել իշխանուհին, որպէսզի կարողանալ ապահովել իւր որդու ժառանգի գոյութիւնը: Խնդրում, ազերսում էի, որ երեսաս տան ինձ, բայց սկեսուրս շարունակ մերժում էր, ասելով որ ես դեռ անփորձ եմ և չեմ կարող խնամել նրան՝ ինչպէս հարկն է: Գիմելով ամուսնուս միջնորդութեան՝ սկսեցի երգուել, ամեն կերպ համոզել, որ զգուշ, աչքաբաց կլինիմ, և նա վերջապէս զիջեց ազերստանքիս: Այստեղ ես առաջին անգամ տեսալ ու լսեցի ամուսնուս և սկեսուրիս մէջ տեղի ունեցած տարածայնութիւնը, և այդ բանը չափազանց ուրախացրեց ինձ: Բայց լանկարծ մի անբախտութիւն

պատահեց ինձ—երեխան ներքև բերելուց լետոյ, հէնց երրորդ գիշերը, նա վաչր ընկաւ ծծմօր ձեռից: Ինձ թուում էր, թէ երկինքը փուլ եկաւ զըլխիս, թէև ծծմայրը հաւատացնում էր, որ երեխային ոչինչ չպատահեց և թէ երեխաներն առանց վաչր ընկնելու չեն մեծանում: Ամուսինս վախեցած այդ պատահարից՝ խիղոյն վազեց իւր մօր լետեից, և նրանք երկուսն էլ անողորմ կերպով լարձակուեցին ինձ վրայ, ասելով, որ ես երեխայիս էլ երբէք չեմ տեսնի ինձ մօտ: Ես բոլորովին ընկճուած ու լաղթուած էի: Ծծմայրը խղճալով ինձ՝ բացատրեց սկեսուրիս, որ ես այդտեղ ոչ մի մեղք չունիմ, որ նոյնը ծծմօր հետ պատահում էր և վերեր, միայն թէ իշխանուհին խոր քնի մէջ ընկղմուած լինելով՝ ոչինչ չէր լսում: Սկեսուրս այդ լսելով՝ ծծմօրն անուանեց ստախօս և միևնոյն ժամանակ բերան բանալով՝ այնպիսի փողոցային հայտնանք թափեց նրա գլխին, որ ես ականջնեղիս չէի հաւատում: «Միթէ այս է այն արիստոկրատութիւնը, որով նա այնպէս հպարտանում է: Իրան ասած՝ ես մինչև այժմ իմ ամբողջ կեանքում այնպիսի խօսքեր չէի լսած, թէև մեծացել էի հասարակ ընտանիքում»: Ինձ համար անչափ ցաւալի էր բաժանուել երեխայիցս. բայց ինքս ինձ մեղաւոր զգալով՝ էլ չէի համարձակուում ձայնն արտաբերել երեխային ինձ մօտ թողնելու մա-

սին: Այդ բոլոր վիշտութիւններն այն աստիճան վրդովում են ինձ, որ չեմ կարողանում շարունակել. մտքերիս կապը կտրուեց....

16 դեկտեմբերի.

Մէկ ամսից աւելի է, օրագրիս երեսը չեմ տեսել: Երեխան երկրորդ անգամ ձեռքիցս առնելուց չեսող, այնպիսի մի տխրութիւն պատեց սիրտըս, որ մինչև անգամ անկողին ընկալ, և ա՛նա միայն չորրորդ օրն է, որ ոտքի եմ կանգնել: Բըժիշկը իմ հիւանդութիւնը վերագրեց նեարդալին խանգարման, և խորհուրդ տուաւ միանգամայն հանգիստ կեանք վարել. բայց յորանո՞ղ զանեմ այդ հանգիստ կեանքը: Երեխային խլել մօրից... Ս', ու՛մ կեանքը չի փշրի այդ անդթութիւնը: Ես մի քանի անգամ փորձ փորձեցի տիրանալ որդուս, բայց ինձ կտրական մերժումով չեա կանգնեցրին այդ մտքից: Ամուսինս սկսեց նկատելի արճամարճանքով վերաբերուել դէպի ինձ, անուանելով ինձ մերթ պաֆրան, մերթ քսնձոտո ձի: «Դու պէտքական ես միայն անկար զինուորների վաշտում ճառալելու», կրկնում էր նա շարունակ, և սա դարձաւ նրա ամենասիրած ասացուածքը: Չնայելով այդ բոլորին՝ լ'նում են բոպէներ, երբ ինձ տի-

ջում է մի տեսակ զգացմանը... պահանջ՝ զգուշուլ, փալիալելու նրան... մի խօսքով, ճիշտն աւած, ես զգում եմ սիրոյ նման մի բան դէպի ամուսինս: Այդ ժամանակ սկսում եմ զարդարուել, երեսիս սաղական շոր հագնել, զեղեցիկ երեալ, կամենալով դուր գալ նորան, բայց նա այդ չէ նըկատում: Ամուսինս շատ սակաւ է տանը նստում, մանուաւնո՞ղ երեկոյեանները, և միայն լուսարացին է տուն վերադառնում: Շատ ու շատ գիշերներ եմ ես արտասուք թափելով և խանդոտութիւնից տանջուելով անց կացրել: Երեկ պատահմամբ միայն իմանալով, որ նա սաստիկ թուղթ է խաղում և այն էլ վտանգաւոր խաղեր՝ ես հանդարտուեցի: Արքան էլ անսխորժելի լինէր այդ լուրն ինձ համար, այնու ամենայնիւ նա ինձ ազատում էր այն սրտատանջ ենթադրութիւններից ու կասկածներից, թէ մի գուցէ ամուսինս ինձ դուաճանում է: Իմ մէջ դեռ չէր կտրած այն լուսը, որ վերստին առողջանալով և աւելի բարեհամբօջը տեսք ստանալով՝ ես նորից ամուսնուս կտրամադրեմ դէպի ինձ. իսկ առ այժմ կաշխատեմ մխիթարութիւն գըտնել միմիայն մանկանս օրօրոցի մօտ: Ս', Աստուած իմ, եթէ երեխայիս կրկին չեա չրերեմ ինձ մօտ՝ ես կխեղադարուեմ: Այսօր փորձեցի վեր գնալ մանկկիլիս մօտ, բայց հէնց երկրորդ աստիճանից՝ ոտքերս դաղարեցին ինձ հնազանդելու: Աստուծով,

վաղն աւելի կազդուրուած կլինին: Ել ուժ չունիմ շարունակելու. թուութիւնից ձեռքերս զողողուած են...

26 դեկտեմբերի.

Ո՛րքան բախտաւոր էի ես մի քանի օր իրար լիտեից. ամբողջ ժամեր երեխայիս հետ էի անց կացնում. սրքան երջանկութիւն էր զգում հոգիս՝ երբ նայում էի նրա ժպտուն երեսին: Այդ հրաշալի ժպտոր, կարծես, նոր ուժ ու եռանդ էր ներշնչում իմ մէջ, բայց լանկարծ մի նոր աղէտ, քարի պէս, ընկաւ գլխիս: Երեխային համբուրելիս՝ ես լանկարծ մտք արի, սրքան լաւ կլինէր՝ եթէ Միշէլն էլ ինձ հետ միասին կանգնած լինէր մեր երեխայի օրօրոցի մօտ. ինձ պատեց մի անասելի թախիծ, որ Միշէլը սառն էր դէպի ինձ, և արտասուքն ակամայից սկսեց հոսել ակտերիս վրայից: Հէնց այդ բոպէին անակնկալ ներս մտաւ իշխանուհին և լացս տեսնելով՝ խստիւ պատուիրեց ինձ, որ այլեւ մանկանոց չմտնեմ այդպիսի թթուած երեսով: «Աչդպէս անելով՝ դու երեխային բուրբովին կփչացնես. նա պէտք է լսէ միշտ միայն երգ ու ծիծաղ, տեսնէ իւր շուրջը միայն ուրախ դէմքեր և ոչ թէ այդպիսի մի լալկան կին, որպիսին դու ես քեզ ներկայացնում. ես քեզ խորհուրդ չեմ

տալիս այդպիսի երեսով նույն-իսկ ննջարանից դուրս գալ, հասկանում ես: Եւ այդ սառում էր ոչ միայն ծծմօր առաջ, որին լալտնի էր իմ ստորացուցիչ վիճակը այդ տան մէջ, այլ և իշխանուհու աղախնի ներկայութեամբ, որն առանց այն էլ բուականին կոշտ ու կոպիտ էր վարում հետս: Ակեսուրիս այդ վարմունքը սաստիկ վրդովեց ինձ: «Գուք ոչ մի իրաւունք չունէք այդպիսի պահանջներ ներկայացնելու ինձ», — հեկեկանքս զսպելով՝ պատասխանեցի ես նորան, և իսկույն վաղեցի ներքե: Մտքումս դրի բնաւ չբաժանուել երեխայիցս, և հէնց նույն երեկոյեան հրամայեցի ծծմօրը՝ երեխայի հետ միասին ներքե տեղափոխուել. բայց ծծմայրը, չնայած իմ աղերսանքներին՝ չեկաւ ներքե, երկիւղ կրելով, որ իշխանուհին անադին խալտաւակութիւնով դարձեալ վեր կտանի նրան: Ես լուսահատութեան մէջ ընկաւ: Ամուսինս տեսնելով ինձ իւր առանձնատեսնակում դառն կերպով արտայտուելիս, փոխանակ հարցնելու և իմանալու իմ տանջանքի պատճառը՝ խիստ զայրացաւ և ասաց, որ իսկույն վերջ տամ լացիս, որովհետեւ աշխարհիս երեսին ոչ մի բան նրան այնքան չէ վրդովեցնում, որքան կանանց արտասուքները: Նրբ ես դանդատուեցի նորան, առաջ բերելով նրա մօր խտասարտութիւնը և խնդրելով, որ նա պաշտպան հանդիսանայ ինձ՝ ամուսինս չոր ու սառն կերպով պատասխանեց. «Ես լիովին համակարծիք եմ մօրս:

Մի անգամ ընդ միշտ խմացած եղիր, որ ես երբէք  
 հակառակ չեմ գնում այն բոլոր կարգադրութիւն-  
 ներին, որ անում է իմ աթառը, և նոյնը խորհուրդ  
 եմ տալիս նաև քեզ: Նա այնչափ խելօք ու փորձ-  
 ուած կին է, որ դու քո թեթև գլխով դեռ շատ  
 բան սովորելու կարիք ունիս նրանից»: Այդ բո-  
 պէին ամուսինս այն աստիճան քարասիրտ թուաց  
 ինձ, որ ես միանգամայն ատեցի նրան: Այն, մայր  
 և սրբի չխնայեցին ոչ կնոջ ինքնասիրութիւնը,  
 ոչ ամուսնու արժանապատուութիւնը, ոչ մօր զգաց-  
 մունքները: Ես զրկուած էի իմ սեփական զաւա-  
 կին ամեն ժամանակ տեսնելու օրինական իրա-  
 ւունքից... հեշտ է այդ ասել... Ես զարմանում եմ,  
 որ երկիրքը չփլաւ դահիճներէս գլխին: Այդ օրից  
 սիրտս պաշարեց սեփական անզօրութեանս դառն  
 գիտակցութիւնը... Ծծմայրը, որ անկեղծ ցաւակից  
 էր իմ դառն վիճակին՝ հնարաւորութիւն տուաւ  
 ինձ տեսնուելու զաւակիս հետ իշխանուհու բացա-  
 կալութեան ժամանակ: Նրա աղախին Պաշալին,  
 որ միշտ լիտի կերպով էր վերաբերւում դէպի ինձ՝  
 ես կաշառեցի թանկագին ընծաներով: Յաճախ մէն-  
 մենակ մնալով բարի ծծմայր Գարեալի հետ՝ ես  
 նորան էի պատմում իմ ցաւերն ու դարգերը: Շա-  
 տերին այդ բանը կարող է անպատուարեր թուալ,  
 բայց իմ դրութեան մէջ մտնել ցանկացողը կարող  
 է հասկանալ և բացատրել մեր այդ չարաբերու-  
 թիւնները: Ո՞ւր հաւատալի ես իմ զգացմունքները...

Ո՛չ մօրս, ոչ էլ մանաւանդ Գայիանէին այժմ  
 հնարաւորութիւն չէին տալիս չաճախ տեսնուելու  
 ինձ հետ, և վերջապէս եթէ տեսնուէին էլ՝ միև-  
 նոյն է, ես նրանց ոչինչ չէի ասի իմ անբախտու-  
 թեան մասին—առաջինին՝ վերաւորելու երկիւղից,  
 իսկ երկրորդին՝ այն կեղծ առօթից, որ չարաչար  
 սխալուել էի իմ արած ընտրութեան մէջ: Բայց  
 երկուսն էլ զգում էին, որ մի բան տանջում է  
 ինձ: Մինչև վերջին ոյժս կղպեմ ինքս ինձ, տե-  
 սնենք ինչ կլինի լետոյ: Գայիանէն և Քրիստափորը  
 համակիր չէին իմ պտակին բայց ես այնպէս հրա-  
 պուրուած էի իմ ապագայ փալլուն դիրքով, որ  
 ոչինչ նկատել չէի ուզում, ինչ որ կատարւում էր  
 իմ շորս կողմը, և եթէ նկատէի էլ՝ միևնոյն է,  
 նրանց խօսքին ականջ չէի դնի: Երբ մարդս  
 չափշտակուած է լինում որևէ մտքով՝ նա միշտ  
 նշանակութիւն է տալիս միայն այն բանին, ինչ  
 որ համապատասխանում և նպաստում է այդ  
 մտքի ամրապնդուելուն իւր մէջ, թէ՛լուզ այդ  
 միտքն չառաջանալիս լինի ամենաաննշան մարդ-  
 կանցից: Այսպէս օրինակ, օծիտս պատուիրելու  
 համար խանութէ խանութ շրջելով, ես մեծ բա-  
 ւականութեամբ ականջ էի դնում, ինչպէս խա-  
 նութպանները խորհուրդ էին տալիս տիկին Մա-  
 մուլովալին, որ նա ամենաքեզ իրերն առնէ ինձ  
 համար, քանի որ ես ոտք եմ դնում այնպիսի մի  
 նշանաւոր ընտանիք. նոյնը չափշտակուած լսում

էի և դերձակուհիներից, որոնք հաւատացնում էին, թէ ամենքն էլ նախանձում են իմ արած փալլուն ընտրութեան: Մի խօսքով՝ ես նշանակութիւն էի տալիս ամենափոքրիկ նկատողութեան՝ որ շոյում էր իմ ինքնասիրութիւնը, և միանգամայն անտարբեր էի դէպի այն ամենը, ինչ որ մասնակից չէր իմ հիացմունքներին: Այժմ ինձ վերին աստիճան տարօրինակ է թւում, թէ ինչպէս կարող էի ես ահագին նշանակութիւն տալ այնպիսի բաներին, որոնք ոչ մի կշիռ չունին կեանքում: Այո՛, տարաբախտարար շնառչ բացուեցին իմ աչքերը...

1892 թ. 2 լուսուարի

Ահա և Նոր Տարի: Աղմկալից և շքեղ կերպով տօնեցինք այդ օրը: Պարահանդէսի երաժշտութիւնը զրդրում էր մինչև առաւօտ: Մեր տանը, ըստ սովորականին, հաւաքուել էին Թիֆլիզի beau monde-ի ամբողջ վարդուգարը, ինչպէս սիրում էր ասել իմ belle-mère-ը: Ներկայ էր և շացուցիչ princesse Barbe-ը, որից ամուսինս աչք չէր պոկում: Իսկ նա հօ, օգտուելով իւր կողակցի բացակայութիւնից՝ անվերջ կոտրատում և ամուսնու հաճոյանալ էր աշխատում: Ես վաղուց նկատել եմ, որ բարձր շրջանում, որին պատկանելու

տարաբախտութիւնից ազատ չեմ և ես՝ կնոջը բարգում ու պատում են նրա երկրպագուների քանակութեան համեմատ: Իսկ ինձ թւում էր, թէ այդ բանը արատաւոր և պախարակելի պէտք է լինի իւրաքանչիւր ամուսնատէր կնոջ համար: Ես չարաչար սխալում էի, ենթադրելով, թէ ազնիւ ծագումը կապ ունի նաև որպէս խելքի, նույնպէս էլ սրտի ազնիւ հակումների ու ձգտումների հետ: Բայց թողնենք այդ, ինչպէս տեսնում եմ՝ ես երազները մէջ ընկալ, .. Անցնեմ պարահանդէսին: Բոլոր հիւրերն ուրախ էին երևում. ես էլ սկեսուրիս ազդու հալեացքներից զրդում՝ ինձ ուրախ էի ցոյց տալիս, մինչդեռ... Ս՛, որքան ծանր, անտանելի է դիմակաւորուելու անհրաժեշտութիւնը. գոնէ ինձ համար դրանից մեծ տանջանք չկայ: Այն-ինչ բարձր շրջանի կանայք այն աստիճան ընտելացել են կեղծաւորութեան, որ այդ զգուցմունքը կազմում է նրանց երկրորդ բնույթը: Ինձ թուաց, թէ հիւրերից մի քանիսին լայնի է իմ և ամուսնուս մէջ եղած զժտութիւնը, և թէ նրանք մերթ ընդ մերթ ծիծաղելով՝ այդ մասին քչփչում են իրար հետ: Այդ կասկածն աւելի սաստկացաւ իմ մէջ՝ երբ հիւրասենեակի անկիւններից մէկում, ուր խօսակցութիւն էր սկսուել բոլորիս ծանօթ երկու ամուսինների ընտանեկան անախտութիւնների մասին՝ իշխանուհի Barbe-ը աչքը վրաս մե-

խած՝ շեշտեց. «Եթէ ամուսինն ուշք չէ դարձնում իւր կնոջ վրայ՝ մեղաւորը միշտ կինն է և, եթէ վերջինն չէ կարողանում ամուսնուն միշտ իւր հետ կապել, անբաժան պահել իրանից՝ ապա այդ բանունն էլ կինը միայն ինքն իրան պէտք է մեղադրէ»։ Է՛հ, Տէրն իրան հետ, չարժէ նշանակութիւն տալ նրա կարծիքներին. միևնույն է, նա իւր միտքը չի փոխի։ Նա երբէք չի համաձայնի ինձ էլ իրան հաւատար կին ճանաչելու։ Այո՛, նրա հետ միասին նրա ամբողջ շրջանը վարակուած է գասակարգային նախապաշարմունքներով, որոնց շէնորհիւ իմ ամուսինը, որքան էլ մեծ լինի նրա ճանցանքը իմ վերաբերմամբ, իճարկէ, միշտ արգարացի կերևալ նրանց աչքում։ Է՛հ, թողնենք այդ... առաջուց պէտք էր մտածել այդ մասին... Մեր պարահանդէսին ինձ համար ամենից վիրաւորականն այն էր, որ ինձ թող չտուին հրաւիրելու ոչ միայն իմ բարեկամներին — Գալիանէ և Քրիստափոր Ակումեաններին, այլև հարազատ մօրըս։ Հիւրերից մի քանիսի հարցմունքներին, թէ ինչո՞ւ մայրս չկալ, իշխանուհին պատասխանեց, որ նա հիւանդ է. ես նույնպէս, սրտիս քար գցելով, ստիպուած էի հաստատել այդ սուտը։

Անցեալ տարի, մեր հարսանիքի տարեկարձի օրը, նրանք երեքով էլ հրաւիրուած էին պարահանդէսին, բայց այնպէս անուշադիր գտնուեցան ձր-էպի նրանց, որ աւելի լաւ կլինէր՝ եթէ հրաւիր

ուած չլինէին։ Նա միայն լետոյ գլխի ընկալ, որ հրաւիրելով նրանց՝ կամեցել էին միայն սիրտս շահել իմ լղութեան պատճառով, հը՛... Չէ՛ որ մօր և որդու համար այնքան կարևոր էր ժառանգի աշխարհ գալը։ Օ՛, որքան ստոր են նրանց բոլոր հաշիւները։ Նրանք պատրաստ են իրանց եսասիրական նպատակներին հասնելու համար ոտնակոխ անել այն ամենն, ինչ որ սուրբ է, ինչ որ մաքուր է։ Ինչո՞ւ աչքերս բացուեցան. աւելի լաւ չէր լինի առաջուայ անգիտութեան մէջ մնալի։ Ո՛րքան բախտաւոր և մաքուր էի ես սրտով ամուսնութիւնիցս առաջ. — չարր գոյութիւն չունէր ինձ համար։ Ինձ սիրում, պաշտում էին իմ բարի, պարզասիրտ ծնողները. որոնք իրանց կեանքը չէին խնայում ինձ համար։ Ա՛խ, ո՞ւր ես դու, իմ թանկագին հայրիկ, դու չէիր թողնի, որ ինձ այսպէս անարգեն, դու կպաշտպանէիր քո խղճուկ Մաշիկօյին։

Ցաւալի է, որ բնութեամբ ցնորասէր աղջիկ լինելով՝ ես աւելի երեակալութեամբ էի ապրում, քան խելքով, և հետևապէս շատ բան իմ աչքին այնպէս չէր երևում՝ ինչպէս որ նա կար իրական կեանքում։ Տիկին Մամուլովան, որ մեր ամբողջ տունն իւր ձեռքն էր առել՝ դէպի ինձ միշտ սիրով ու քնքշութեամբ էր վերաբերում. ես էլ փոխադարձաբար նույնն էի անում, ամեն բանում կուրօրէն հաւատալով նորան։ Նա նպատակ դրեց անպատճառ աշխարհային կրթութիւն տալ ինձ,

դանելով, որ ես եմ իմ կարողութեամբ, արխատու-  
կրատական արտաքինով և բնատուր հաղեկութե-  
թեամբս իրաւունք ունիմ փալուէն ապագայ չու-  
սալուսան քի զոմցալ մագմյա դանա՛ւ ձորդս մ  
Տաճաննչորս տարեկան հասակից ես շարունակ  
հէնց այս էի լսում նրա բերանից. «Marie, քս այդ  
վայելչակազմ իրանով, այդ փոքրիկ սիրուն զր-  
խով ու ձեռներով, գունատ դէմքիդ այդ նուրբ  
զծադրութեամբ գու ուղղակի սխալմամբ ես ծըն-  
ուել հասարակ ընտանիքում: Գու ունիս այն բոլոր  
արժանիքները, որ պէտք են արխտուկրատ աղ-  
ջկանս պակաս է միայն տխուղուը, բայց Աստուծոյ  
օղնութեամբ այդ էլ կլինի, ma chère»  
Տիկին Մամուլովայի ուշագրաւ, չափնտակիչ  
զրուցները բարձր հասարակութեան մասին, ուր  
եղումուս ունէր ինքը՝ իմ խելք ու միտքս էին  
տանոււմ, չաճախ հասցնելով ինձ արբեցութեանս  
Ասպազան, որ հրապուրիչ գոչներով էր նկարում  
իմ աչքին՝ ստիպում էր ինձ ներկայիս վրայ նայել՝  
որպէս մի անցողիկ, ժամանակաւոր բանի վրայ:  
Իմ այդ տրամադրութիւնը չէր կարող ձածուկ մը-  
նալ բարեկամներս—Քրիստափորի և Գալիանէի  
աչքից, բայց նրանք, տարաբախտաբար, ոչ մի  
ազդեցութիւն չունէին ինձ վրայ: Եւ միթէ կարող  
էր այլ կերպ լինել: Երբ Ակումեանը համալսարանն  
աւարտելուց չետոյ կկաւ Թիֆլիզ՝ ես արդէն տասն-  
ուիկց տարեկան էի և ամբողջապէս զանուււմ էի

տիկին Մամուլովայի ճանկերում: Իմ լարաբերու-  
թիւնները Գալիանէի հետ՝ նրա զիմնազիւս մտնե-  
լու օրից ճեղղճեալ թուլանում էին: Պէտք է խոս-  
տովանեմ, որ երբեմն նրանց խառնուելը մեր ըն-  
տանեկան գործերում ուղղակի վրդովում էր ինձ:  
Քրիստափորը միանգամայն դէմ էր իմ կրթու-  
թեան ամբողջ ուխտեմին, բայց նրա խորհուրդ-  
ները մնում էին «ձայն բարբառոյ չանապատի»:  
Պէպի մեր ընտանիքն զգացած նրա բարութեանը  
և անձնուիրութեանը չափ ու սահման չկար: Ես  
ցաւում եմ այժմ, որ չէի կարողանում նրան պաշտ-  
պանել տիկին Մամուլովայի անարգար լարձա-  
կումներից, որն այնքան մեղաւոր էր իմ առաջ:  
Բայց, էհ, ինչո՞ւ մեղադրել նրան. նա գործում էր  
բախտի մասին ունեցած իւր հասկացողութիւննե-  
րին համեմատ. նա մոլորութեան մէջ էր, բայց  
պէտք է ասած, որ նա այժմ էլ դեռ հաւատարիմ  
էր իւր հաղեցքներին ու կարծիքներին:

Տէր Աստուած, ինչ ինչ գովասանքներ ասես  
չչուալեց նա իշխանի մասին՝ երբ աշխատում էր  
ինձ տալ նրան: Եւ ես, թեթեամիտս, հաւատացի  
այդ բոլորին:

4 լուսնուարի.

Նոր Տարու անվերջ այցելութիւնները յոգնեցրին ինձ: Ամբողջ օրգանիդմիս մէջ զգում եմ չափազանց թուլութիւն: Ընդամենը 22 տարեկան եմ, բայց արդէն յոգնել եմ ապրելուց: Մայրս շարունակ ասում է, որ բժշկուեմ, բայց ես այդ մասին մտածել անգամ ձուլանում եմ: Երէկ մենք բոլորեքեանքս էլ կոմսուհու մօտ ճաշի էինք հրաւիրուած: Նս չգնացի, պատճառ բերելով մրսելս: Այն հասարակութիւնը, որի հետ շփուում եմ այժմ, կամ այսպէս անուանեալ արիստոկրատիան, քանի գնում, ձանձրալի է դառնում ինձ համար: Օգուտ քաղելով սկեսուերիս ու ամուսնուս ճաշի գնալու զիտաւորութիւնից՝ ես ամբողջ օրով ինձ մօտ հրաւիրեցի Գալիանէին, որ մի ամսից աւելի էր չէր եղած ինձ մօտ: Իշխանուհուն հանդիպելուց խոյս տալու համար՝ նա եկաւ հէնց ուղիղ մեր ճաշելու ժամին, բայց չնայելով դրան՝ նա պատահեց իշխանուհուն նախասենեակում:

— Բարև ձեզ, ինչ էք կամենում, — լսելի եղաւ սկեսուերիս խիստ ձայնը:

— Նս եկել եմ Մարիամի մօտ, — վճռական եղանակով պատասխանեց նրան Գալիանէն:

— Այսինքն իշխանուհի Մարիա Նգորովնայի մօտ:

— Միենոյն է, նա ինձ համար միշտ Մարիամ

կմնայ, — նոյն կտրուկ ձայնով արտասանեց մօրաբրոջս աղջիկը:

Հետաքրքրուելով, թէ ինչ վախճան կուենայ այդ տեսարանը՝ ես ականջս մօտեցրի դռանը:

— Միթէ... հեգնօրէն հարցրեց իշխանուհին. — հը'... հը'... Ինչպէս կամենում էք, բայց լի մացած եղէք, որ մենք իսկոյն հեռանում ենք տնից:

— Անկարելի բան է, — բացազանչեց Գալիանէն:

Չկարողանալով այլևս ինքս ինձ զսպել՝ ես ձայն տուի դռան միջից. «Տանն եմ, տանն եմ: Հաղիս պատճառով ես այսօր տնից դուրս գնալ չեմ կարող»: — «Նս այդ չգիտէի — արտասանեց սկեսուերս, թէև նա շատ լաւ գիտէր, որ ես վճռել էի տանը մնալ:

— Նթէ ես պատահմամբ կից սենեակում չլինէի՝ իմ belle mère ը քեզ չետ կղարձնէր, — ասացի ես, զիմաւորելով մանկութեանս ընկերուհուն փաթաթուեցի վզով:

— Ա՛յ, տեսնումես, համբուրուելով հետս՝ ասաց նա, իսկ դու դեռ զարմանում ես, որ ես սակաւ եմ լինում ձեզ մօտ: Մարիամ, մի բան ինձ անչափ զարմացնում է, թէ ինչո՞ւ դու այդչափ նիւթական միջոցներ ունենալով հանդերձ՝ քեզ համար առանձին տունուտեղ չես սարքում:

— Նս շատ անգամ եմ խօսել այդ մասին

ամուսնուս հետ, բայց նա չէ համաձայնում բա-  
ժանուել իւր մօրից:

— Ես չեմ կարողանում ինձ երեակայել, որ  
այդքան էլ դժուար լինի իրագործել քո օրինական  
ցանկութիւնը:

— Իզուր, սիրելիս... այնքան էլ հեշտ չէ, որ-  
քան այդ թուում է:— սպասասխանեցի ես՝ հազիւ  
զսպելով արտասուքս:

— Պէտք է միայն քաջութեամբ ձեռնամուխ  
լինել գործին, և հաւատան, Մարիամ, ամեն բան  
կարգին կգնայ: Ես աւելի կգերադասէի մի կտոր  
չոր հաց ուտել, քան թէ միենույն լարկի տակ ա-  
պրել այնպիսի մի ջաղու կնկայ հետ՝ որպիսին քո  
սկեսուրն է:

Նախանձելով Գալիանէի քաջասրտութեան՝  
քիչ մնաց յալտնէի նորան, որ ես զրկուած եմ մինչև  
անգամ երեխայիս երեսն աղատ կերպով տեսնելու  
բախտից. սակայն ինքս ինձ զսպեցի, ամաչելով  
այդ բանը խոստովանելու ճաշից լետոյ եկաւ մաշ-  
քըս, հետը բերելով մի ձեռք գեղեցիկ հագուստ  
իւր պաշտելի թուան համար: Այդ բանն անում  
էր մայրս ամեն ամիս և ամենայն ճշտութեամբ, ե-  
րեխայիս ծնուելու օրից սկսած. իսկ երէկ լրացաւ  
նրա չորս ամիսը: Մի ժամ անցած՝ եկաւ նաև ա-  
մուսինս, որը հազիւ հազ ուշադրութեան արժա-  
նացրեց հիւրերիս: Ի՞նչ տեղից են այս փալաս-  
փուլուսները. չլինի՞ բողաղխանայից... — դարձաւ

նա ինձ Ֆրանսերէն լեզուով, մի արհամարհական  
հայեացք ձգելով մօտս բերած ընծայի վրայ:— «Ո՛ր-  
քան դուք նրբատես էք, իշխան. այս փալաս-փու-  
լուսներն էլ նույն ազգիւրիցն են՝ ինչ աղբիւրից  
որ ձեր շրջանի կանայքն են իրանց պճնասիրու-  
թեան ծարաւը լաղեցնում»,— հեզնօրէն նկատեց  
Գալիանէն ուսներէն լեզուով:— «Բախտա՛ որ է  
Գալիանէն. ես չէի համարձակի նորան այդպէս  
պատասխանելու», անցաւ իմ մտքով: Ամուսինս  
հաղուստը փոխելով և աւելի շքեղ հագնուելով,  
երբ պատրաստուում էր տնից դուրս գալ՝ ասաց  
ինձ. «Եթէ տիկին Մամուլովան դալ աստեղ՝ չմո-  
ռանաս ասել նորան, որ mamam խնդրեց կոմսին  
մօրեղբօրդ գործի համար. կոմսը խոստացաւ դուխ  
բերել նրա գործը»: Ամուսնուս դուրս գնալուց լե-  
տոյ, ես իմացայ մօրիցս, որ մօրեղբայրս համաձայ-  
նել է իւր անունը նույնպէս ստորագրել Միշելի  
10,000 ռ. պարտամուրհակի տակ միայն այն դէպ-  
քում՝ եթէ նրա խնդիրքն էլ իշխանուհին զուխ  
բերէ իւր միջնորդութեամբ: Գալիանէն այդ լսե-  
լով՝ զարմացաւ, թէ ո՞ր է գնում այդքան փողը:  
Ես ասացի, որ ամուսինս շատ է սիրում թղթա-  
խաղ և այն էլ վտանգաւոր խաղեր:

— Ա՛խ, սիրելի Մարիամ, — կարեկցութեամբ  
համբուրեց ինձ ընկերուհիս, — մեծ անխելութիւն  
արիւր, որ բոլոր փողերդ տուիր նրա ձեռքը:

— Բայց ես այնքան սիրում էի նրան, և վեր-

Չապէս քեզանից թնչ թագցնեմ, հոգիս, ես իմ փողերին մի առանձին նշանակութիւն չէի տալիս և չեմ էլ տալիս:

—Բայց նրանք տալիս են,—իրան լատուկ կտրողականութեամբ դոչեց Գալիանէն:—Ի՞նչպէս դու չես ուզում հասկանալ, սիրելիս, որ եթէ փողերը քո ձեռքում մնային՝ նրանք ուրիշ կերպ կվարուէին քեզ հետ:

—Օ՛, այժմ հասկանում եմ,—պատասխանեցի ես և ինքս ինձ միտք արի.—Նրանք դուրս կորզելով իմ ձեռքից այն ամենը, ինչ որ նրանց հարկաւոր էր՝ այժմ աւելորդ են համարում բանի տեղ դնել ինձ. նրանց համար թանգ էր մօր բարեկեցութիւնը միմիայն այն պատճառով, որ այդ մայրը նրանց համար աշխարհ բերէ մի առողջ երեխայ, որին նրանք կսկսեն նոյնպէս կողոպտել՝ ինչպէս կողոպտեցին նրա մօրը:

Գեռ լաւ է որ քո ամուսինը, Մարիամ, իրաւունք չունի ծախել կամ գրաւ դնել քո կալուածները. թէև լսել եմ, որ եկամուտներն ստանալու իրաւունքը նորան ես տուել. իրան է այդ:

Ես շփոթուած՝ գլխով դրական շարժում գործեցի:

—Ա՛խ, Մարիամ, դու անսահման բարի և թուլակամք կին ես. այդպէս ապրել աշխարհիս երեսին չէ կարելի,—կշտամբելով ձեռքս իւր արի մէջ առաւ ընկերուհիս:

Մեր խօսակցութիւնն ընդհատեց մայրս, որ մօտենալով մեզ՝ ասաց որ ուզում է իւր թոռնիկին տեսնել: Քանի որ մայրս քաշում էր վերև գնալ, ես աղախնիս ուղարկեցի ծծմօր մօտ ասելու, որ նա երեխայի հետ ներքև դալ, որ և խսկոյն կատարեց իմ ցանկութիւնը: Ես ու մայրս քիչ մնաց խեղդէինք Ալէքսանդրիկին մեր համբուրներով ու գրկախառնութիւններով: Երեխան բարձրաձայն լացեց, որը գրաւեց հէնց նոր վերադարձած իշխանուհու ուշադրութիւնը: Ներս մտնելով սենեակս՝ նա ամենից առաջ հանդիպեց Գալիանէին, և մի արճամարհական ժպիտ ցնցեց նրա երեսը:—«Ա՛խ, դուք դեռ այստեղ էք»,—դարձաւ նա Գալիանէին: Յետոյ սառն կերպով բարեկեղծ մօրս՝ սկսեց սաստիկ կշտամբել ծծմօրը, որ նա առանց իւր թողտուութեան համարձակուել էր ներքև գալու: «Քարասիրտ արարած, չէ որ երեխան կարող է մրսել, նա դեռ այնքան փոքր է: Դէ, չուտ արա, վեր գնա. լսում ես, չուտով երեխային տար վեր»,—հրամայեց սրտացաւ տատը: Ես ուզում էի ասել սկեսուրիս, որ ներսի սանդուղքը, որով ցած էր բերուել երեխան, աւելի տաք էր, քան սենեակը, բայց չվստահացայ, և այս անգամ աւելի քան երբևիցէ սկսեցի մտքումս ինքս ինձ նախատել իմ վախկոտութեան համար: Ծծմօր չետեից վեր գնաց նաև իշխանուհին, շարունակելով իւր մրթմրթոցը: Խեղճ մայրս, երեսի գոյնը կորցրած, դողողում էր,

կարծես տենդային դրութեան մէջ լինէր: Ես փաթաթութեանցի նրա վզով և երկար բաց չէի թողնում նրան իմ գրկից:

Փոքր ժամանակից լետոյ նա և Գալիանէն պատրաստուեցին գնալու: Առաջինն արտասուքն աչքերին աղաչում էր համբերել, հաշտ աչքով նայել դրութեանս վրայ. երկրորդը տաքացած լանդիմանում էր ինձ իմ ծալրայնդ թուլութեան ու ներողամտութեան համար և խորհուրդ էր տալիս համարձակ լինել պաշտպանել իրաւունքներս: «Այդպէս մի խօսիր, Գալիանէ. ականջ մի դնել նրա ասածներին, Մարիամ ջան. ով կարող է ճակատագրին հակառակ գնալ. Աստուած ողորմած է, յոյսդ մի կտրեր նրանից, — սիրտ էր տալիս ինձ մայրս:

Թող մէկը համարձակուէր այդպէս ինքնակամ տէր կանգնել իմ երեսխայլին, ես նորան ցոյց կտայի, — խորին զայրույթով ասաց ընկերուհիս՝ բռունցքներն ամուր սեղմելով:

Ես զգում էի, որ Գալիանէի ասածը ճշմարիտ է, բայց միևնույն ժամանակ զգում էի և այն, որ ես քաջութիւն չեմ ունենալ հետեւելու նրա ասածներին: Սրտիս այնքան մօտիկ և թանկագին մարդկանց հեռանալուց լետոյ, ես աւելի քան երբեք զգացի իմ շուրջը դատարկութիւն: «Ա՛խ, եթէ գոնէ երեսաս պառկած լինէր կողքիս, նա կլցնէր կեանքիս այս դատարկութիւնը», — մտածեցի ես:

Կէս ժամից լետոյ մեզ մօտ հիւրերը եկան. իշխանուհին մարդ ուղարկեց լետեկցս ինձ կանչելու, բայց ես վատ տրամադրութեան մէջ գտնուելով՝ հրաժարուեցի վերև գնալ: Այդ բանը զայրացրեց իշխանուհուն, և նա, երբ հիւրերը գնացին՝ աղախնի ներկայութեամբ ասաց ինձ. «Քանի որ դու ամուսնուդ ազգականներին ճանաչել չես ուզում՝ ուրեմն ես էլ արգելում եմ քեզ քո բարեկամներին ընդունել»:

— Չէ որ դուք արդէն զրկել էք ինձ իմ ազգականների հետ բարեկամութիւն անելու իրաւունքից: Բացի մօրիցս և Գալիանէից էլ ով է լիտում այտեղ: Միթէ բաւական չէն այն նեղութիւնները, որոնց ենթարկում էք դուք ինձ: Լքուած բան է, որ զաւակին խլեն մօր ձեռքից: Ես անպատճառ նրան կտեղափոխեմ ինձ մօտ:

— Այդ դեռ կտեսնենք, — շեշտեց իշխանուհին, աչքերը զարմանքով լաւելով վրաս:

Ես ինքս էլ, ոչ պակաս նրանից, զարմացալ ինձ վրայ:

— Իսկոյն երեւում է նիհիլիստ ազգականուհուդ արած աղդեցութիւնը քո վրայ, — չարածպիտ դէմքով նկատեց նա և վեր բարձրացաւ:

Նրա և՛ յպիտը, և՛ աչքերի արտալատութիւնը, և՛ խօսելու եղանակը — այդ բոլորը լիշեցրին ինձ իմ ամուսնուն:

«Տէր Աստուած, ինչ նրանք նման են մի-

մեանց, և ինչպէս ես չէի նկատում այդ բանն առաջ»:

Միայնակ մնալով ամուսնուս առանձնասենեակում՝ ես մեքենայաբար ձեռքս առայ սեղանի վրայ դրած հաստ գիրքը, որի տակ գտնուում էր մի ինչ որ վարդագոյն թղթի կտոր: Գա կոմսուհի Barbe-ի նամակն էր, անուշունքով սրսկուած. կոմսուհին rendez-vous էր նշանակել իմ ամուսնուն: Ահա թէ ում համար էր նա այնպէս զուգուում ու կոկուում),— մտածեցի ես խորին զայրոյթով: Ես ուղեցի իմանալ, արդեօք ամուսինս ուրիշ («մեղքեր») էլ ունի, թէ հէնց միայն այդ մէկն է: Բարեբախտաբար, նրա զբառեղանի միջին արկղիկը կողպած չէր: Հետաքրքրութիւնից գրգռուած՝ ես դուրս քաշեցի արկղիկը և նրա մէջ գտայ մի քանի նամակներ, որոնք վիպում էին, որ նա անհաւատարիմ է ինձ, որ ա՛ռագին փողեր է ծախուում սրան ու նրան պահելով և նորանց թանկագին ընծաներ տալով: Եթէ այդ բոլորն իմանալի առաջ, երբ սիրաս լեցուն էր դէպի ամուսինս ունեցած ջերմ սիրով և խորին հաւատով՝ գուցէ չդիմանայի այդ դժբախտութեան. բայց այժմ չուզում էր միայն դժբախտութեան. բայց այժմ չուզում էր միայն վիրաւորուած ինքնասիրութիւնս և զայրոյթը: Գողգոջուն ձեռքերով թղթերն ու գրքերը դարսելով իրենց տեղը նախկին կարգով՝ ես երկար նըստած մտածում էի իմ տխուր վիճակի մասին և ոչ մի եւթ չէի գտնում այդ վիճակից ազատուելու:

Վերջապէս պառկեցի քնելու, բայց երկար ժամանակ աչքիս քուն չէր գալիս: Խփեց գիշերուայ մէկ ժամը, խփեց երկուսը, վերջապէս երեքը. բայց ամուսինս չկար ու չկար:

9 յունուարի.

Ամուսնուս գրասեղանում գտածս նամակները այնպիսի սրտամաշ դրութեան հասցրին ինձ, որ այս չորս օրուայ ընթացքում օրագիրն իսկի միտըս էլ չէր գալիս: Ես մի քանի անգամ ուզում էի փորձել բացատրութիւն խնդրելու ամուսնուցս, բայց այն համոզմունքը, որ այդ բանը բնառն մի օգուտ չի բերի՝ ամեն անգամ ինձ լեռ էր կանգնեցնում իմ գիտաւորութիւնից: «Աստուած գիտէ, թէ ինչպէս կվարուի նա դեռ ինձ հետ՝ երբ իմանայ, որ ես վտանացել եմ նրա արկղիկը քրքրելու»,— մտածում էի ես: Երբորդ օրը փողի պէտք ունենալով և ամուսնուցս մերժումն ստանալով՝ ևս ակնարկներով հասկացրի նրան, թէ ուր են գնում այդքան փողերը և ինչ տեղ է անց կացնում նա բոլոր գիշերները:

—Գու հաշիւ ես պահանջում ինձանից, անց էր պակաս,— բարձրաձայն ծիծաղեց նա.— Գո այդ թթուած երեսով դեռ ուզում էլ ես, որ միշտ կողքիդ նստած լինիմ. ձանձրութից մեռնել կարելի

է. բայց ես դեռ ապրել եմ ուզում, կեանքի քաղցրութիւնները ճաշակել եմ ուզում, հասկանում ես Մթթէ ես մեղաւոր եմ, որ դու չծաղկած արդէն թառամել ես:

Նրկար դեռ ծաղրում էր ամուսինս իմ նիհարութիւնը, դէմքիս գունատութիւնը և աչքերիս տակ եղած կապուտակները: Չիմանալով ինչպէս աղատուել ամուսնուս այդ ծաղր ու ծանակից՝ ես սրտանց զղջում էի, որ շօշափել էի այդ հարցը:

Նրէկ Գալիանէի ծննդեան օրը չիմենալով՝ ինձ կանչել էր ճաշի: Շատ էի ուզում գնալ նրա մօտ: Առաւօտեան, սուրճի ժամանակ խնդրեցի ամուսնուս, որ նա բուսաբանական այգուց ծաղկէփունջ բերել տալ ընկերունուս համար. ամբողջ շաբաթ էր, որ գրգանումս կոպէկ չկար:

— Աւելի լաւ կանէիր՝ եթէ դու քո հագուստից մէկն ուղարկէիր ընկերունուդ. հաւատան, Marie, ծաղկէփունջը բուրրովին ապարդիւն բան է նրա համար, — նկատեց ինձ ամուսինս:

— Մթթէ... վրդովուած գոչեցի ես: — Վաղուց է, որ դու ալգալիսի գործնական մարդ ես դառել:

Ես պատրաստ էի նաև աւելացնելու, որ նա ունի վրայ ասես՝ ծախսում է իմ փողերը, իսկ իմ չնչին հաճույքն էլ չէ ուզում կատարել, բայց սկսուաւ ինքն ինքն հարկաւորութիւնը կաշկանդեց իմ վճռակալութիւնը: Ամուսինս կարծես հասկացաւ իմ միտքը, հանեց մի հինգ բուրլիանոց թղթաղբամ և

սպասուորին տալով, հրամայեց որ բուսաբանական այգուց մի ծաղկէփունջ բերէ: Յսծ իջնելիս, ես չալտնեցի, որ ամբողջ օրով գնում եմ Գալիանէի մօտ, և խնդրեցի ինը ժամին մարդ ուղարկել լետեիցս: Սկսուաւ իւր դժգոհութիւնն չալտնելով՝ ասաց որ տանը մնամ, որովհետև ճաշին կարող են հիւրեր գալ մեզ մօտ: Ես պատասխանեցի, թէ արդէն խօսք եմ տուել և խոստումս դրժեցնու, այն էլ ընկերունուս համար ալգալիսի մի հանդիսաւոր օրին՝ չափազանց անյարմար և անխալել եմ համարում:

— Ես համոզուած եմ, որ դու ոչ մի տեղ չես գնալ, — հրամայական եղանակով դարձաւ ինձ ամուսինս:

— Ո՛չ, կգնամ, — պատասխանեցի ես վրդովուած. բայց ցած իջնելով՝ կարծ միջոցից լետու ասրակուսանքի մէջ ընկալ գնալ արդեօք, թէ բաւականանալ միայն շնորհաւորական նամակ գրելով և ծաղկէփունջն ուղարկելով: Բայց կրեք ժամին մօտ, երբ իմացալ սպասուորից, որ ճաշին ոչ ոքի չեն սպասում՝ ինձ ախրեց ալնալիսի մի անգուսկելի ցանկութիւն, մի քանի ժամ անց կացնել սրտիս մօտիկ մարդկանց շրջանում՝ որ չկարողացալ դիմանալ Գալիանէի մօտ քաշող մագնիսական ոյժին: Նրկիւղ կրելով, որ մի գուցէ լանկարծ վրճուիցս լետ կանգնեմ՝ ես շտապով հագնուեցայ և մի ախնթարթում արդէն փողոցումս էի. կառք

նստելով՝ հրամայեցի կառապանին որքան կարելի է արագ քշել: Այս առաջին անհաղանդութիւնն իմ ամուսնուն՝ իմ սիրտը լցրեց մի ինչ-որ նոր և ինձ համար անորոշ զգացմունքով: Ես անհանդիստ նայում էի չորս կողմս: Բոլոր ժամանակ ինձ այնպէս էր թւում, թէ լետեիցս վաղում են, ինձ հասնել են ուղում, և միայն այն ժամանակ ազատուցայ այդ անախորժ զգացմունքից՝ երբ ոտքս ներս դրի Գալիանէի բնակարանի շեմքով: Ամենքը արդէն հաւաքուած էին և ճաշի էին նստում: Հիւրերի թւում կային մայրս, բժիշկ Ակումեանը և մի քանի ուրիշ մօտիկ ազգականներ: Ինձ տեսնելով՝ ամենքն էլ սրտանց ուրախացան. ազգականներիցըս մի քանիսը իմ մարդու գնալուց լետոյ առաջին անգամն էին տեսնում հետս: Ես ներողութիւն խնդրեցի, որ ուշացել էի:

—Սո՛ւս կաց,— ձեռքով բերանս փակեց Գալիանէն և քիչ մնաց խեղդէր ինձ իւր գրկում: Ուրախութիւնից չէր իմանում թէ ինչ տեղ նստեցնէ ինձ:—Յրեակայել չես կարող, Մարիամ, թէ որքան վշտացայ՝ երբ լուս կտրուեց, որ քեզ այսօր ճաշին ինձ մօտ կտեսնեմ. ահա այժմ ինձ համար իսկական տօն է:

Գեսսերտի ժամանակ հիւրերը, առատութեամբ խմած զինու ազդեցութեան տակ գտնուելով, աւելի սրտաբաց եղան և խօսք բաց արին ամուսնուս ու նրա մօր մասին. սկսեցին լանդիմանել նրանց,

որ ձգտում են իրանց ունեցած կարողութիւնից աւելի ճոխ ասլրել: Յետոյ ամուսնական խնդիրը շօշափելով՝ սկսեցին պախարակել այն կանանց, որոնք չզփտեն անտրտունջ հնազանդել իրանց ճակատագրին, որքան էլ ուղում է դառն լինի այդ ճակատագիրը:

Այնոջը վիճակուած է համբերել և համբերել. նա ուրիշ ելք չունի. սակայն լետոյ, այն աշխարհում նա կտանայ իւր վարձը,—արտասանեց իմ հանդէպ նստած քեռիս, ցաւակցական հայեացք լսուելով վրաս: Մայրս ծանր հառաչեց:

—Ո՛չ, ներողութիւն կանէք. ես որ լինէի՝ երբէք չէի համբերի,— հակաճառեց Գալիանէն:— Թէ ինչ է սպասում մեզ այն աշխարհում՝ ես այդ չզփտեմ. բայց այն աշխարհումս ես ամեն միջոցներ գործ կզնէի, որ ազատուեմ ամուսնուս բռնակալութիւնից, եթէ ինձ էլ վիճակուէր, իհարկէ, այդպիսի մի տարաբախտութիւն:

—Օ՛, ո՛վ չզփտէ, որ դու մի քաջ սղամարդ ես կնկայ չորում: Եւ ահա հէնց այդ պատճառով է, որ վախենում են քեզ կին առնել, և դու մինչև այժմ, պառաւ կոյսի պէս, տանն ես նստած,—ասաց քեռիս, չփելով Գալիանէի ուսը:

—Եւ կնստիմ, կնստիմ, մինչև որ գտնեմ այնպիսի մարդ, որն ինձ վրայ նայէ որպէս իրան հաւասար մի էակի վրայ:

Այդպէս մի ատեր, Գալիանէ ջան, դա բձաւ

նորան իւր մայրն լալկան եղանակով:—ձակատիզ  
 գրուածը չես ջնջի. ամուսնական գործերը վճռու-  
 ւում են այնտեղ, երկնքում, — ազգու կերպով ա-  
 լելացրեց նա, աչքերը վեր բարձրացնելով:

«Հեղութիւնը կնոջ առաջին արժանիքն է, —  
 հաստատեցին մի քանի ձայներ:

Մայրս դարձեալ հառաչեց: Սաստիկ մեղքա-  
 եկաւ նա: «Ամեն տեղ, թէ այս գասակարգում և  
 թէ ամուսնու շրջանում, տիրապետում է միևնույն  
 կարծիքը ընտանեկան կեանքի մասին, ամենքը և  
 ամեն ինչ ամուսնու կողմն է», — անցաւ իմ մտքով:

Երկար դեռ խօսում էին այդ նիւթի մասին, և  
 թէպէտ խօսակցութիւնն ընդհանուր բնուորու-  
 թիւն էր կրում՝ սակայն ձեռքի շարժումներից և  
 ինձ վրայ լսուած հայեացքներից ես հասկացալ, որ  
 ազգակիաններս շատ բան իմանալով իմ ներկայ  
 կեանքից՝ աշխատում էին ինձ հաշտեցնել այդ  
 կեանքի հետ:

Միայն Գալիանէն և Ակումեանն էին, որ ի-  
 րանց կարծիքներով ու հայեացքներով կարծես  
 ուզում էին զարթեցնել իմ մէջ բողոքող և զիմա-  
 դրող ոգի: Աերջինս մինչև անգամ կրակ կտրեց և  
 դրանով ընդհանուրի զարմանքը շարժեց, երբ  
 խօսք բացուեց տիկին Մամուլովայի մասին: Նա  
 սկսեց անողորմ կերպով պախարակել նրան և այս-  
 պէս վերջացրեց իւր խօսքը. «այդ խարդախ կինը  
 որեւէ արխատկրատի սիրտը չահելու համար պա-

տրաստ է ոչ միայն իւր մերձաւոր մարդուն ծախել,  
 այլև սեփական հոգին գրաւ դնելը»:

Գծուար չէր գուշակել, որ տիկին Մամուլովայի  
 այնչափ աշխատելը և ինձ ամուսնացնելու գործը  
 զլուխ բերելը նա ուղղակի ոճրագործութիւն էր  
 համարում: Թէև ինձ համար շատ ծանր էր լսել  
 Քրիստափորի ասածները՝ բայց ես միանգամայն  
 համաձայն էի նրա հետ: Տիկին Մամուլովայի բնա-  
 ւորութեան մէջ եղած ստոր հակումները վաղուց  
 արդէն հակակրելի էին դարձրել նրան իմ աչքում:  
 Զարմանում եմ, թէ ինչպէս առաջ, կարծես բոլո-  
 բովին կախարդուած, ես ամբողջապէս գտնուում էի  
 այդ կնոջ ձեռքում: Ժամի վեցին, երբ հիւրերը  
 ցրուեցին՝ ես, Գալիանէն և Ակումեանը նստեցինք  
 սեղանատանը, թախտի վրայ: Ծուտով մեզ ընկե-  
 րացաւ նաև մայրս, որին ես նստեցրի իմ կողքին  
 և անվերջ փաղաքշում էի: Նա շատ գոհ և ուրախ  
 էր երևում: Սն լիչեցի կուսական կեանքիս տարի-  
 ները և, առանց մտածելու այն մասին, թէ ինչ է  
 սպասում ինձ տանը՝ անձնատուր եղալ սրտիս  
 տիրած քաղցր ու թեթևացուցիչ զգացումներին:  
 Ուրիշ շատ հարցերի թուում ես ու Գալիանէն շօ-  
 շափեցինք և այն հարցը, թէ ինչ կերպ պէտք է  
 դուրս գալ այնպիսի մի ստորադրեալ գրութիւնից,  
 որը մարդուն զրկում է սեփական արժանիքի զի-  
 տակցութիւնից: Քրիստափորը նկատեց, որ ազատ,  
 անկախ գոյութեան ամենալաւ միջոցը — աշխա-

տանքն է, որ աշխատանքը բարձրացնում է մարդու բարոյական մակերևութը և քաջալերելով նրան՝ միջոց է տալիս դուրս գալու ծանր ու դժուարին դրուժիւնից: Մինչդեռ անգործութիւնը, բթացնելով մարդու մէջ մի սրեւէ հարց առողջամտութեամբ քննադատելու ընդունակութիւնը՝ ամենակործանիչ և կորստարեւր ազդեցութիւն է ունենում մարդու ամբողջ կեանքի վրայ:

— Բայց ո՞վ է աշխատանքի անընդունակը, — պահամայից դուրս թռաւ իմ բերանից:

Քրիստափորն հասկացաւ, որ ես ինձ եմ ակնարկում: Նա մի տխուր ու տարակուսալի հայեացքով օտքից-գլուխ նայեց ինձ վրայ և լռեց: Պայլանէն անբաւական մնալով, որ ինձ վրդովեցին՝ աշխատում էր խօսակցութեան նիւթը փոխել, բայց ես մի քանի բողբոջ լետոյ կրկին վերադարձայ ստաջուայ հարցին: Նս, ի միջի ալլոց, ասացի Քրիստափորին, թէ ինչպէս լաճախ միտս եմ բերում նրան և միանգամայն իրաւացի եմ գտնում նրա այն կարծիքները, որ նա մի ժամանակ լաչտնում էր, ասելով թէ ստացած դաստիարակութիւնս կեանքի համար չէ պատրաստում ինձ, և թէ ինչպէս ցաւում ու զղջում եմ ես այժմ, որ այն ժամանակ ուշադրութիւն չէի դարձնում նրա խօսքերի վրայ:

— Այ՛ն, իմ բոլոր դժբախտութիւնն հէնց նըրանումն է, որ ես չունիմ ո՞չ հաստատ կամք, ո՞չ

բնաւորութիւն, — աչքերս արտասուակալած՝ վերջացրի խօսքս:

Պայլանէն ջերմ կարեկցութեամբ դէպի իրանքաչեց ինձ և համբուրեց գլուխս: Նս պինդ հպուսեցի նրա կրծքին, ազահութեամբ հանդիստ փնտռելով այնտեղ: Մալրս, որ առնւայ լեզուն լաւ չէր հասկանում, տարակուսանքի մէջ էր, թէ ինչո՞ւ սիրոս վրդովեցին: Նս շտապեցի մխիթարել նրան: Պայլանէն և Ակումեանն ամեն կերպ աշխատում էին սիրտ տալ ինձ, ասելով որ ես դեռ ջահէլ եմ, որ շատ բան կեանքիս մէջ կարող է փոխուել, միայն թէ պէտք է ամեն ճիղ գործ զննեմ չաղթելու իմ ընածին երկչոտութեանը: Նրանց խօսքերը հանգստացրեցի ազդեցութիւն էին անում ինձ վերայ: Ութ ժամին եկան Պայլանէի ընկերուհիները: Սկսուեցին նուազածութիւն, երգեր և զանազան զրաւախաղեր (Փանտ): Ընդհանուր ոգևորութիւնն ինձ էլ ուրախ կերպով տրամադրեց: Միայն տասնուհին ժամին մտաբերելով, որ տուն գնալու ժամանակ է՝ ես զարմացայ, թէ ինչո՞ւ մինչև այժմ մարդ չէին ուղարկել իմ լետից: Նոր միայն Պայլանէն խոստովանեց, որ ժամի ութուկէսին կառք ու սպասաւոր էր եկել մեր տնից, բայց ինքը լետ էր դարձրել նրանց, ասելով որ ինքն ինձ ճանապարհ կձգէ մինչև տուն: Հոգեկան տրամադրութիւնս խկույն փոխուեց: Պայլանէն, ըստ երևութիւն, կարողաց դէմքիս վրայ այն երկիւղը, որ ինձ էժան չէ

նստի իմ ուշանալը, և արդէն զղջում էր իւր ա-  
րած այդ ինքնազլուխ կարգադրութեան համար:  
Գիշերը պայծառ ու խաղաղ էր: Ես ցանկութիւն  
լաշտնեցի ոտով գնալու, թէն ճանապարհը փոքր  
ինչ ցեխոտ էր: Լուսնեակ գիշերին, ազգականներին  
հետ զբօսանքի ելնելը մի արտասովոր երևոյթ էր իմ  
կեանքում: Ես մանկան նման զուարճանում էի և  
հիանում ամեն մի չնչին բանից, որ պատահում էր  
մեզ ճանապարհին: Չափազանց գոհ սրտով տուն  
գալով՝ ես ներսի սանդուխով բարձրացայ քնած  
երեխայիս մօտ, մի հինգ րոպէ մնացի մօտը՝ աչք  
չսրկելով երեխայից, լիտոյ զգուշութեամբ համբու-  
րեցի նրա փամփօղկ թաթիկները և իջայ սենեակս,  
մխիթարելով ինքս ինձ այն լոյսով, որ շուտով  
նրան էլ կփոխադրեմ ներքև: Վաղուց ես իմ մէջ  
այդպիսի եռանդ ու աշխուժ չէի զգացած՝ ինչպէս  
որ այդ գիշերը: Անկողնում պառկած՝ երկար մտա-  
ծում էի Գայիանէի և Քրիստափորի մասին. ինձ  
թուաց, թէ նրանք համակրում են միմեանց, և ես  
ի սրտէ բախտաւորութիւն ցանկացայ երկուսին էլ:  
Մտածմունքներս ընդհատեց ներքև իջնող սկետուրս,  
որ սկսեց հարցութիւն անել իմ մասին Սալամէ  
աղայինիս. սա պատասխանեց, որ ես արդէն պառ-  
կել եմ քնելու: Տեղեկանալով, թէ ո՞վ է ինձ տուն  
ճանապարհ ձգել՝ նա մի քանի վիրաւորական  
խօսքեր արտասանեց իմ հասցէին: Սրտախռով  
սպասելով հետեւեալ օրուան՝ ես երկար ժամանակ

քնել չկարողացայ: «Փչացրեց նա իմ այսօրուան  
օրը. չթողեց որ քաղցր քնեմ քաղցր անց կացրած  
օրուայ տպաւորութիւններն տակ», — նեղանում  
էի ես:

12 լուսնուրի.

Հետեւեալ առաւօտը, Գայիանէի մօտ անցու-  
ցած այն ախորժալի օրից լիտոյ, առաւօտեան  
սուրճի ժամանակ ես ենթարկուեցայ խիստ լանդի-  
մանութեան: «Մի որեիցէ Գայիանէ Պօղոսեանին  
ասնաք սազ է գալիս գիշերները, ում հետ ասես,  
քաշ գալ փողոցներում, բայց իշխանուհի Ատունու  
համար դա խալտառակութիւն է», — զայրացած չար-  
ձակուեց ինձ վրայ սկետուրս:

— Ա՛հ, մայրիկ, մեծ նշանակութիւն ունի ծա-  
գումը. ցեղական լատկութիւնները միշտ բուն են  
զրած մարդու մէջ: Սուս չէ ասում ուսուսկան ա-  
ռածը. «Ինչքան էլ գալիս կերակրես՝ նրա աչքը  
միշտ անտառը կնայի»:

Ուշադրութիւն չդարձնելով ամուսնուս ասած-  
ների վրայ՝ ես պաշտպան կանդնեցի Գայիանէին,  
ասելով, որ մեզք է այդպէս ցեխ ածել մի ազնիւ  
աղջկայ վրայ, որը եթէ ոչ բարձր՝ գոնէ ոչ մի  
բանով ցածր չէ նրանց շրջանի բոլոր աղջիկնե-  
րից, և որ, վերջապէս, մեզ հետ միասին էր նաև

իմ մայրը: Իշխանուհին ու որդին իրար երես նայե-  
լով՝ ըստ երևույթին շատ զարմացան իմ այդ հա-  
մարձակ պաշտպանութեան վրայ:

— Գատարկ բաներ ես դուրս տալիս: Մի լաւ  
միտք արա, թէ ինչ կասեն մարդիկ, տեսնելով քեզ,  
միջորակիցէ ուսուցչուհու կամ դերձակուհու նման,  
ցեխոտ փողոցներում քաշ գալիս, — արտասանեց  
ամուսինս սաստիկ վրդովուած: — Ժամանակ է, տի-  
կին, որ ձեր մտքում պինդ դրոշմէք, թէ ինչ կոչ-  
ման տէր էք և ինչ զատակարգի էք պատկանում  
դուք այժմ, — աւելացրեց նա ֆրանսերէն:

— Օ՛, տաշաբախտաբար, ես այդ շատ լաւ եմ  
մտքումս դրոշմած, — դուրս թուաւ չանկարձ բերա-  
նիցս:

Իշխանուհին ուսերը վեր քաշելով և մի բաղ-  
մանչան հայեացք ձգելով որդու վրայ՝ կարծես թէ  
ասում լինէր. «Հը՛, ինչպէս է, արդարացի չէի ես.  
նա բոլորովին կանրարոյականացնէ քո կնոջը»:

Ամուսինս աչքերն ահարկու կերպով չառեց  
վրաս:

— Ես բոլորովին արգելում եմ քեզ տեսնուել  
քո այդ... Ի՛նչպէս է նրա անունը... Գալիանէ է,  
ինչ է... քո այդ Գալիանէի հետ և առհասարակ  
խորհուրդ եմ տալիս քեզ կտրել ամեն տեսակ չա-  
րաբերութիւն կինսօ-մինսօնների հետ, որովհետեւ  
այդ պահանջում է մեր տան պատիւը, — համարեա

փրփուրը բերանին տեղից վեր թռչելով՝ աղաղա-  
կեց նա:

Այդ բոպէին ամուսնուս մէջ չկար այն վայել-  
չատկութեան նշույն անգամ, որն այնպէս դիւ-  
թում էր ինձ մեր ծանօթութեան առաջին օրե-  
րում և որով նա զիտէր աչքի ընկնել հասարակու-  
թեան մէջ: Ես ուղեցի պատասխան տալ, բայց  
աչքս զցելով նրա երեսին՝ կարծես տեղնուտեղը  
քար կտրեցի: Ամուսնուս ամբողջ երեսի արտա-  
ջատութիւնն այնպիսի մի կատաղի, գաղանալին  
տեսք էր ստացել, որպիսին ես դեռ մինչև այդ օ-  
րը տեսած չէի: Սկեսուրս գո՛հ մնալով իւր արժա-  
նաւոր որդու վարմունքից՝ չարախնդութեամբ  
նայեց ինձ վրայ: Յետոյ նախազգուշացրին ինձ,  
որ առանց հարցմունքի տնից դուրս չգամ:

— Միտք պահիր ասածներս, Marie, ապա թէ  
ոչ հակառակ դէպքում ես կզիմեմ հարկաւոր մի-  
ջոցների. դու դեռ ինձ չես ճանաչում, — արտասա-  
նեց ամուսինս, պլպլացնելով իւր խոշոր, կլորակ  
աչքերը:

— Ես չեմ վախենում քո սպառնալիքներից,  
— վրդովուած գոչեցի ես,

— Բայց ես քեզ կստիպեմ վախենալ, — բղաւեց  
ամուսինս:

Այդ բոպէին սեղանատուն մտաւ սպասաւորը:  
Չուղեմալով նրան ականատես դարձնել այդ խալ-  
տառակ տեսարանին՝ ես լռեցի և հեկեկանքս հա-

զիւ զսպելով՝ դուրս եկաւ սեղանատնից: Ես ոչինչ չէի տեսնում իմ առաջ՝ բացի այս խօսքերից. «Գե-  
րի, գերի ես դու»: Այդ խօսքերը կրակի տառերով էին նկարուած իմ աչքերին:

— Այո, պէտք է վերջ տալ նրա աղգական-  
ների հետ ունեցած մեր լարաբերութիւններին. պէտք է նրանց ոտը կտրել այս տնից, — իմ լետե-  
ւից լսեցի ես ամուսնուս ձայնը:

Հէնց նոյն օրը ես իմացաւ ծծմօրից, որ իշ-  
խանուհին հրամայել էր իւր աղախին Պաշային՝ ոչ սքի ներս չթողնել իմ սենեակն առանց նրա գիտութեան: Այդ բոլորն այն աստիճան տակնու-  
վրայ արաւ հոգիս, որ ես փակուելով ննջարանու-  
մբս՝ ամբողջ օրը լաց եղաւ: Աչքերս այրում էին, կարծես մէջը կրակ ածած լինէին. սիրտս ճմլում էր մի անպատմելի թախիծ: Ես չզնայցի վերև ոչ նախաձայնին, ոչ էլ ձայնին: Բացի առաւօտեան խմածս լոկ սուրճից, ես ոչինչ չէի առել բե-  
րանս: Երեկոյեան, մօտ ինը ժամին, փոքր ինչ հանդարտուելով, խնդրեցի պահարանապետին, որ մի բան տալ ուտելու: Նա կոշտութեամբ մերժեց, ասելով որ ճաշից ոչինչ չէ մնացել: Սպասաւորի այդ վարմունքը սարսափելի գրգռեց ինձ, բայց ես ցոյց չտալով վրդովմունքս՝ լսեցի և գնացի սե-  
նեակս: Իմ աղախին Սալօմէն, որ մարդու գնալուս օրից ծառայում էր ինձ, լսելով պահարանա-  
պետի պատասխանը՝ կրակ կտրած լարձակուեց:

նրա վրայ: Նա սկսեց կշտամբել, թէ ինչ ասել է ինձ համար ուտելու: Բան չգտնել մի ընտանիքում՝ ուր ես ահագին օժիտ եմ բերել, թէ ես մեծացել եմ այնպիսի մի տնում, ուր մուրայկանին անդամ քաղցած չէին թողնում, ուր մնաց թէ ինձ պէս քնքով պահուած ու գուրգուրած մի կակին: Եր-  
կուսն էլ տաքացան, վէճ բացին և քիչ մնաց բանը թակուջարդի հասնէր: Սկեսուրս տանը չէր: Այս ժամից լետոյ Սալօմէն մատուցարանի վրայ դար-  
սած՝ բերեց ինձ համար պանիր, խաւիար, կար-  
կանդակներ և մի շիշ գինի: Ինչպէս նա բացա-  
տրեց՝ այդ բոլորն ահագին կուռով ու նախատինք-  
ներով էր ստացել: Ես լուրջ կերպով նկատողու-  
թիւն արի աղախինս, նրա բարձրացրած աղմուկի համար: «Ճան, ինչպէս չէ. ես կթողնեմ նրանց, որ ձեզ հետ աղպէս վարուեն, ձեզ բանի տեղ չգնեն», — սրտմտած պատասխանեց Սալօմէն, զօռելով, որ ես բան ուտեմ: Ես երախտագիտական զգացմունքով նայեցի բարեսիրտ վրացուհուս վրայ: «Տէր Աստուած, ինչ օրն եմ ընկել, որ մխիթարութիւն Աստուած, ինչ օրն եմ ընկել, որ մխիթարութիւն եմ գտնում աղախինս պաշտպանութեան մէջ. բայց ես ուրիշ էլ ո՛վ կար կողքիս, որ պաշտպանէր ինձ: Օ՛, որքան ծանր է ապրել այնտեղիս երեսին: Զգում եմ, որ վաղը մի նոր փոթորիկ կձայնէ գլխիս»:

14 յունուարի.

Նախազգացումս չխաբեց ինձ: Երէկ առաւօտեան պահարանսպետը դանդատուելով իշխանուհուն իմ աղախնի վրայ՝ խնդրեց, որ իւր հաշիւը տեսնեն, որ ինքն էլ մնալ չէ ուզում, որովհետև աղախնիս հետ մի լարիկի տակ ծառայելն անհնարին է համարում: Սկեսուրս, ինչպէս և սպասում էի՝ դուրս արեց Սալօմէին: Խեղճ վրացուհին լալով և չուսահատ ծունկ չոզեց առաջիս, ասելով, որ բացի ինձանից նա ուրիշ տիրուհի ձանաչել չէ ուզում: Շատ էի մեղքանում նրան, բայց քնչ անէի. ես ինձ անզօր էի զգում հակառակ գնալ իշխանուհու տնօրինութիւններին: Միթէ ինձ համար հեշտ էր այդ ծանր վիճակում բաժանուել իմ բարի վրացուհուց: Չէ՞ որ նա մատղաշ հասակից ծառայելով ծնողներիս տանը՝ ամբողջ սրտով կապուած էր բոլորիս հետ: Սալօմէի հեռանալուց լետուց, ծառաները, որոնք առանց այն էլ պատկառանքով չէին վերաբերում գէպի ինձ, այժմ ամեն անգամ, երբ անցնում էի նրանց մօտով՝ չարախիտը ծաղրով էին նայում ինձ վրայ: Ես իսկապէս նրանց չէի մեղադրում. քնչ լաւ բան կարելի էր սպասել ծառաներից այն ամենից լետուց՝ ինչ որ տեղի էր ունենում մեր տանը: «Աստուած իմ, մինչև երբ պէտք է շարունակուի իմ այս ստորկական դրութիւնը»: Ծծմայրը մտնելով սենեակս՝

ասաց ինձ, որ իշխանուհին դուրս գնաց տնից: Իսկոյն հասկանալով ինձ համար կախարդական դարձած այդ խօսքերի իմաստը՝ ես վազեցի վեր, իմ թանկագին ղաւակի մօտ: Հիացած նրա փոքրիկ ժպտուն երեսից և գէպի ինձ պարզած փափլիկ թաթիկներից՝ ես երկար ժամանակ չէի հեռանում նրա օրօրոցից, մինչև անգամ երբ նա արգէն քնով էր անցած: Իմ դրութիւնն ինձ թըւաց նման այն բանտարկեալի դրութեան, որին սրտացաւ պահապանը մի լալանի, օրէնքով արգելուած ծառայութիւն է մատուցանում: Աս անսահման շնորհակալ էի իմ բանտի պահապանից, բանձին ազնիւ ծծմօր, որ միջոց էր տալիս ինձ նստելու մանկիկիս կողքին. նա էր այժմ իմ միակ բախտն ու երջանկութիւնը, որ բաժին էր ընկած ինձ: Պիշերուայ մէկ ժամն էր, երբ ես իջալ ներքին: Ամուսինս, ըստ սովորականին, դեռ չէր վերադարձել տուն: Իսկ երէկ լուսաբացին միայն տուն գալով՝ նա երկար անցուդարձ էր անում իւր սենեակում: Ննջարանիս դուռը բաց լինելով՝ ես նրա քայլուածքից և ականջիս հասնող կցկտուր խօսքերից, որ արտասանում էր ինքն իրան՝ զըլխի ընկալ, որ նա թղթում տանել է տուել, սաստիկ լուզուած է և դժուարանում է որեէ տեղից փող ճարել: Այդ բանն այժմ շատ քիչ է հետաքրքրում ինձ: չէ՞ որ որդիս ապահովուած է, իսկ մնացեալ բաների հետ ես գործ չունիմ:

բիւն քամք սյոյր միջոցմ 20 յունուարի. բառաւ մարտիրոսայի զանա՞ ձմի խոյամարտա՞ միջոյս զի վերջապէս, երեխաս առողջացաւ: Նա հիւանդացաւ հինգ օր առաջ: Ես սարսափելի վախեցայ, թէպէտ և բժիշկը հաւատացնում էր, որ երեխայի հիւանդութիւնը ոչ մի լուրջ բան չէ ներկայացնում և որ դա առամիերի դուրս գալուցն է: Ոչ մի բոպէ չհեռանալով իմ անգին մանկիկիս մօտից և նրա տաք-տաք թաթիկները ձեռքերիս մէջ բռնած ունենալով՝ ես նուազած սրտով ալկանջ էի դնում նրա ծանր շնչառութեանը:

Վիեսուրս, որ չաճախակի մտնում էր մանկանոցը՝ ամեն անգամ ստիպում էր ինձ հեռու նըստել երեխայի օրօրոցից, որպէսզի նրա համար ծծելու օգ շատ լինի: Վրայ հասաւ գիշերը: Խշխանուհին առաջարկեց ինձ ներքև դնալ, որովհետև, նրա կարծիքով, երկուսիս համար մի առանձին գործ չկար երեխայի ննջարանում: Ես կտրական կերպով յայտնեցի, որ երեխայի մօտից չեմ հեռանալ, մինչև որ նա առողջանայ: Վիեսուրս սաստիկ ընդդիմանում էր, մինչև որ ամուսինս, խիստ անհանգստացած որդու հիւանդութեամբ՝ վերջապէս, անցաւ իմ կողմը: Այդ գիշերը նա անից դուրս չեկաւ: Միւս առաւօտեան ամուսինս, տեսնելով իմ յոգնած ու հիւժուած կերպարանքը և ցաւելով վերաս՝ շատ խնդրեց ինձ, որ մի քիչ հանգստանամ: Ես փորձեցի լսել նրա խօսքը, բայց աչքիս քունք

չէր գալիս: Երկու օր ու գիշեր երեխան սաստիկ տաքութեան մէջ էր. վերջապէս երբորդ օրը տաքութիւնն սկսեց իջնել, և երեխայի դրութիւնը թեթևացաւ: Ես շարունակ մտածում էի երեխայիս կատարելագոյն առողջանալու մասին. ես ապրում էի միմիայն այդ մտածմունքով. իսկ մնացեալ ամեն ինչը կեանքիս մէջ վերջին տեղն էր բռնել: Երեխայիս առողջանալովն ես աւելի քան երբևիցէ զգացի, որ առանց նրան ապրել չեմ կարող և որ, ինչ ուզում է լինի՝ նրան անպատճառ պէտք է ներքև փոխադրեմ: Ծծմարին հրամայեցի, որ նա ժողովէ երեխայի բոլոր իրերը. բայց նա, կարծես, զետնին մեխուած՝ տեղից չէր շարժուած: Այն ժամանակ ես ինքս ձեռք զարկի գործին: Շաապով կապոց կապոցի լետեից տանելով ներքև՝ հրամայեցի մեր դռնապանին, որ օրօրոցը սանդուխով ցած իջեցնէ: «Շը՛, ինչ է, Գանրեա. դու այժմ էլ չես հաւատում ինձ»,— դարձաւ ես ծծօրը, երբ ամեն ինչ արդէն արուած, պատրաստ էր և մնում էր միայն երեխային ցած բերելը: «Անւ բան չի դուրս գալ՝ ձեր արածից, իմ թանկագին իշխանուհի»,— արտասուքն հազիւ զսպելով՝ պատասխանեց Գանրեան և ահուզողով նայեց չորս կողմը: Տեսնելով որ նա տեղից չէ շարժուած՝ ես վեր առայ թախտի վրայից ծիծաղող մանկիկիս և ինքս տարաւ ներքև: Այն ժամանակ միայն ծծմարը հետեց ինձ: Գրքուար չէ երեւակայել, թէ ինչ աղմուկ բարձրացաւ



կարեկցութիւնը՝ յորդորում, համոզում էր, լանուն պատուիս ու արժանիքիս, թողնել ամուսնուս և գալ, ապրել մօրս հետ: Նրա յորդորներն ու խորհուրդներն ինձ թուացին անիրագործելի: Այլազնն իմ լետեից, վրալ կհասնեն, կսպանեն ինձ... այս և սրանց նման շատ մտքեր, մէկը միւսից ստակալի, կայծակի արագութեամբ, շողացին իմ բորբոքուած երեակալուծիան մէջ: Ակերջապէս մթթէ կարող էի ես թողնել իմ պաշտելի դաւակին, որ միակ շունչ ու կեանք տուողն էր ինձ: Գալիանէն կարծում է, որ ինձ կխղճան և վերջիվերջոյ դաւակն էլ կտան: Կ'ընչպէս չէ... Ս', նա չէ ճանաչում նըրանց. աւելի շուտով սարը սարին կմիանայ՝ քան թէ նրանք երեխաս ինձ կտան: Ասենք թէ ես համաձայնէի տեղափոխուել մօրս մօտ, բայց դեռ հարց էր, դո՞ւ կլինէր նա արդեօք այդ բանից: Ես համոզուել էի, որ ինչպէս մօրս՝ այնպէս էլ իմ բոլոր ազգականներիս աչքում մարդուն թողնել վախճելը ամենամեծ չանցանքն էր կնոջ համար, թէկուզ այդ չանցանքին առիթ տուած լինէին ամենածանր և ամենալրդովիչ հանգամանքներ: Ուրեմն հեռու ինձանից անիրագործելի ցնորքներ, աւելի լաւ է իսկի չմտածել նրանց մասին: Գառն իրականութեան գիտակցութիւնն աւելի և աւելի ծանր ու ճնշող տպաւորութիւն է գործում ինձ վրայ:—Նրկրորդ նամակն Ակումեանիցն էր: Նա հաղորդում էր, որ թոշակադրամ է հաւաքում մի տաղանդաւոր, աղքատ տղայի համար, որին դուրս

են արել գիմնադիւղից ուսման վարձ չվճարելու պատճառով, և խնդրում էր, որ ես էլ իմ լուսավորմանակից լինիմ այդ բարի գործին: Յետոյ նա գրում էր, որ մի քանի օր առաջ եկել էր ինձ մօտ խօսակցելու հետս մի բարենպաստակ գործի մասին, որին ես կարող էի եռանդուն աջակցութիւն ցոյց տալ, բայց նրան չէն ընդունել: Նամակի վերջում Ակումեանը հարցնում էր, թէ որտեղ և երբ կարող է տեսնուել ու խօսել ինձ հետ:

«Ոչ մի տեղ և երբէք», խորին զայրութով շեշտեցի ինքս ինձ: «Մթթէ բանտարկեալները իրաւունք ունին իրանց կամքի և ժամանակի տէրը լինելու»:

Ես դուրս նայեցի լուսամտից. անցորդներից ամեն մէկը գրաւում էր իմ ուշադրութիւնը: Նրանք ամենքն էլ, նոյն-իսկ այն մրգավաճառ կինտօն, որ ուրախ ու անհոգ, ձէնը գլուխը գցած, իւր ապրանքի գովասանքն է անում՝ աւելի բախտաւոր են երևում, քան թէ ես: Ես սկսեցի նախանձով նայել ազատ մարդկանց վրայ: Յաճախ միտս է գալիս իմ վիճաբանութիւնը Քրիստափորի հետ, որ մի ժամանակ աշխատում էր հաւատացնել ինձ, որ վշտից տառապող մարդկանց ուրախութիւն է պատճառում ուրիշներին դժբախտութիւնը, մանաւանդ մօտիկ մարդկանց դժբախտութիւնը: Մի-երկու տարի սրանից առաջ աւելի քան տարօրինակ էր թւում ինձ այդքան եռասիրութիւն

ենթադրել մարդկանց մէջ. ես այն ժամանակ դժգոհութեամբ և դաշտութեամբ վերաբերուեցի երիտասարդի խօսքերին. բայց այժմ տեսնում եմ, որ այդ խօսքերի մէջ շատ ճշմարտութիւն կայ: Նորերս տիկին Մամուլովայից լսեցի, որ իմ մօտիկ ծանօթ աղջիկներից մինը շատ անշաղոյ կերպով մարդու է դնացել. յետոյ նա պատմեց, որ դրանից էլ աւելի վատթար վիճակի է հանդիպել իմ մօտիկ մի աղջականուհին: Այդ երկու լուրերն էլ ուրախութեան պէս մի բան առաջացրին սրտումս: Ամօթով պէտք է խոստովանեմ, որ իմ հասակակից աղջիկեանց այդ դժբախտութիւնը միտիթարութիւն պատճառեց ինձ: «Ուրեմն մենակ ես չեմ տանջուում», — ասում էին ինքս ինձ: Այ՛ո, այս վերջին ժամանակ չարութեան զգացմունքը կարծես բուն է դրել սըրտումս: Լինում են այնպիսի բուպէներ, երբ ես փափաղում եմ, որ մահը չանթէր իմ սկեսս:

Օ՛, Աստուած իմ, ներիր ինձ, տարաբախտութիւնն ձեռ սիրտն ասես չարութեամբ չէ լցնում: Բայց մթթ է ես այդպէս էլ առաջ: Ես ամենքին բարիք էի ցանկանում, չարիքը ինձ համար գոյութիւն չունէր, ամեն ինչ իմ աչքին փալլուն ու վարդաշող էր երևում: Ահա հէնց այժմ էլ ես պատրաստ եմ, ես ընդունակ եմ ներել բոլորը, բոլորը միայն թէ զգալի, տեսնելի դէթ ապագայ ուրախութեանս մի նշույլ... է՛հ...

Պէտք ունեցի գրիմ այդ մասի մաս 28 տեսնարի. այդ օրինակով բարբառս աչքի մ զ ի Աստուայար ամ Այսօր ձեռքս ընկաւ Քրիստափորի նամակը. նրա խնդիրքը — օգնելու աղքատ, տաղանդաւոր տղային՝ ինձ մտածմունքի մէջ դցեց: Բոլոր ճինք, անցածը նորից պատկերացաւ երևակալութեանս մէջ և տասն անգամ աւելի դեղեցիկ ու հրապուրիչ երևաց աչքիս: Այսօրուայ պէս միտս է գալիս, ինչպէս Ակումեանը բժշկական գիտութիւնը աւարտելով՝ առաջին անգամ եկաւ մեզ մօտ, շնորհակալութիւն չարտնելու հօրս. ինչպէս ես ու տիկին Մամուլովան մենակ մնալով՝ սկսեցինք ծաղրել նրա ամաչկոտութիւնը, անձոռնի շարժմունքները, ձեւերը և մաշտած, հնացած հագուստը: Արպիսի չիմարութիւն էր մեր արածը և որքան բարձր, անչափ բարձր էր կանգնած նա մեր բոլորիցս: Միշտ աշխատող և միշտ պատրաստ օգնութեան հասնելու ամեն մէկին՝ Քրիստափորը փափագում էր գործի կաշել: Իմ հօր միջնորդութեամբ նա շատ շուտով ստացաւ դաւ ուսկան կրտսեր բժշկի պաշտօն, որ մինչև այժմ էլ կատարում է ամենայն բարեխղճութեամբ:

Ա՛խ, ինչո՞ւ ես մարդու չգնացի Ակումեանին. նա այնքան բարի ու աղնիւ է: Նրա հետ, անտարակոյս, ես բախտաւոր կլինէի: Երբ Վալիանէն, գովասանելով նրան, զանազան ակնարկութիւններով հասկացնել էր ուզում ինձ, թէ ինչքան լաւ

կլինէր, եթէ Ակումեանին կեանքիս ընկեր ընտրէի՝  
ես զայրանում էի և միշտ ապագայ ամուսնիս երա-  
զում էի հէքիաթական մի հերոս: Իսկ այժմ ես  
նախազգում եմ, որ քեռուս աղջիկն ինքը մարդու  
կգնայ Ակումեանին, և նրանք, անկասկած, բախ-  
տաւոր կլինին: Ահա հէնց այժմ էլ նախանձի պէս  
մի բան ճմուռ է սիրտս: Հեռու ինձանից անար-  
ժան զգացումներ... Ես նրանց երկուսին էլ ի սըր-  
տէ ցանկանում եմ ամենայն բարիք. նրանք ար-  
ժանի են դրան:

Ես երբէք չեմ մոռանալ, թէ որպիսի անձ-  
նուիրութեամբ Քրիստափորը խնամում էր իմ հի-  
ւանդ հօրը: Ամբողջ երկու ամիս նա գիշեր-ցերեկ  
հանգիստ չուներ: Ասեմք, Քրիստափորը շատ բա-  
նով պարտական էր հօրս. բայց միթէ երախտա-  
զիտական զգացմունքն այդքան արդէն չատուկ է  
մարդուս: Սակայն ես շեղում եմ իմ խօսքից:  
Սրտանց ցանկանալով Ակումեանի խնդիրքը կա-  
տարել՝ ես չիշեցի, որ ինքս կուպէկ փող չուներմ:  
Յանկարծ մի լաւ միտք եկաւ գլուխս, ես արագա-  
քալլ մօտեցայ հաշեւադարդ պահարանիս: Բանա-  
լով աչնտեղ պահուած փոքրիկ արկղիկը թանկա-  
զին ակնեղէններով՝ ես մտածմունքի մէջ ընկալ,  
թէ այդ զարդերից որը նուիրեմ աղքատ թոշակա-  
ւորի օգտին: Մի քանիսը նրանցից թանկ էին ինձ  
համար՝ իբրև անցեալի չիշատակներ, միւսներն  
ընծաներ էին, որ ստացել էի իմ մօտիկ աղգա-

կաններից: Մարգարիտներիս և աղամանդներս կէ-  
սից աւելին իմ ամուսինն արդէն գրաւ էր դրել:  
Նա մէկ թէ երկու ամսով միայն խնդրեց ինձանից  
այդ քարեղէնները, բայց ես երբէք ոչ մի ակնար-  
կով չէի չիշեցնում նրան այդ իրերի մասին և մըտ-  
քումս արդէն ձեռք էի քաշել նրանից: Հանելով  
արկղիկից թանկագին զարդարանքներիցս մէկը,  
որ ինձ համար մի առանձին նշանակութիւն չու-  
ներ՝ ես խնդրեցի ծծմօրը չանձնել այն Սալօմէին,  
որ նա, ինչքան կարելի է, չուտով ծախէ և ստա-  
ցած գումարը տալ Գալիանէին: Իսկ Քրիստափորին  
զրեցի, որ ամենայն ուրախութեամբ մասնակցում  
եմ բարի գործին և որ փողը նա չուտով կստանայ  
Գալիանէից: Երրորդ օրն իմացայ, որ մայրս հի-  
ւանդ է և կարօտել է ինձ: Այն ժամանակից, երբ  
նորան չալտնի եղաւ իմ վիճակը՝ ինձ համար շատ  
ծանր էր տեսնուել նրա հետ: Ես զգում էի, որ  
նա կսկսէ հարցուփորձ անել ինձ այս ու այն բա-  
նի մասին... Գիտէի, որ այդ բանը մեղ երկուսիս  
էլ վիշտ ու դառնութիւն կպատճառէ. իսկ տեսնել  
մօրս շարժարանքը—դա իմ ոյժեց վեր էր. իմ  
նեւորդերը չափազանց խանդարուած են: Սակայն  
մօրս հիւանդութեան լուրը և մանաւանդ այն զի-  
տակցութիւնը, որ իմ դժբախտ ամուսնութիւնը  
կարող է միանդամայն խորտակել մօրս առանց  
այն էլ թող աւողջութիւնը—այդ բոլորը մի ան-  
զսպելի ոյժով քաշում էր ինձ դէպի մայրս. սաս-

տիկ ուզում էի նրան տեսնել, ևս ամեն կերպ կաշխատեմ հանգստացնել նրան. կասեմ, որ Սալումէն շատ բան իրանից է աւելացրել: «Ա՛խ, սիրելիս...» գոչեցի ես, փաթաթուելով երէկ սենեակս մտնող տիկին Մամուլովայի վզով, որը հրաւիրուած էր մեզ մօտ հանդիսաւոր ճաշի: Ես այդ բոլորէն մոռացայ իմ ատելութիւնը դէպի նա և նրա վրայ նայում էի որպէս իմ փրկչի վրայ: Շախուշուխ հագնուած, դարդարուած սակիով ու աղամանդներով, տիկին Մամուլովան հիացած ու յափշտակուած էր այն մտքից, որ ինքը ներկայ է ընտրեալ հասարակութեան մէջ: «Մէկ շաբաթից աւելի է, որ իրար չենք տեսել — և անձ ինչպէս ես դու հանդիպում ինձ: Ի՞նչ է պատահել, ma chère, — անկարեկցութեամբ հարցրեց նա ինձ և մի քիչ չեա քաշուեց, որ ես արտասուքովս շփրջեմ նրա բաց-դոնի մետաքսեայ շորը: Նայելով տիկին Մամուլովայի զուարթ, ծիծաղկոտ դէմքին՝ ես համարեա համոզուած էի, որ նրա մէջ ոչ մի արձագանգ չեմ գրտնի իմ վշտին, բայց, ասում են, ջրում խեղդուողը ձեզիցն է բռնում, որ աղատուի: Գանգատուելով իմ վիճակից՝ ես խնդրեցի նրա պաշտպանութիւնը»: «Ա՛հ, էլի դու քո հին երգն ես երգում», — ձեռքերը շարժելով՝ դժգոհ եղանակով ասաց Մամուլովան: Յետոյ կոկոսելով հայելու առաջ՝ համարեա ուրախ ձայնով աւելացրեց. «Հաւատա՛, հոգեակս, ամեն բանում մեղաւորը ինքդ ես: Այե-

տուրդ ու ամուսինդ չեն ուզում, որ դու ծանօթ լինիս Գալխանէի և այն աննշան բժշկի հետ — չէ՛ էլ հարկաւոր: Միթէ նրանք քո շրջանին վայել մարդիկ են, կոչտ ու կոպիտ, անտաշ, fi done. Խղութ չէր, որ իմ սիրտը երբէք չէր կաշոււմ նրանց, իսկ դու նրանցից պոկուել չես կարողանում: Մէկ մօտեցիր հայելուն, նայիր վրայ, տես ինչի ես նման. որ աղամարդը կտիրէ քեզ այդ կերպարանքով: Իմ այն հակաճառութեան, թէ ուրախանալու ինչ ունիմ, տիկին Մամուլովան փոխանակ պատասխանելու, իւր անուշահոտ ձեռքով փակեց բերանս և ուժով ստիպեց, որ ճաշի համար չորս փոխեմ: Նա հանեց իմ հագուստեղէնի պահարանից դէմքիս աւելի սաղակնան մի շոր և իւր սեփական ձեռքով օծելով ու սնգուրելով ինձ՝ ստիպեց նաժիշտիս փոխել մազերիս սանրուածքն ըստ նոր մօղաչի: Ես, որպէս մի աւտօմատ, թուլ տուի, որ ամեն տեսակ օլիւններ խաղան զլիսիս և ժիւնդն ժամանակ մտածում էի. «Ի՞նչպէս այս կինը հասկանալ չէ կարողանում, որ ես զուգուել-կոկոսելու սիրտ չունիմ»:

— Ա՛յ, հիմա դու չքնաղ ու նազելի ես, Marie, — ծափ տալով բացադանչեց նա. — միայն թէ ուրախ ու զուարթ եղիր. ես ինձ վրայ եմ առնում հաշտեցնել քեզ ամուսնուդ հետ: Իսկ առայժմ, մինչև Միշէլի դալը դու նուագիր մի որևէ գողորիկ եղանակ կամ մի լալթական չուերդ, ինչպէս որ,

լիշում ես, առաջ էիր նուագում, երբ դու դեռ հարսնացու էիր...»

— Ա՛խ, ինձ թւում է թէ հազար տարի է անցել այն ժամանակից. այնքան նա նման չէ իմ ներկային, — ընդհատեցի ես տիկին Մամուլովայի խօսքը, հազիւ արտասուքս զսպելով:

— Ի՛հ, նուագիր մի բան, — դէպի իրան քաշեց ու համբուրեց ինձ տիկին Մամուլովան:

Նրա շրթունքներից ու աչտերից անտանելի կերպով զանազան օձանեկիքների հոտ էր փչում: Ես հրաժարուեցի մի բան նուագել: Այն ժամանակ նա ուժով քաշ սուեց ինձ դէպի դաշնամուրը և նստացրեց կլորակ աթոռի վրայ: Ես գարձեալ մեքենայաբար հնազանդեցի նորան: Ամուսնուս և սկեսուրիս հետ հաշտուելու ցանկութիւնը և այդ կերպով հիւանդ մօրս մօտ ազատ գնալ-գալու իրաւունք ձեռք բերելը ստիպեցին ինձ այդ բոլորին միանգամայն անձնատուր լինել տիկին Մամուլովայի կամքին, որովհետեւ, ինչպէս ինձ թւում էր՝ նա մի որոշ չափով ազդեցութիւն ունէր իմ հրամանատարների վրայ: Ես սկսեցի նուագել հոր մօդա ընկած վալսերից մէկը:

— Ա՛յ, այդ ես հաւանում եմ. վաղուց պէտք է այդպէս անէիր, թէ չէ տխուր արտում ման ես գալիս, կարծես անմխիթար որբակալի լինիս, — նուագելու ժամանակ ականջիս հասաւ ամուսնուս ձայնը, որ աննկատելի ներս էր մտել սենեակը:

Համբուրելով ձակատիցս՝ նա սկսեց զլխից մինչև ոտքը զննել ինձ և, ըստ երևոյթին, բաւական մը նաց թէ իմ արտաքինից և թէ իմ հագուստից:

— Այսօր Marie-ն շատ հետաքրքրական է, այնպէս չէ, իշխան, — չաղթանակ տարած բացագանչեց տիկին Մամուլովան, խշխշացնելով իւր շորը և անզաղար կոկեղով իրան:

— Մինչև անգամ հիանալի է, իսկոյն երևում է, Աննա Բօզդանովնա, որ դա ձեր շնորհքն է. Գուք պէտք է ստէպ-ստէպ խորատէք իմ կնոջը:

— Merci, իշխան, ձեր կօմպլիմէնտների համար. կաշխատեմ ուրախութեամբ, — կարծես և՛ խորհուրդով, և՛ վեր թռչելով, ստրկական համամակրանքով պատասխանեց նա: Այդ շարժումների ժամանակ տիկին Մամուլովայի փոքրիկ, հատուկ կաղմուածքը և լալն, պլպլան երեսն այնպիսի կօմիքական տեսք ստացան, որ ես ակամայ ժպտացի: Ութ և կէս ժամին, երբ որ հիւրերը ցրուեցին՝ ամուսինս փաղաքշաբար դառնալով ինձ՝ ասաց.

— Լաւ կանես, Աննա Բօզդանովնալի հետ միասին գնաս մօրդ տեսութիւն. նա իրան այնքան էլ լաւ չէ զգում. ես այսօր նրա մօտ էի:

Նստելով մեր սեփական կառքը՝ տիկին Մամուլովան ասաց ինձ. «Տեսնում ես, ոնց էր իմ ասածը. Հաւատա, որ նա աւելի բարի է, քան թէ քեզ թւում է. պէտք է միայն իմանալ հետք վարուելու ձեռք:

կաշառուած ամբողջովին մօրս շուտով տե-  
 սնելու մտքով ու փափագով՝ ես սչինչ չպատասխա-  
 նեցիւ կէս ճանապարհին տիկին Մամուլովան ձեռ-  
 քով քնքշութեամբ բռնելով իրանս՝ խնդրեց իւր  
 հետ միատեղ համոզել մօրս, որ նա փող պարտք  
 տայ իմ ամուսնուն: Ես հրաժարուեցի, ասելով որ  
 երբէք չեմ անհանդատացնի մօրս և որ առանց այն  
 էլ մայրս ու մօրեղբայրներս դեռ մինչև այժմ էլ  
 ինձ ներել չեն կարողանում իմ այն անհեռատե-  
 սութեան համար, որով վարուեցի ես սեփական  
 դրամապլխիս հետ: «Ա՛հ որ իմ երկու հարիւր հա-  
 զարից, որ տուել էի ամուսնուս՝ էլ կոպէկ չե  
 մնացեր»:

— Մեծ բան է, — կտրուկ կերպով ասաց տի-  
 կին Մամուլովան: — Չափազանց մեծ նշանակութիւն  
 ես տալիս դու քո գրօշներին: Փողը նրա համար է, որ  
 ծախսես. այդ միայն մեր վաճառականներն են, որ  
 պինդ նստած են իրանց սնդուկները վրայ:

— Ասենք այդ ալդպէս է, բայց էլի...

— Հերիք է, Աստուած սիրես, ասածներդ  
 մարդու ականջ են ծակում, — խօսքս կտրեց տիկին  
 Մամուլովան և իւր թանձր լօնքերը կխտեց: Մենք  
 այլևս ոչ մի խօսք չասացինք իրար: Ամուսնուս  
 երեկուայ ինձ ցոյց տուած բարեհաճ տրամադրու-  
 թեան մէջ ես դարձեալ նկատեցի նրա սովորական,  
 ծանօթ խաղը: Տէր Աստուած, սրբան, ցեխ էր  
 ծածկուած ամուսնուս աշխարհային շուքի ու փայլի

տակ. այն-ինչ սրպիսի պատիւ ու շարդանք է վախե-  
 լում նա իւր շրջանում: Առնենք հէնց երեկ. մեր  
 հանդիսաւոր ճաշի ժամանակ ուղղակի զգուշի էր  
 լսել, թէ սրբան կօմպլիմէնտներ էին շապչում  
 ամուսնուս հասցէին, իսկ ամուսինս, նա էլ պակաս  
 չէր... նա էլ դարչելի ստորութեամբ շողքորթում  
 էր կոմսին և կոմսուհուն, որոնց ազդ. յութեան  
 վրայ մեծ լուսեր ունի իւր նպատակներին հասնե-  
 լու համար: Նալած այն կցկտուր խօսակցութեանը,  
 որ հասնում է ականջիս իմ ամուսնու առանձնա-  
 սենեակից՝ ես տեսնում եմ, որ նա սասափկ աշխա-  
 տում է մի ինչ-որ պատուաւոր և ձեռնառ ընկե-  
 րութեան նախադասի պաշտօն ստանալ: Ահա թէ  
 ինչու նա այնպէս փողի կարիք է զգում. մէկին  
 պէտք է մի բան ընծայ տալ, միւսի սիրտը շահել,  
 երբորդի աչքին թօղ փչել, Եսկ տիկին Մամուլո-  
 վան որ կայ՝ ամուսնուս ու սկեսորիս աչքում մի  
 ճարպիկ միջնորդ է, և հէնց այդ պաշտօնի համար  
 է, որ նա վախելում է նրանց շնորհն ու փաղաք-  
 շանքը: Ա՛յ հէնց երեկ, եթէ Մամուլովան հարկա-  
 ւոր չլինէր նորանց, միթէ նա մի սեղան նստած  
 կլինէր այնպիսի ականաւոր հիւրերի հետ: Թեղճ  
 կին. նա իսկի չէ էլ նկատում, թէ սրպիսի ողոր-  
 մելի դեր է խաղում ինքն այդ տեսակ մարդկանց  
 շրջանում. ո՞վ գիտէ, շատ կարելի է և նկատում է,  
 բայց նրանց առաջ քծնելու, լեռին թաթերի վրայ  
 ման գալու հիւանդութիւնը բթացնում, սպանում է

նրա մէջ ուրիշ ամեն տեսակ զգացմունք: Այդ մը-  
տածողութիւններին անձնատուր՝ ես հասալ մեր  
թանկագին տունը: Մայրս խորին լուզմունքով  
սեղմելով ինձ իւր կրծքին՝ ամենաքնքուշ խօսքե-  
րի մի ամբողջ հեղեղ թափեց վրաս: «Համբերա-  
տար եղիր, Մարիամ ջան, Աստուած ողորմած է,  
կարող է ամեն բան զէպի լաւը փոխուել», — անդա-  
դար կրկնում էր նա: Միմեանց մխիթարելով՝ եր-  
կուստ էլ լալիս էինք. վերջը մօրս արտասուքը  
փոխուեց հիստերիական լացի: Թէև մի կէս ժամից  
լետոյ մայրս հանդարտուեց, բայց տիկին Մամուլո-  
վան անլարմար էր գտնում խօսք բանալ իւր գոր-  
ծի մասին: Պատճառ բերելով իւր լոգնածութիւնը՝  
նա առաջարկեց ինձ շուտով տուն գնալ և խոս-  
տացաւ մօրս, որ հետեւեալ օրը դարձեալ կբերէ  
ինձ: Մի քանի օր իրար վրայ մենք գտնում էինք  
մօրս մօտ, որ արդէն անկողնից վեր էր կացել,  
բայց դեռ չափազանց թուլ էր զգում իրան: Տիկին  
Մամուլովան դարձեալ սկսեց սիրալիր և փառաք-  
շանքով վարուել ինձ հետ, երեւի լոյս ունենալով  
ինձ էլ իւր կողմը թեքել: Մօրս արած մեր վերջին  
այցելութիւնից տուն վերադառնալիս՝ բաժանուե-  
լու ժամանակ նա ինձ ատաց. «Տեսնում եմ, որ դու  
միանգամայն արժանի ես իշխանի և իշխանուհու  
նախատինքնին ու վարուողութեան. դա դեռ քիչ  
է. քեզ հետ այդպէս չպէտք վարուել»: Գլխի ըն-  
կնելով, թէ ինչ էր նրա դժգոհութեան պատճառը՝

ես նորան ոչինչ չպատասխանեցի: «Երևում է, ար-  
անգամ նորան չէ յաջողուել արդարացնել իւր մակ-  
լերական ընդունակութիւնները»:  
— Ո՛չ՝ մի խօսք չասացիր իմ օգտին, անխելք  
ես դու, չես հասկանում քո շահը, — շարունակեց  
տիկին Մամուլովան՝ քայլերն անվճռողաբար ուղ-  
ղելով զէպի ամուսնուս՝ առանձնատենակը: Ես  
լսեցի, ինչպէս զայրացաւ, կրակ կտրեց ամուսինս՝  
ստանալով ակնկալած հինգ հազարի փոխարէն՝  
միայն հազար բութի, այն էլ, ինչպէս տիկին Մա-  
մուլովան հաղորդեց, հազար ու մի նեղութիւններով:  
— Լաւ, դէ որ այդպէս է՝ այսուհետեւ էլ ես  
նրա փեսան չեմ. թնդ թուխս նստի իւր ոսկիների  
վրայ, — բռունցքը սեղանին խփելով՝ սպառնալից  
ձայնով գոչեց նա: — Ես այլևս թող չեմ տալ իմ  
կնոջը, որ տեսնուի նրա հետ:  
«Տէր Աստուած, Տէր Աստուած, քնչ պէտք է  
լինի այժմ իմ վիճակը», — օտարափաժ մտածում էի  
ես: — «Երկար չքաշեց իմ հանգիստն ու խաղաղու-  
թիւնը. դարձեալ կսկսուի առաջուանը... Իսկ խեղճ  
մայրս... ինչպէս պէտք է համբերէ նա»:  
— Այս էիր ուզում, հա. դէ, այժմ ինքդ քո  
գլխի ճարը տես: Իմացած եղիր, որ էլ ես քեզ  
օգնութեան հասնողը չեմ, — ատամների միջով շք-  
շնջաց տիկին Մամուլովան, անցնելով կողքիցս:  
Նրա այդ անողորմ վերաբերմունքը զէպի  
ինձ այնպիսի մի վայրկեանին, երբ ես ոչ մեռած,

ոչ կենդանի, անշարժ մեխուած էի տեղնուտեղը՝  
 ինձ չափից դուրս զարմացրեց Քարն անդամ կար-  
 ծում եմ կհալուէր, սէր մնաց թէ կինարմատը, օ...  
 Վճռելով ամեն տեսակ չարաքերութիւն կտրել նրա  
 հետ՝ ես լիովին համոզուեցայ, որ այդ կինն, ինչ-  
 պէս մի անգամ Ակումեանն ասաց նրա մասին՝  
 սլատրատ էր նոյն-իսկ իւր հոգին դրաւ դնելու՝  
 աշխարհիս մեծամեծների սիրտը շահելու համար։  
 Է՛հ, ինչ կլինի, թող լինի... այս առաջին անգա-  
 մը չէ որ համբերում եմ...

6 փետրուարի.

Օրերն անցնում էին օրերի վտակից։ Ամուսինս,  
 ինչպէս և պէտք էր սպասել, իւր սրտի բոլոր մաղ-  
 ձը, որ նա դգում էր դէպի մայրս, նրանից ցան-  
 կացած գումարը շտանալու պատճառով՝ ինձ վրայ  
 էր թափում։ Ամեն մի չնչին բան առիթ բռնելով՝  
 նա կարծես հոգեկան բուռն հրճուանք էր զգում  
 ծաղրելու իմ տառապանքները. սկեսուրս էլ ամեն  
 անգամ դէպքից օգուտ էր քաղում՝ կրակի մէջ  
 իւր ածելու։ Այդ բոլորը ոչինչ, եթէ ես զրկուած  
 չլինէի դեռ տակաւին չապաքինուած մօրս հետ  
 տեսնուելու հնարաւորութիւնից։ Ամուսինս կար-  
 ծեմ մի տեղից փող ճարեց, որովհետև անցեալ  
 շաբաթ նա մի ահագին արկղ շամպայն պատուի-

րեց, որով այս բոլոր օրերը նա առատութեամբ  
 մեծարում էր իւր հիւրերին։ Յետոյ օր չէ անցնում,  
 որ նա կոմսուհուն չուղարկէ կամ հրաշալի ծաղիկ-  
 ներ, կամ թանկագին վաղերով տեսակ-տեսակ  
 մրգեր, կամ լատկապէս Բաթումից բերել տուած  
 հազուադէպ բոյսեր. խնկ երեկ նա իւր համար գը-  
 նեց մի զոյգ գեղեցիկ սև նժուղ և շաբաբաւս  
 Միայն շնորհիւ այդպիսի ճոխ ու շլացուցիչ կեան-  
 քի, այդ մարդը կշիռ ունի հասարակութեան մէջ։  
 Ի՞նչ կմնայ նրանից, եթէ խլես այդ բոլորը։—Ու-  
 չինչ, միանդամնայն ոչինչ։ Ո՛չ գիտութիւն, ո՛չ գեղ-  
 արուեստ, ո՛չ գրականութիւն, ոչ հասարակական  
 գործեր, մի խօսքով, ոչինչ չէ հետաքրքրում նրան։  
 Չնայելով դորան՝ ամուսինս ընտրուած է լիշաձս  
 ընկերութեան նախագահ, որին նա այնպէս սաստիկ  
 փափաղում էր և որին հասնելու համար, ինչպէս  
 ինձ երեսոց՝ նա ամեն տեսակ ինտրիգներ լարեց  
 այդ պաշտօնին սպասող միւս թեկնածուների դէմ.  
 Երրորդ օրը նա շքեղ կերպով տօնեց իւր ընտրու-  
 թիւնը։ Սրտնեղութիւն զգալով ամուսնուս շրջա-  
 նում՝ ես չերևացի հիւրերին, մանաւանդ որ ամու-  
 սինս այժմ այլևս հարկաւոր չէր համարում դէպի  
 ինձ զգաղած իւր արհամարհանքը ծածկելու օտար-  
 ների առաջ։ Ա՛խ, եթէ նրա ծանօթները տեղեակ  
 լինէին ճշմարտութեան գէթ մի մասին՝ նրանք  
 այնպիսի ճեղնական հալեացքով չէին նայի ինձ  
 վրայ։ Ասենք, ես վաղուց հասկացել եմ, որ ինչ-

քան էլ մեծ լինի ամուսնուս լանցանքն իմ վերաբերմամբ՝ նրա շրջանը միշտ նրա կողմը կպահէ հէնց լոկ այն պատճառով, որ ես չեմ պատկանում նրանց դասակարգին: Բայց միթէ մեր միջին դասակարգում նոյն ներողամիտ աչքով չեն նայում ամուսնու արարմունքների վրայ... հը... Ապա թող կինը փորձէ թողնել անարժան ամուսնուն— նրան իսկոյն կքարկոծեն: «Համբերիր և անվերջ համբերիր»—անհա ինչն է առաջմ մեր կանացի վիճակի նշանաբանը: Մինչդեռ մեր տանը հիւրերին ընդունելու պատրաստութիւններ էին տեսնուում՝ ես մտախոհ պառկած էի սենեակումս, բաղձոցի վրայ: Մէկը միւսից անուրախ, անմխիթար մտքեր գալիս, անցնում էին գլխիս միջով: Յանկարծ, կարծես երազի մէջ, ականջիս ղիպաւ իմ փոքրիկ Աղէքսանդրին ուրախ ճիչը: Լուսամուտը բանալով՝ ես տեսայ վարդապոյն թաթիկներ՝ տարածուած դէպի իմ կողմը: Արդեօք մանկիկիս հրեշտակային ժպիտի, թէ թարմ օդի աղղեցութեան տակ, չգիտեմ, բայց սիրտս լանկարձ այն աստիճան փափկացաւ, որ, ասես թէ, նրա մէջ այլևս տեղ չմնաց դառն զգացմունքների: Ես զուրս վազեցի այդին և երեսնային առնելով ծծմօր ձեռքից՝ երկար խաղում, զուարճանում էի նրա հետ, չկշտանալով նրա քաղցրահնչիւն մանկական ծիծաղից: Այդ միջոցին իմ ուշադրութիւնը գրաւեցին աղիողորմ հառաչանքներ, որոնք լուում էին դէպի

փողոց նայող ցանկապատի հակառակ կողմից: Ես պատրաստ էի այդ բուռէին բախտաւորացնել ամեն մէկին, մանաւանդ դաւակիս հասակակից մանուկին: Պօրտ-մօնէս բանալով՝ տեսայ որ նրա մէջ լիսուն կուպէկից աւելի փող չկայ: Աերջին ունեցած փողս տալով մուրացկան կնոջը՝ ես անչափ ցաւում էի, որ չէի կարող աւելի առատութեամբ պարգևատրել նրան, մինչդեռ այս ամիս մեր տանը խմուած էր մօտ չիսուն շիշ շամպայն. իսկ ամեն մի շիշին վճարում է տաս բուրլի: Ամուսինս զրանից էօան շամպայն չէ ճանաչում. նա գտնում է, որ աւելի էօանն էօան մարդկանց խմելու բան է: Մուրացիկ կինը, բաց թողնելով միւս երեսնայի ձեռքը, որը լալով կպել էր մօր ծնկանը՝ աղերսանքով ցոյց տուաւ իւր երկու երեսաների կապտած ոտները, որոնք հազիւ ծածկուած էին ցնցոտիներով. նա մի բան մրմնջաց և հայեացքն ուղղեց երկինք: Ես առայ իմ մեծ, մետաքսեայ թիկնաշորը և ծածկելով չափից դուրս նիհար և գուռնատ երեսնայի մերկ ուսերը՝ դարձայ ծծմօրը և խնդրեցի, որ նա մանկիկիս շորերի միջից ջակէ հները և տայ սորանց: Այդ երեսնաների վրայ նայելով՝ սիրտս մղկտում էր: Ես լակամայից սկսեցի մտածել ուրիշ սրանց նման հազարաւոր անպաշտպան մանուկների վիճակի մասին: «Ի՞նչ էք անում, իշխանուհի. միթէ կարելի է այդպէս երես տալ այդ անասուններին»,—ընդհատեց մտածմունք-

ներս մեր աղախին Պաշայի դժգոհութեամբ լի ձայնը. նա այդ միջոցին անցնելիս լինելով մեր մօտից և տեսնելով, ինչպէս ծծմալը մի անագին կապոց է տալիս խեղճ կնոջը՝ աչքերը պլշած մնացել էր վրաս նայելիս: Տեսնելով, որ ես ոչ մի ուշադրութիւն չեմ դարձնում նրա վրայ, դալրացած աղախիւրը, քիչ մնաց մուրացիկ կնոջ երեսին թըքելով՝ հեռացաւ և հեռուից անէծքներ էր թափում խեղճ աղքատ կնկայ գլխին: Ես զգուանքով նայում էի սկեսուրիս աղախնի վրայ և մտածում. «Ահա իւր անգթութեամբ իւր տիրուհուն արժանի աղախին»: Ես գիտէի, որ այգում կատարուածը մի առ մի կհաղորդեն իշխանուհուն: Ինձ համար դժուար չէր Պաշային գրաւել, նրան կաշառել, բայց չէի ուզում ստորանալ նրա առաջ: Երեկ, ինչպէս և պէտք էր սպասել՝ սաստիկ լանդիմանուեցալ իմ արած չնչին նուիրատուութեան համար: Ծծմօրից տեղեկանալով, որ այն ծանօթ մուրացկան կինն երեկ մեր այգու մօտով անցնելիս հաղարաւոր օրհնանքներ է ասել իմ և որդուս համար՝ ես դարձեալ մտածմունքի մէջ ընկալ, սկսեցի խորհել տարաբախտ մանուկների վիճակի մասին: Երբորդ օրն այգում անց կացրած մի քանի ժամերի ազդեցութիւնն այնքան մեծ էր ինձ վրայ, որ լանկարծ բուռն փափագ զգացի, որ ուրիշ երեխաներն էլ ունենան գէթ փոքրիկ բաժին այն բարեկեցութիւնից և առողջութիւնից, որոնցով օգտուում էր

իմ որդին: Աթէ ես աղատ, անկախ կին լինէի՝ անպատճառ կաշակցէի այնպիսի մի ընկերութեան կազմակերպութեան, որը հետամուտ լինէր այդ բարի նպատակին: Ես մտածեցի իմ զարդերից մի քանի բան տալ Ակումեանին, որոնց նա, իբրև բժիշկ, կարող էր մի որեէ բարի նպատակով գործադրել: Յիշում եմ, Պալիանէն մի քանի անգամ ասել էր ինձ, որ Քրիստափօրն ուզում է մի որոշ գումար խնդրել բարեգործական ընկերութիւնից ճանապարհորդական փոքրիկ դեղատներ կազմելու համար. զիւղէ զիւղ ճանապարհորդելով՝ նա համուզուել էր, թէ որքան անհրաժեշտ են այդ դեղատները: Առանց երկար մտածելու՝ ես հանեցի արկղիկից երեք հատ թանկագին իր և նոյն ճանապարհով, ինչ ճանապարհով որ գնծիկն էի տուել՝ այդ իրերն էլ լանձնեցի վաղեմի բարեկամիս տնօրինութեան, խոստանալով օգնել և ապագայում: Արած բարեգործութեանս գիտակցութիւնը մի փոքր հանգստացրեց հոգիս:

10 փետրուարի.

Ես կարծում էի, թէ Ակումեանի միջոցով արած իմ երկրորդ նուիրաբերութիւնը ծածուկ կմնալ ամուսնիցս և սկեսուրիցս, ինչպէս որ ծածուկ էր մնացել առաջինը. բայց բանն այնպէս չեղաւ: Ստա-

նալով ինձանից մի զոյգ ականջի օղեր և երկու մատանի՝ Քրիստափորը հէնց հետևեալ օրը սրտառուչ դարձուածներով և խրախուսանքով լի մի նամակ գրեց ինձ, որի մէջ լայտնում էր իւր անսահման շնորհակալութիւնն իմ արած բարիքի համար: Նա գրում էր, որ Գալիանէի և Սալօմէի ասելով, որոնք ներկայումս մօրս մօտ են գտնուում և խնամք են տանում նրա վրայ՝ նա յոյս ունի իմ նուիրաբերած իրերից ստանալ մօտ երկու հարիւր ռուբլի, որի վրայ աւելացնելով առաջուպէս նուէրս՝ գնձիկի վաճառումից արդէն ստացուած վաթսուն ռուբլին (իւր թոշակաւորի համար նա ուրիշ աղբիւր էր գտած), կգոյանայ մի պատկառելի գումար: Յետոյ, ուրախանալով, որ մեր նպատակները մէկ են՝ երիտասարդը իւր հիացմունքն էր լայտնում, որ այդ նպատակներին հասնելու համար ես բաժանուում եմ իմ թանկագին զարդերից, որոնց մի ժամանակ այնքան սիրում էի: «Նթէ ձեր արածը, թանկագին Մարիա Նգորովնա, շատ հետևողներ ունենար՝ մենք արդէն շատ մօտ կլինէինք մեր նուիրական գաղափարին, այն է՝ հիմնել «մսուր» անունով մի ընկերութիւն», վերջացնում էր իւր նամակը Քրիստափորը: Նրա նամակը, իմ չար բախտից, ընկաւ ամուսնուս ձեռքը: Տնից դուրս գալիս՝ նա պատահեց դռան մօտ նամակաբեր տըղալին: Այդ միջոցին ես կանգնած էի պատուհանի մօտ: Հարցուփորձ անելով, թէ սլմնից է սեղարկուած

տղան՝ ամուսինս դուրս գլչեց նրա ձեռից ծրարը և զայրացած վրայ խիեղով դուռը ծառալի լետեւից՝ ուղղակի ներս մտաւ սենեակս: «Նամակ ունիս այն... սատանան դիտէ նրա անունը... այն քոսոտ բժշկից», — դէմքի չարագուշակ արտայայտութեամբ դարձաւ նա ինձ: — «Մառան պատասխանի է սպասում: Նամակն էլ բաւականին ծանր ու հաստ է. հետաքրքիր է իմանալ, թէ ինչ ընդհանուր բան կայ ձեր մէջ»:

— Տնը ինձ, դու իրաւունք չունիս ուրիշների նամակները կարդալու, — զայրացած գոչեցի ես, համարեա լարձակուելով ամուսնուս վրայ:

— Օ՛հօ-հօ, այդ ինչ զաղտնիքներ պէտք է ունենաս դու: Ա՛ա՛, ուրեմն խիղճդ մաքուր չէ: — ծրարը պատռելով՝ արհամարհանքով ժպտաց նա:

Հասակս կարճ լինելով՝ ես չկարողացայ նամակը դուրս խլել նրա ձեռքից և այդ պատճառով դատապարտեալի նման անշարժ կանգնած՝ սպասում էի, մինչև որ նամակն ինձ կտար:

— Հն-հն-հն, — հնչեց ամուսնուս դիւական քրքիջը: — Բրնվօ, տիկին, բրնվօ. անա թէ ինչ էք միտք արել — վաճառքի հանել սեփական զարդերը չնչին գնով, որ այդ մասին ամբողջ քաղաքում թմբուկ զարկեն: Խալտառակութիւն: Համեցէք, կարդացէք, տեսէք ինչ է գրում ձեզ ձեր սիրելին, — շարտեղ նա երեսիս մանրագիր նամակը: Ես դողոջուն ձեռքով բռնեցի նամակը, բայց կար-

դալ չկարողացայ. տառերը թռչկոտում, շուռ ու մուռ էին գալիս մթադնած աչքերիս առաջ:

— Ես տեսնում եմ, maman, որ նրա խելքը տեղը չէ. նորան հարկաւոր է լուրջ կերպով բժըշկուել, — դարձաւ ամուսինս իւր մօրը, որ այդ բոպէին ներս մտաւ սենեակս:

— Ի՞նչ է պատահել, au nom du ciel, վախեցած գոչեց նա, տեսնելով որդու կատաղութիւնից ալլանդակուած երեսը:

— Ի՞նչ է պատահել, հըմ... հըմ... այս լիմարը իւր թանկագին զարդերը ծախում է և փողը ուզարկում ինչ որ աղքատների, և դիտես ում միջոցով, իւր Ակումեանի միջոցով, որն ինքն էլ պատկանելով այդպիսիների կարգին՝ երեւի փողն առնում, ջէքն է դնում: Ճանաչում ենք մենք այդ մարդասէրներին:

— Գուք իրաւունք չունէք նրա մասին այդ լեզուով խօսելու, — կրակ կտրած գոչեցի ես: — Նա հազար անգամ աւելի աղնիւ է, քան ձեր բոլոր ծանօթները միասին առած:

— Լռիր, անպիտան, — ոտքը դետին զարկելով՝ գոչեց սկեսուրս: — չես տեսնում, Միշէլն ինչպէս լուղուած է, կարող է կաթուած ստանալ:

— Այդ քարասրտի համար միևնույն է, թէ ինչ կպատահի ինձ. այն անշապիկ բժիշկն որան այնպէս է կախարդել իւր քարողներով, որ սա ամեն բանի վրայ միայն նրա աչքերովն է նայում, — շա-

րունակում էր բղաւել ամուսինս: — Երկու հարիւր վաթսուսու բուբլի, հաննք բան է: Խակ նամակը. նամակն էլ ինչ լեզուով գրուած... Առաջ այդ վրքըն սկսում է խօսել իւր զգացմունքները մասին, համարեա սիրույ խոստովանութիւն է անում և ապա զանազան անվերջ վիճարութիւններ... Ես համոզուած եմ, maman, որ նա այսպիսի նամակներով մեր այս անխելքի շապիկն էլ կհանէ:

— Հանդատացիր, mon ange, բանն այդտեղ չի հասնի: Մենք խնամակալութիւն կնշանակենք նրա վրայ:

— Այո՛, այո՛, անպատճառ, — ուրախացաւ որդին, մօր հնարագիտութիւնը լսելով: — Իսկ առաջով, maman, հանիւր նրա հալեղազարդ պանարանից թանկագին իրեղէններով արկղիկը և տար վերև:

Ես ուզում էի արգելել, բայց ամուսինս երկու ձեռքով այնպիսի ոյժով բռնեց իմ ուսերից, որ չկարողացայ տեղից շարժուել և քիչ մնաց ցաւից աղաղակէի:

— Գոնէ այնտեղ, վերև, քո իրերը անկորուստ կպահուեն, իսկ արկղիկի բանալին թող քո մօտ մնայ, — լաղթանակ տարած մարդու եղանակով ասաց սկեսուրս, իւր հետ վերցնելով արկղիկը:

Ես աչքերով ճանապարհ դրի նրան, անհաշտելի ատկութիւն զգալով դէպի նա: Այդ բոպէին է բոլոր սրտէ ցանկանում էի, որ գետինը պատառուէր ու նրան կլանէր: Ինձ համար ցաւալի էր



մօտ: Ամուսինս, ըստ երևութին, զգջում էր իւր արարմունքի համար և երբեմն, կարծես, կարեկցութիւն էր ցոյց տալիս դէպի ինձ: Միանգամայն անտարբեր աչքով նայելով այդ բանին՝ ես օգուտ էի քաղում նրա կարեկցութիւնից միայն այն նըպատակով, որ թուլտութիւն ստանամ նրանից երեխայիս հետ տեսնուելու: Երեխայիս բերում էին ինձ մօտ մի քանի անգամ, բայց շատ կարճ ժամանակամիջոցով: Սկեսուրս դառնում էր, որ հիւանդի սենեակը կարող է վատ ազդեցութիւն ունենալ երեխայի վրայ: Որքան աւելի էի կազդուրում նոյնքան աւելի սաստիկ զգալի էր դառնում ինձ համար այն, որ ես չեմ կարող մի շարիկ տակ ապրել սրտիս ատելի այդ արարածներին հետ: Ես հարկաւոր էի համարում մօրս նախապատրաստել իմ մտածած քայլի համար և այդ պատճառով, հէնց որ ձեռքս գրիչ առնելու ոյժ ստացայ՝ իսկոյն գրեցի նորան իմ հիւանդութեան մասին և ինչորեցի, որ այցելէ ինձ: Բացի դրանից, միայնակեցութեան մէջ տառապելով՝ ես բոլոր ժամանակ փափագում էի տեսնուել սրտակից մարդկանց հետ: Օ՛, ամեն բան պատրաստ էի սալ մի սրտագին խօսքի: մի փաղաքշալից հացեացքի համար: Գալիսնէն մօտ երկու շաբաթ, իբրև հիւր, ապրում էր Բագուում, իւր ազգականուհիներէց մէկի մօտ: Իսկ մայրս ինքը հիւանդ՝ նամակս ստանալուց միայն երկրորդ օրն եկաւ ինձ մօտ: Այդ միջոցին

ամուսինս, որ առաւօտեան սուրճը իմած՝ ներքե էր իջնում, հանդիպեց մօրս տան շեմքում: — Ի՞նչ էք կամենում, — հարցրեց նա կոպտութեամբ, դռան առաջը կանգնելով:

— Ես անկողնից հէնց նոր վեր կացած՝ սկսեցի շտապով հագնուել:

— Շատ հասկանալի է, թէ ինչ — տեսնուել հիւանդ աղջկանս հետ, — լսեցի ես մօրս երկչոտ ձայնը: — Ա՛խ, Աստուած տալ, որ նա միայն բախտաւոր լինի. հաւատացե՛ք, ես երբէք չեմ անհանգստացնի ձեզ իմ այցելութիւններով: — շարունակում էր նա թախծալից ձայնով:

Կապօտը ձեռաց վրաս առնելով՝ ես գուրս եկայ, որ պաշտպանեմ մօրս:

— Ա՛յ, ուրեմն սա գանգատում է ձեզ իմ մասին, — արագ շարժում գործեց դէպի ինձ ամուսինս և այնպէս հրեց, որ ես վայր ընկայ և գլուխը սաստիկ կպաւ պատին: Մայրս հազիւ բարձրացնելով ինձ՝ անչափ վախեցաւ, տեսնելով ամբողջ երեսս արիւնլուայ եղած: Նստելով աթոռի վրայ՝ ես համարեա ոչինչ չէի հասկանում, թէ ինչ է կատարում իմ շուրջը: Գլուխս պտտում էր, քունքերիս կարծես մուրճով զարկում էին և ամբողջ մարմնիս մէջ մի անպատմելի թուլութիւն էի զգում:

— Արդարադատ Աստուած, այս ինչ եմ տեսնում: Իմ աղջկանը թախում են: Ինչի ես կենդանի

մնացի, որ այս օրը տեսնեմ. չէ որ նա իմ միտու-  
 ճար զաւակն է, — սիրտ կտրտող ձայնով արտասա-  
 նեց մայրս, հեղեղի նման արտասուք թափելով  
 աչքերից:

— Ի՛հ, այժմ էլ վերջ չի լինի ձեր վալ-վալին:  
 Ձեր աղջկանը ոչ ոք չէ թակել. նա սալթաքեց ու  
 վաչր ընկաւ, — հանդիստ պատասխանեց ամուսինս:  
 կանչելով նաժիշտին՝ ամուսինս հրամայեց,  
 որ ինձ անկողին պառկեցնեն և սառը ջրից կօմ-  
 պրէս դնեն: Ինձ համար ատելի էր ամուսնուս  
 այդ հոգատարութիւնը:

— Աւելի լաւ չէր, որ քուսնայի ու այս բա-  
 նը չտեսնէի, — կուրծքը ծեծելով՝ ճշաց մայրս, երբ  
 նկատեց ձակատիս ահազին պատառուածքը:

Մեր ծծմայրը մօրս կիսակենդան դրութեան  
 մէջ տարաւ տուն: Կարելի է երեակայել թէ որ-  
 պիսի լուսահատութեան մէջ ընկալ ես: Ինքս ինձ  
 մեղադրեցի, որ անմտութիւն էր իմ կողմից մօրս  
 հրաւիրելը. ինձ համար պարզ էր, որ ներկայ  
 հանգամանքներում իսկի չպէտք է լուսայի մի ալ  
 վարժունք ամուսնուս կողմից: Մի քանի ժամից,  
 հէնց որ մի փոքր ուժ ստացայ ոտքի վրայ կան-  
 գնելու ես լարմար բոպէ գտայ և դուրս եկայ ար-  
 նից այն դիտաւորութեամբ, որ ալլա տուն չվե-  
 բաղաւնամ: Հետս վերցրի մի քանի անհրաժեշտ և  
 ինձ համար քաղցր լիշատակ ունեցող իրեր: Ես  
 նախազգուշացրի ծծմօրը, որ իմ լեռեից մարդ չու-

ղարկեն, որովհետև գիշերը պէտք է մնամ հիւանդ  
 մօրս մօտ: Երեսալին տանելու համար մտածում  
 էի գալ հետեկալ օրը և պատրուակ բռնել աչն,  
 որ հիւանդ մայրս շատ է ուզում նրան տեսնել:  
 Սաստիկ գրգռուած՝ ես կարծես գլուխս կորցրել  
 էի: Գալով մօրս մօտ՝ ես իմացայ, որ նա սաստիկ  
 նեարդալին ուշագնացութեան մէջ է ընկել: Երբ  
 տեսաւ ինձ ձակատս կապած՝ խեղճ կլինը հեկեկա-  
 լով ընկաւ վզովս և դոչեց. «Ի՛նչպէս է ձակատիդ  
 վէրքը, զաւակս»: Հիւանդ կնոջ աղաղակներն ու  
 հեկեկանքներն ամբողջ գիշեր ականջիս մէջ էին  
 և չէին թողնում ինձ քնել: 15 մարտի.

Այսօր մայրս աւելի լաւ է զգում իրան: Վեր-  
 ջապէս, սկսում եմ միամտել, որ նա կատարելա-  
 պէս կառողջանայ: Ես այժմ այնքան հանգստացել  
 եմ, որ ձեռք եմ առնում օրագիրս, որին սովորեց  
 եմ հաւատալ իմ բոլոր մտածմունքներս ու վշտե-  
 րես: Իմ անբարբառ ընկերիս հետ, — այսպէս եմ կո-  
 չում իմ օրագիրը, — զրոյց անելը պահանջ է դար-  
 ձել ցաւագար որտիս համար: Մօրիցս զրկուելը  
 չափազանց ծանր կլինէր ինձ համար. բայց խոս-  
 տովանել, որ ես պէտք է պատճառ լինէի նրա  
 մահուան՝ անհ ինչն էր ամենից աւելի մաշում

հոգին: Ինձ տանջում էր, այն միտքը, թէ ինչո՞ւ ես  
 Հկարողացա՞յ ծածկել նրանից իմ դժբախտութիւնը:  
 ԳճՏ եմ Բեղանից, Ամենաբարձրեանդ, որ ամեն  
 ինչ բարեկաշող վերջացաւ. բայց, Տէր Աստուած,  
 ինչ ինչ տանջանքներ չքաշեցի՞ ես այս եօթն օր-  
 ուսո՞ւ ընթացքում: Իմ այն սարսափելի ուշադնա-  
 ցութիւնըց չետո՞յ՝ ես զիշերն անց կացրի լարուած  
 դրուժեան մէջ, սպասելով հետեւեալ առաւօտուան:  
 Ինձ աիրեց մի տեսակ վհատեցուցիչ նեարգոտութիւն,  
 որ ստիպում էր մտքերս կենդրոնացնել այն ամե-  
 նի վրայ՝ ինչ որ վերաբերում էր մահուան և հօրս  
 հոգեվարք դրուժեան ծանր լիշողութիւններին: Ե-  
 րեք օր շարունակ մայրս կռիւ մղելով կեանքի ու  
 մահու դէմ՝ վերջապէս չորրորդ օրն իրան թեթե  
 զգաց: Ամեն օր իմ չետից կառք էին ուղարկում,  
 բայց ես չեա էի դարձնում, ասելով որ մնում եմ  
 գիշերելու և որ առհասարակ իմ չետից մարդ չու-  
 ղարկեն. ես ինքս կգամ տուն՝ երբ այդ հնարաւոր  
 կլինի: Եւ իրաւ որ, այդ միջոցին՝ ամբողջապէս  
 զբաղուած մօրս վիճակով և նրա մասին խորհե-  
 լով՝ ես բողբոլին մոռացա՞յ ոչ միայն ամուսնուս  
 թողնելու վճիռը, այլ ամեն բան աշխարհիս երե-  
 սին: Իմանալով որ երեխաս սկարացել է, և օգ-  
 առելով այն հանգամանքից, որ հիւանդ մայրս մի  
 փոքր լաւ է զգում իրան՝ ես գնացի տեսնուելու  
 իմ թանկագին փոքրիկիս հետ, բայց, բարեբախ-  
 տաբար, բացի թեթե հարբուխից՝ ոչ մի հիւանդ

դութիւն չունէր նա: Մնացի գիշերելու մանկանո-  
 ցում: Միւս առաւօտ տեսնելով, որ երեխան բոլո-  
 բովին առողջ է՝ ես շտապեցի դարձեալ մօրս մօտ,  
 բայց հազիւ մի քանի քալ արած՝ սարսափելի  
 թուլութիւն զգացի ոտքերիս մէջ: «Ո՛չ, չեմ կարող  
 տեղ հասնել», մտածեցի ես: Յետ դառնալ տուն և  
 հրամայել, որ կառքը լծեն— ես այդ չէի ուզում:  
 Խշտանուհին առաւօտեան տասը ժամից առաջ չէր  
 վեր կենում, իսկ առանց նրա հրամանին կառա-  
 պանք չատ կարելի է և կառքը չպատրաստէր:  
 Բորսայի Փախտօններն էլ չէին երևում, որովհետե  
 առաւօտեան դեռ եօթն ժամն էր: Ստիպում ե-  
 դա՞յ ոտով գնալ. Հազիւ ոտքերս շարժելով՝ ես մեծ  
 դժուարութեամբ հասա՞յ մօրս տունը: Քիչ մնաց  
 ճանապարհին երկու անգամ ուշքից գնացի, և եթէ  
 մի սիրալիր մարդու օգնութիւնը չլինէր՝ ես ան-  
 կասկած ուղղակի վայր կընկնէի փողոցի մէջտե-  
 ղում: Այդ մարդը հօրս նախկին գործակատարն  
 էր, որ ինձ պատահեց ճանապարհին. նա դժուա-  
 րութեամբ ճանաչեց ինձ — այնքան ես փոխուել էի  
 նրա աչքում: Աւերջապէս ահա մենք տեղ հասանք:  
 Ամբողջ ճանապարհին զսպելով ինքս ինձ՝ ալստեղ,  
 մօրս տան մուտքի մօտ, արդէն այնպէս ոյժից ըն-  
 կալ և վատ զգացի ինձ, որ ծառաները ձեռքերի  
 վրայ ներս տարան ինձ սենեակս: Ինձ լալտնեցին,  
 որ մայրս ամեն գիշեր տանջուելով՝ նոր միայն մի  
 փոքր քնով էր անցել: Ակումեանը, որ հիւանդ

մօրս մօտից ոչ մի բոպէ չէր հեռացած՝ հրամայեց,  
որ ինձ անկողին պառկեցնեն և սկսեց լուրջ կեր-  
պով քննել ինձ։ Տեսնելով, որ ես ընդդիմանում  
եմ և չեմ թողնում, որ շորերս հանեն՝ նա ան-  
հանգստութեամբ ասաց. «Քիտէք, ձեր երեսի գոյնն  
ինձ դուր չէ գալիս. կազդուրուեցէք, որ ձեր մօր  
համար ծանր չլինի ձեր երեսին նայելը. ամենա-  
փոքրիկ անասործո՞ւ թիւնը կարող է շատ վատ ազ-  
դեցութիւն ունենալ նրա առողջութեան վրայ»  
Չարմանում եմ, Մարիա Եգորովնայ թէ ինչպէս  
դուք ձեր այն լուրջ հիւանդութիւնից չետոյ, դեռ  
տակաւին չապաքինուած՝ քաջութիւն ունեցաք ու-  
տով գալու այտեղ. լուռ չէ՞, — անբաւական շար-  
ժում էր նա գլուխը. Այդ բոպէին ինձ անտեղի էր  
թւում Քրիստոփորի հողատարութիւնն իմ մասին.  
Յոյց տալով նորան իմ անհամբերութիւնը՝ ես ա-  
ղիւսում էի, որ նա, առանց մի բան ծածկելու,  
չայտնէ ինձ մօրս դրութիւնը. Մի քանի ժամից  
չետոյ, երբ մայրս զարթեց՝ ես մտայ նրա ննջա-  
բանը. Նա դարձեալ ցոյց տալով ճակատիս սպին՝  
սարսափելի ճիշտ արձակեց և թմբուցեց մէջ ըն-  
կաւ. Գրանից չետոյ Ակումեանն արգելեց ինձ  
մօրս աչքին երեւալ թէ որքան ծանր էր այդ բանն  
ինձ համար՝ դժուար չէ երեւակայել. Միւս օրը,  
բժիշկների համախորհուրդից չետոյ, ես սրտամաշ  
անհամբերութեամբ սպասում էի Քրիստոփորի երե-  
ւալուն, յոյս ունենալով նրա դէմքի արտայայտու-

թեան մէջ կարդալ ինձ համար տագնապալից խըն-  
դրի վճիռը. Ահա նա ներս մտաւ, ձեռքերն ան-  
զօր կախ գցած և այնպիսի մի մոլորած մարդու  
քայլուածքով, որ կարծես հէնց նոր էր թողել  
իւր սրտի ամենաթանկագին էակին. Սիրտս դողաց  
տիւուր նախազգացումից և մի ակնթարթ դաղարեց  
բարակելուց. Գուրս գալով պատշգամբ՝ ես սկսեցի  
անզսպելի հեկեկալ. Քրիստոփորն աշխատում էր  
ամեն կերպ հանգստացնել ինձ. Երեկոյեան իմ ա-  
մուսինն ու սկեսուրը եկան հիւանդի առողջու-  
թիւնը հարցնելու և միևնոյն ժամանակ չայտնեցին  
իրանց ցաւակցութիւնը թէ ինձ և թէ բոլոր շըր-  
ջապատողներին. Նրանց որ տեսայ՝ արիւնը դու-  
խքս խփեց. Մօրս հիւանդութիւնն ես ամբողջապէս  
վերագրում էի նրանց անգթութեան. Նրանց բո-  
լոր արարմունքների ստորութիւնն իւր բոլոր սը-  
գեղ մերկութեամբ ներկայացաւ աչքիս. Ես նրանց  
պժմեան ալցելութեան մէջ անգամ տեսնում էի մի  
չար միտք, մի չար դիտաւորութիւն. Ամուսնուցս  
և սկեսուրիցս չետոյ շուտով երեւաց և տիկին Մա-  
մուլովան. Մօրս դրութիւնը քանի գնում վատ-  
թարանում էր՝ իմ չուսահատութեան չափ ու սահ-  
ման չկար. Միայն երեկ առաւօտեան նա այնքան  
լուրդաց իրան, որ ես ազատ չունչ քաշեցի և  
կարող էի հանգիստ սրտով թողնելով նրան, վաղել  
իմ անգին մանկիկիս մօտ, որին ամբողջ շաբաթ  
չէի տեսել. Անկշտամ նայելով նրա հրեշտակային

փոքրիկ դէմքին՝ ես մտածում էի. «Ա՛խ, ինչ լաւ կլինէր, եթէ նրան էլ հետս տանէի մօրս մօտ և այնտեղ ընդ մըշտ իրարից անբաժան ապրէինք երեքս միասին»: Սակայն այն տխուր միտքը, որ մայրս ծանր հիւանդ էր՝ իւր բոլոր ոյժով պատկերացաւ ունքիս առաջ... Ես հասկացայ, թէ որքան անմիտ էր իմ տենչանքը: Այն, այդ հարցը պէտք է վճռուի միայն այն ժամանակ՝ երբ մայրս բոլորովին կառողջանայ, վերջնականապէս ոտքի կկանգնի:

25 ապրիլի.

Ահա արդէն երկու ամիս է անցել այն աղէտալի օրից՝ երբ ես զրկուեցի իմ մօրից: Նրան կորցնելով՝ ես զրկուեցի այն միակ էակից, որ անհուն և անձնուէր սիրում էր ինձ: Նրա հետ կապուած էին իմ մանկութեան բոլոր լիչողութիւնները և այն բոլորը, ինչ որ նուիրական էր պատանեկական կեանքիս ամենափայլուն օրերում: Ո՛ւր փախչեմ ես այժմ իմ ամուսնու ձեռից և վերջապէս ինչո՞ւ փախչեմ, ո՞ւմ համար և ինչո՞ւ համար ապրեմ: Զաւակիս համար: Բայց չէ՞ որ նրան երբէք չեն տալ ինձ... Օ՛, այդ պարզ է, որպէս ցերեկուայ լոյսը: Ինձ ոյժ էր տալիս այն գիտակցութիւնը, որ ես համբերում, դիմանում եմ թանկագին մօրս բա-

րորութեան համար. իսկ այժմ արդեօք կարող կլինիմ երկար գիմանալու... Մինչև երբ մաքառելու տանջուել: Իմ պայտելի մօրս մահուանից չետոյ՝ ես բոլորովին ուժասպառ եմ եղած, չգիտեմ, ո՞ւր խոնարհել կապարի պէս ծանրացած զլուխս: Երբեմն այնպիսի մի ճնշում եմ զգում կուրծքիս վրայ, որ ինձ թւում է, թէ անա ուր որ է շունչս կկտրուի... Բայց օրէցօր ամենից աւելի ինձ տանջում է այն միտքը, որ ես ակամայ պատճառ եղայ մօրս մահուան: Ա՛խ, ինչո՞ւ չկարողացայ թաղցնել նրանից իմ տանջանքները... Օ՛, միայն այդ բաւական է խելագարուելու համար... Ո՛չ մի սփոփանք, ոչ մի մխիթարական խօսք որեէ՛ տեղից... Մօրս թաղումից լեսոյ, առաջին նուագ ինձ հետ փոքր ինչ լաւ էին վարում տանը, բայց լեսոյ սկսեցին էլի առաջուայ պէս վարուել. ոչ, թի՛ն եմ ասում, տասն անգամ աւելի վատթար քան առաջ էր: Այն օրից, երբ ամուսինս ու սկեսուրս զգացին, որ սխալուել են իրանց հաշիւներում՝ էլ նրանց սանձահարել չէր կարելի... Ես այնքան զրգուած եմ, որ մտքերս իրար են խառնում: Նրանք նման էին որսը ճանկերից բաց թողած անգղներին: Կահիճներին չուսախաբ լինելը, որոնք աչք էին տնկել մօրս եօթնասուտենիս հազարի հասնող կարողութեան վրայ՝ ստիպեց նրանց իրանց սրտի բոլոր մաղձը ինձ վրայ թափել: Համաձայն կտակի, որ գրուած էր մօրեղբօրս և բժիկ Ակումեանի ազդեցութեան

տակ՝ հանգուցեալի բոլոր կարողութիւնը, գոյացած տոկոսներով հանդերձ՝ անցնում իմ որդուս, սկսած նրա չափահասութեան օրից, իսկ եթէ նա կենդանի չմնար (ճ, Տէրը մի արասցէ), տոկոսներից պէտք է օգտուէի ես, ինձանից լետոյ էլ գումարն անցնելու է Կովկասի Հայոց Քարեգործական Ընկե-  
րութեան: Ամուսինս շարունակ սպառնում է, ա- սելով որ ինքը կապացուցանէ կտակի պայտինու-  
թիւնը և հիմք է բերում այն՝ որ մայրս կտակը կազմելիս իբր թէ խելքը գլխին չի եղել և նրա վրայ ճնշում են գործել եղբայրները, սակայն ա-  
պացուցների պակասութիւն զգալով՝ դեռ չէ ու- գում դատ բաց անել: Տիկին Մամուլովան մեծ ե-  
ռանդով պաշտպանում ու քաջալերում է ամուս- նուս մտադրութիւնը: Սկեսուրիս հետ ունեցած մի  
փոթորկալից ընդհարումից լետոյ՝ ես գնացի գե-  
րեզմաննոց մօրս գերեզմանը տեսնելու: Տէր Աս- տուած, սրբալիսի ուժով լանկարծ սիրտս քաշեց դէ-  
պէ այդ վայրերը, դէպի այդ անդուր աշխարհը: Ես մտածեցի— լանկարծական մահը կաղատէ և քաղցր հանգիստ կտալ ինձ: Օ՛, եթէ կարելի լինէր գէթ  
մի օրով թմրել, անզգայանալ, չլսել այն վերաու-  
րական խօսքերը, որոնք անդադար ուղղում են թանկազին հանգուցեալի հասցէին: Ո՛րբախ խա-  
ղաղ ինձ էր բուրում շիրիմներից, սրբալիսի ան- խռով հանգստութիւն էր տիրում չորս բոլոր: Գեղեցիկ վալր: Նա և՛ թախիժ, և՛ անուրջներ էր

ղարթեցնում իմ մէջ: Երկնային նստած էի մարմա-  
րեայ գերեզմանաքարի վրայ, որի տակ հանդու-  
էր հայրս, և հէնց այդպէս էլ տեղնուտեղը ուրա-  
խութեամբ կտառչէի, կքարանայի՝ եթէ Դալիանէն  
ու նրա մայրն ինձ չտանէին տուն: Մօրաքրոջս  
աղջիկը մինչև երեկոան օրը Թիֆլիսում չէր, ի-  
րանից անկախ պատճառներով՝ նա ստիպուած  
մինչև այդ ժամանակ Բագու մն էր ապրում: Առա-  
ջուանից աւելի ատում են նրան մեր տանը և ինձ  
կորական կերպով արգելում են որևէ լարաբերու-  
թիւն ունենալ ոչ միայն նրա, այլև իմ ամբողջ  
աղջականութեան հետ առանց բացառութեան:  
Ես նախազգուշացրել էի Դալիանէին, որ ուզում  
եմ գնալ ծնողներիս գերեզմանը տեսնելու և այդ  
պատճառով էլ մենք պատահեցանք իրար այնտեղ:  
Չուզեմնալով հեռացալ ես գերեզմանատնից և հալ-  
եացքս չէի պոկում նրանից, մինչև որ բոլոր խա-  
չափայտերն ու մահարձանները չծածկուեցին իմ  
աչքից: Իրաւ է, հանգուցեալները չեն լսում, չեն  
զգում ոչ մի լաւ բան, սակայն նրանք աղատ են  
և վնաս բան լսելու ու զգալու տանջանքից: Միթէ  
դա քիչ է: Հեռանալով այդ վայրերից, որոնք ամ-  
բողջապէս կլանել էին իմ ուշադրութիւնը՝ ես նա-  
խանձեցի այդ վայրերում անվրդով ներհող հան-  
գուցեալներին: Իմ մտքս այսուհետև չի  
մտնում այդ վայրերում: Ես հարմար եմ գտնում  
այդ վայրերում: Ես հարմար եմ գտնում այդ վայրերում:

—անդամ դժ ճառամ ցանկից՝ Մ27 ապրիլի...  
 եւոյրմամբ յետոյ զիս զայի զյազատանքովք յածի  
 —այլ... Մեռնելու միտքն անզաղար հալածում է ինձ  
 միայն մահուան մէջ եմ գտնում իմ փրկութիւնը  
 ուրիշ ոչ մի բան չէ մտնում գլուխս... Սկսում եմ  
 նախանձել, անչափ նախանձել այն բոլոր մարդ-  
 կանց, որոնք չաւիտենալիս հանգիստ են գտել  
 զերեզմաններում։ Ո՛րքան ուրախալի կլինէր հանգ-  
 չել այնտեղ... ծնողներին կողքին—շարունակ մը-  
 տածում էի ես էլ ինչ է մնում ինձ այս աշխար-  
 հիս վրայ, ինչ ունիմ փոստայու.—որդիս խլեցին  
 իմ ձեռքից. մերձաւորներին հետ կտրուած է ամեն  
 կապ։ Հալածուած, լքուած, անջատուած այն ամե-  
 նից, ինչ որ թանկ է, ինչ որ սիրելի է ինձ, տան-  
 ջանք ներկայում, մտիթարութեան ոչ մի նշույլ  
 ապագայում։ արդեօք էլ ինչիս է պէտք կեանքը  
 այդ բոլորից չետոյ։ Միթէ ապրել նրա համար, որ  
 փորձեմ թշուառութիւններից ամենազառն ու սար-  
 սափելին, այն է՝ տեսնել սեփական աչքով, թէ  
 ինչպէս որդուն պէտք է զինեն իւր հարազատ մօր  
 դէմ։ Օ՛, հազար անգամ գերադասելի է մեռնել,  
 քան թէ... Երբէք... Աստուած չանէ, որ ես ա-  
 պրեմ ու աչքով տեսնեմ այն օրը, երբ թանկագին  
 զաւակս ընդունակ կլինի հասկանալու, թէ որպի-  
 սի անարգանքի ու ստորացման են ենթարկում  
 ինձ... Լոկ մտածելն անգամ այդ մասին պղտորում է  
 իմ ուղեղը։ Ո՛չ, իմ բռնակալներն երբէք չեն ար-

ժանանայ այդ տեսարանով հրճուելու բախտին։  
 Օ՛չ, սրպէս ճնշում, խեղդում են այդ բոլոր մտած-  
 մունքներն իմ միտքն ու սիրտը... յետոյ զունայով  
 ...մի ձեզ յամապրմամբ մարտչայս ամ զս զի ինս  
 զյայց զիմոյրմար գլխմս նի իսոա յլամդճորտգամ  
 մի միամ մի բլղճղայ իլ ըս29 ապրիլի...անամ  
 ողս ճարամկմի սմ մ յցմարմայ նի ձեզ ի նոց  
 —նա... Օրագիրը ձեռքս առնել չեմ ուզում. ոչինչ  
 նոր բան չունիմ գրելու։ Միեւնոյն ճնշող մտքերը,  
 միեւնոյն ճնշող հանգամանքները պաշարել են իմ  
 ամբողջ էութիւնը... Միշտ մահուան մասին մտա-  
 ծելով՝ ես ինձ ենթարկում եմ ամեն տեսակ վը-  
 տանգների, որ հիւանդանամ։ Տեսնելով որ մրսելը  
 չէ ազդում ինձ վրայ, չնայելով իմ չափազանց  
 ուժասպառութեան՝ ես դարձուաւ քով հարցնում  
 եմ ինքս ինձ—միթէ պէտք է ինքնասպանութեան  
 զիւնեմ։ Այդ միտքը մերթ սառցում, մերթ կրակ  
 է դարձնում արիւնս երակներին մէջ... Ինքնա-  
 սպանութիւն գործել—չէ որ դա սոսկալի մեղք է, —  
 ասում եմ ինքս ինձ, բայց միեւնոյն ժամանակ մի  
 ուրիշ դաղտնի ձայն շշնջում է, որ այն բոլորից  
 չետոյ ինչ որ ես քաշել եմ, քաշում եմ և պէտք է դեռ  
 քաշեմ իմ այդ արարքի մէջ մի առանձին մեղք  
 չկայ, որ ես մաքուր եմ Աստուծոյ առաջ՝ որպէս  
 մի մանուկ։ Երեկ ամբողջ օրը կուռում էի այդ եր-  
 կու զգացմունքների հետ, օգնութեան կանչելով  
 բնական մահը։ Ակրջապէս յոգնած, հալից ընկած



ամբողջ մարմնով դողդողում էի: Աչքիս առաջ մերթ վառում, մերթ հանգչում էին ինչ որ կրակի բծեր, ակտնջներիս մէջ բարձրացել էր մի անասելի թշխոց, սիրտս տրորւում, մղկտում էր: Ինձ սթափեցրեց կառապանի հարցը. «Ո՞ւր կհրամայէք»: Բոլոր ժամանակ ինձ թւում էր, թէ երազի մէջ եմ: Իմ մէջ կարծես չքացել էր և՛ ժամանակի, և՛ տարածութեան գիտակցութիւնը: «Ի՞նչ տեղ ենք մենք և ո՞ր ժամն է», ակամայ հարցրի ես կառապանին:— «Երևանեան հրապարակի վրայ և ուր ժամն է»,— պատասխանեց ինձ կառապանը: Տուն գնալ չէի ուզում: Միայնակ մնալն այդ բնույթներին ինձ սարսափեցնում էր. իսկ ամուսնուս և սկեսորիս շրջանն այն աստիճան գարշելի թրւաց ինձ, որ մի տեսակ սարսուռ անցաւ ամբողջ մարմնովս: Ես հրամայեցի կառապանին քշել դէպի Մէլդան (թուրքաց բաղար): Սիրտս ուղեց Գալիանէին տեսնել: Ճանապարհին, զեռ Գալիանէի բնակարանին չհասած՝ կառքս կանգ առաւ մի ստուար խումբ արբեցողների պատճառով, որոնք փողոցը լցրած՝ գոռում-գոչումով առաջ էին գնում: Կրօնուով ու հայհուանքներով մարդիկ դէտուզէն էին հրում միմեանց: Առհասարակ պատկանելով վախկոտների կարգին՝ այս անգամ ես բոլորովին սառնասիրտ վերաբերուեցաւ այդ միջնադէպին և սպասում էի, մինչև որ կառապանը հնար կունենայ առաջ գնալու: Մտեռալով Գալիանէի բնակարա-

նին՝ ես ուղեցի լիտ դառնալ, բայց նա լուսամուտից նկատեց ինձ և վազելով դուրս եկաւ իմ առաջ: Մի կէս ժամի չափ նրա մօտ նստելուց լիտու պատրաստուեցի տուն գնալ: Ես մի տարօրինակ դրութեան մէջ էի. ոչ մի տեղ հանգիստ չէի գտնում: Գալիանէն խօսում էր դէսից-դէնից, աշխատում էր ցրուել իմ մտայուզութիւնը, բայց ես բոլոր ժամանակ լուռ էի, որովհետեւ եթէ խօսէի, շատ բան պէտք է ասէի: «Ալերջապէս ինչ է պատահել քեզ, ասա, ի սէր Աստուծոյ»,— համարեա արտասուքն աչքերին հարցնում էր իմ բարի ազգականուհիս: «Երևի դարձեալ անախորժութիւններ տան մէջ. քանի որ չես ուզում ամուսնուցդ բաժանուել՝ պէտք է թքես այդ անախորժութիւնների վրայ, այ ինչ»,— զայրացած աւելացրեց նա, մի ձեռքով գրկելով ինձ: Ես ստեցի, ասելով որ գերեզմանատնից եմ գալիս: Գալիանէն սրտակիր ընկերին լատուկ կարեկցութեամբ նախատեց ինձ, ասելով որ ինձ պէս նեարդոտ կիներ չպէտք է այդպէս լաճախ գնալ այնտեղ, մանաւանդ երեկոտները: Այս դրութեան մէջ ինձ միայնակ թողնելն անկարելի համարելով՝ մօրաքրոջս աղջիկը մինչև տուն ուղեկցեց ինձ: Ես նրան ներս չհրաւիրեցի, երկիւղ կրելով, որ մերոնք կարող են մի որեէ վերաւորանք հասցնել նորան: Իսկ ինձ համար ներանց վերաւորանքներն ալլես սարսափելի չէին. ես գիտէի, որ երկար չպէտք է տանեմ նրանց...

հէնց այդ էր պատճառը, որ ես շատ սառնասիրտ վերաբերուեցի այն սարսափելի անարդանքին, որ թափեց իմ գլխին ամուսինս, թէ ինչո՞ւ ես Գալիա-նէի մօտ էի գնացել: Մի քանի հարուած տալով գլխիս՝ նա կատաղած գոչեց, որ այժմ արդէն կիրազորձէ իւր սպառնալիքը և փականք կղնէ սե-նեակիս դռան վրայ:

2 մայիսի.

Ամուսնուս հետ հանդիպելուց խոյս տալու համար՝ ես աւելի վաղ դուրս եկայ տնից, մինչև նրա դարթնելը: Առաջին պատահողն ինձ փողոցում եղաւ Քրիստափոր Ակումեանը, որ ձի նստած՝ գիւղ էր գնում հիւանդներին աչցելութեան: Նա խսկոյն ցած թռաւ ձիուց և ուրախ-ուրախ ողջու-նեց, չափոնելով որ իմ փողերով շատ ու շատ օգտա-կար բաներ է գնել իւր աղքատները համար: Իմ վաղեմի բարեկամն այնքան ջերմ կարեկցութիւն էր ցոյց տուած դէպի ինձ, որ նրան տեսնելը մեծ թեթևութիւն պատճառեց ինձ: Երբ դարձեալ ձի նստած նա հեռանում էր՝ ես երկնք-երկար նայ-ում էի նրա լետեից: Սո մի անպատմելի փափագ զգացի, որքան կարելի է՝ շատ փող գնել Քրիս-տափորի տրամադրութեան տակ, համոզուած լինե-լով, որ նրանից լաւ ոչ ոք չէ կարող գործադրել

այդ փողերը: Բայց ինչ էր մնացել իմ ձեռքում, բացի ակնեղէն զարդերիցս, որոնց արժէքը միայն չորս-հինգ հազար կամ գուցէ աւելի պակաս էր և այդ ունեցածս էլ գտնուած էր սկեսուրիս ճանկե-րում: Ա՛խ, որքան աղքատներ կան աշխարհիս ե-րեսին. ինչպէս կուղէի օգնել նորանց...

Մտքումս դրի լեռ ստանալ քարեղէններիս արկղիկը, նախ քան կիրազորձէի...

Օ՛, որքան կուրախանայ Քրիստափորը, ստա-նալով ինձանից այդ նուէրը: Այդ մտածմունքների մէջ գտնուելով՝ ես հասայ մինչև Ալէքսանդրեան աչքին: Ազահութեամբ ներս ծծելով անուշաբուր օդը՝ ես նայեցի կապուտակ երկնքին, արեւին, որ կենդանարար ճառագայթներով ջերմացնում էր երկիրը. նայեցի կանաչավառ այգուն և չանկարծ ափսոսացի կեանքը, ծանր ու ցաւալի թուաց ինձ կեանքից բաժանուելը: Գարնան օդն արբեցուցիչ ազդեցութիւն էր անում ինձ վրայ: Այդ բոլորին զգացի, որ ես նոյնպէս իրաւունք ունիմ բախտա-ւոր լինելու, ինչպէս ուրիշները. ես փափագում էի սէր և փառաքշանք: Միթէ կեանքի բոլոր քաղ-ցրութիւնները, բոլոր հրապոյրները կորած են ինձ համար... Մնաս բարև, կեանք, և քեզ հետ այն բոլորը, ինչ որ մօտ էր, ինչ որ թանկ էր սրտիս: Մօտ մի ժամ թափառելով՝ քաղաքում՝ ես գնացի իմ աղգականներից մի քանիսի մօտ, ինքս էլ չը գիտեմ թէ ինչո՞ւ: Ամանք, որոնք ամուսնութեանս

օրից ինձ չէին տեսել՝ զարմանում էին իմ այցելութեան վրայ. ոմանք էլ վերջին ժամանակ չաճախ պատահած լինելով ինձ փողոցներում՝ նկատեցին, որ իմ արածը վայելուչ բան չէ: Իրան ասած՝ ես բոլորովին մոռացել էի, որ մեզանում ընդունուած չէ սուգի շորով դուրս գալ փողոց: «Արժէ ուշադրութիւն դարձնել կամ մտածել այդպիսի չնչին բաների վրայ»: Ո՛րքան մանր, աննշան է թուում ինձ այժմ ամեն ինչ... Այն, շուտով վերջ... վերջ... Սակայն ամեն անգամ, երբ միտս է ընկնում այդ՝ մի ինչ-որ լուզմունք, ե՛րբ տանջող, ե՛րբ բերկրալից, միաժամանակ պաշարում է ինձ:

4 մալխի.

Կեանքի և մահու դէմ մղած կռիւն այն աստիճան մաշել էր ինձ, որ այսօր հայելուն նայելով՝ ինքս ինձանից վախեցայ: Քունս բոլորովին խանդարուած է. ես շուտ-շուտ զարթնում եմ, մի բան միշտ կարծես խեղդում է ինձ: Երազում տեսնում եմ ծնողներիս, որոնք սիրագորով կանչում են ինձ իրանց մօտ: Երբ տանն եմ՝ զգում եմ, ինչպէս սիրտս ձգտում է դէպի գերեզման, որպէս դէպի միակ ապաստարան. իսկ երբ տնից դուրս եմ գալիս՝ ափսոսում եմ կեանքից բաժանուել: Անդադար բացակայ լինելով տնից՝ ես չա-

ճախ ուշանում եմ ճաշին: Ինձ չեն առաջարկում ճաշել, ես էլ ոչինչ չեմ ասում, մոռանալով նոյնիսկ արդեօք մի որևէ բան կերել եմ թէ ոչ: Ախորժակս բոլորովին կորցրել եմ, այն-ինչ ծարաւըս անասելի սաստիկ է: Աստուած իմ, արդեօք վերջ կլինի իմ տառապանքներին: Խոյս եմ տալիս Գալիանէին հանդիպելուց, երկիւղ կրելով, որ մի գուցէ նա լանկարծ թափանցէ սրտիս խորքը... Երեխայիս հետ տեսնում եմ կարճ ընդմիջումներով և հազիւ կարողանում եմ զսպել հոգեկան լուզմունքս: Հէնց-որ տեսնում եմ՝ հեկեկանքներն ուզում են խեղդել ինձ, խսկոյն վեր եմ թռչում և փախչում եմ նրա մօտից, որպէսզի չվախեցնեմ նրան: Ծծմօր հալեացքներից, որ նա լաճախ նետում է ինձ վրայ՝ ես նկատում եմ, որ նա գլխի է ընկնում, թէ ինչ է կատարում ինձ հետ: Տէր Աստուած, տուր ինձ ոյժ շուտով իրագործելու մըտածածս... Մնաց բարև, իմ պատուական բարեկամներ, Գալիանէ և Քրիստափոր, բախտաւոր եղէք և աղօթեցէք ինձ համար: Մի մոռանաք իմ թանկագին ծնողների գերեզմանները... Ծծմալը կլանձնէ ձեզ իմ օրագիրը, որի մէջ դուք կլսնէք իմ բազմաչարչար կեանքիս պատմութիւնը. այդ օրագիրը կբացատրէ ձեզ շատ բան իմ կեանքից, որ գուցէ անհասկանալի էին ձեզ համար: Երդուեցնում ձեզ, բարեկամներս, լանուն այն ամենի, ինչ որ սուրբ է ձեզ համար—հրապարակ չհանել

իմ ընտանեկան գաղտնիքը: Թող այդ գաղտնիքը մեռնի ինձ հետ: Ես չեմ ուզում, որ որդուս կրած ազգանունը դրոշմուխ խայտառակութեան կնիքով: Մնաք բարև դարձեալ, իմ թանկագին բարեկամներ. բայց, միս, կուզէի... ապրել... ապրել, միայն, իհարկէ, ուրիշ պայմաններում. իսկ այսպէս... այս վիճակում... երբէք: Աշխարհն արդարև, գեղեցիկ է, բայց ոչ ինձ համար....

6 մայիսի.

Այս երկու օրը, չնայած որ ամուսինս խտիւ արգելել է ինձ անից դուրս գալ՝ ես անդադար դուրս եմ գալիս մերթ ոտով, մերթ կառքով և բոլորովին չեմ իմանում ինչ անել: Իմ սկեսուրն ու ամուսինն ամեն անգամ ինձ հանդիպելիս՝ հաղարուսի անարգանքներ են թափում գլխիս, բայց ես բոլորովին սառն ու անտարբեր եմ վերաբերում զէպի նրանց: Երեկ մինչև անգամ երեսներին ծիծաղեցի, մտածելով. «Շուտով, շուտով վերջ կլինի ձեր այդ ծաղր ու ծանակիին, որով միշտ վարձատրում էք ինձ»: Մայր ու որդի խորհրդաւոր կերպով իրար երես նայեցին: Ինձ թուաց, որ նրանք խելագարի տեղ են դնում ինձ: Ես չիշեցի, որ վերջին ժամանակ ծառաներն ևս ամեն անգամ ինձ տեսելիս՝ իրար մէջ փշփշում էին և տարօրինակ կեր-

պով ոտից գլուխ նայում էին վրաս: «Տէր Աստուած, միթէ ես նման եմ խելագարի...», վախեցած նայեցի երեսիս հայելու մէջ: Ինքս ինձանից սարսափեցի - աչքերս ինձ թուացին անմրտ կերպով պլշած, ամբողջ երեսիս արտայայտութիւնը բռն ու անիմաստ: Այդ գիշեր ես բոլոր ժամանակ տեսնում էի երազում, որ իբր թէ խելագարուել եմ և ինձ տանում են գժատուն: Զարթնելով՝ ես սարսափած հարցնում էի ինքս ինձ. «Արդեօք այդ բոլորը միայն թուաց ինձ... և, վերջապէս, խելքս տեղն է թէ ոչ»:

7 մայիսի.

Այսօր նրբ գերեզմանատնից վերադարձալ՝ ծրծմալրը բանձնեց ինձ մի նամակ, որ նորան թագուն տուել էր իմ նախկին աղախին Սալամէն: Մեր վերջին տեսակցութիւնն աչքան անհանգստութիւն էր պատճառել մօրաքրոջս աղջկանը, որ նա ուղղակի ումբակոծում էր ինձ իւր նամակներով, որոնց մէջ աւելի և աւելի թախանձելով՝ աշխատում էր ապագոյցանել, որ անհրաժեշտ է ամուսնուցս բաժանուել: Այս անգամ Գալիանէն աղերսում էր տեղափոխուել առժամանակ նրա մօտ, չետոյ երդւում էր, որ բարեկամներին օգնութեամբ կաշխատի, կզբաղուի իմ վիճակի ապագայ բարեկարգու-

թեամբ և միննոյն ժամանակ խոստանում էր, որ զառակիս անպատճառ կրերէ ինձ մօտ: «Սալօմէի պատմածներէց ուղղակի մաղերս փշաքաղում են», վերջացնում էր իւր նամակը մօրաքրոջս աղջիկը: «Աղպէս ապրեւ չէ կարելի իմ թանկագին Մարիա: Ո՞ւմ համար, ինչո՞ւ համար ես զու փշացնում քո կեանքը: Ի՞նչ դեռ ջանէլ ես. քեզ սպասում է ապագան: Մի վախենար. համոզուած եղիր, որ մենք կարող կլինինք պաշտպանելու քո իրաւունքները. ինչ է, վարենիների մէջ հօ չենք ապրում, փառք Աստուծոյ: Անվեհեր եղիր, գրիբ մի քանի խօսք միայն, և ես իսկոյն թե առած կթըռչեմ դէպի քեզ, կազատեմ քեզ քո բռնակալների ճանկերից»:

«Ուշ է», — Գալիանէի նամակը ծախելով մտածեցի ես, անդառնալի կերպով վճռած լինելով վերջացնել հաշիւներս այս աշխարհի հետ: Ես շատ րիչ ուժ էի զգում իմ մէջ, որպէսզի կարողանայի դարձեալ մտքառեւ կեանքի փոթորիկները դէմ վերջապէս ես չէի հաւատում, որ հնարաւոր է իրազործել այն բոլորը, ինչ որ գրում էր ինձ իմ բարի և եռանդոտ ազգակիցս: Ես մի քանի բարի և եռանդոտ ազգակիցս հիմա լինում էր ինձ իմ խօսքով հասկացրի նորան, որ արդէն վճռել եմ, և վճիռս անդրդուելի է, մնալ իմ առաջուպէ գրութեան մէջ և Աստուծոյ կամքին թողնել իմ վիճակը.....

Երեկ ամբողջ օրը տանն էի նստած և առհասարակ ոչ միայն աշխատում էի ինձ, այնպէս պահել, որ բոլորովին փարատեմ տանեցոց կանկածն իմ առեւտրով խելագարութեան մասին, այլև ամեն ճիգ գործ էի դնում սկեսուրիս սիրտը շահել թէև ալք սաստիկ ծանր էր ինձ համար: Աղպէս, վարուելուս պատճառն այն էր, որ քարեղէններէս արկղիկն չեա ստանամ և իմ զարգերը գործադրեմ որոշածս նպատակով: Ես այսօր համոզուեցի, որ մեր տանն ամենքն էլ ինձ արդէն հոգեպէս հիւանդների շարքն են դասել: Մինչև անդամ սկեսուրս նեարկեալին հիւանդութիւնների բժիշկ կանչել տուաւ: Թէև բժիշկը շափազանց զգուշ կերպով սկսեց իւր հարցութիւնները՝ բայց ես նկատեցի ամուսնուս դէմքից և սկեսուրիս ակնարկներից, որ նրանք ամեն կերպ ձգտում են, ամեն ճիգ են թափում բժշկի վկայութիւնն ստանալու իմ խելագարութեան մասին, որպէսզի ալք հիման վրայ իրաւունք ունենան հիւանդանոցում փակելու: Ս' իմ թշուառ երազն իրականանում է: Ալք բոլորն այն աստիճան սարսափեցրեց ինձ, որ բժշկի գնալուց չետոյ ես երկար ժամանակ մի տեսակ կեսարթուն, կէս-թմրած դրութեան մէջ էի: Անշարժ, ուժասպառ, ես շատ անորոշ կերպով էի լսում, թէ

ինչ էր կատարում իմ շուրջը: Նրբ սկսեցի ուշքի գալ՝ իմ ողջ էութիւնը պատեց այն կասկածը, որ ինձ իսկոյն կտանեն գժատուն: Բոլոր ժամանակ ինձ թւում էր, թէ զանազան պատրաստութիւններ են տեսնում. ահա քայլերի ձայն է լսում, ահա վերջապէս և դռան մօտեցող կառքի անիւների զղրղորջը: Ահա, ահա շուտով կկատարուի նրանց մտածած չարագործութիւնը: Նրբէք, երբէք չեմ գնայ այնտեղ», - բարձրաձայն գոչեցի ես, վեր թռչելով քաղմոցից: Իմ առաջ կանդնած էին իշխանուհին ու նրա պատուական զուակը և չարախինդ ժպիտով միմեանց վրայ էին նայում: Այս անգամ սրտիս մէջ աւելի սաստիկ քան երբեկիցէ, եռացին զայրոյթն ու բողոքը: Նրբ չարագործները դուրս եկան սենեակիցս՝ իմ հայեացքն ակամայ կանգ առաւ զառիկով լի սրուակի վրայ, որ բժիշկ Ակումեանը նշանակել էր իմ սակաւարիւնութեան դէմ: Ես անհուն բաւականութեամբ աչքս չառած նայում էի այդ սրուակին, իմ այդ միակ ազատչին.... Շտապեմ, գնամ մնաս բարե ասելու իմ թանկազին մանկիկին և ապա .....

«Իմ բարեկամ երիտասարդ ամուսիններն իրաւացի էին. Մարիա Նգորովնայի մահուան մէջ մի առանձին, մի տարօրինակ բան կայ ծածկուած: Այն, իշխան Ատունու ամուսնութիւնն անտարակոյս ներկայացնում է կատարեալ կողոպտութեան ու մարդասպանութեան դէպքերից մինը», զգուսնաքով մտածեցի ես՝ աւարտելով օրագրի ընթերցումը: «Սեղճ կին, խեղճ կին», - չաճախ մտաբերում եմ ես հանդուցեալին:

Վ Ե Ր Ջ

-ի միմեջխառնա քրտաառնիք երկնայ կի  
 էն մասան փափոցորք աղիքն անէ գլխայ  
 շարունակ յոյն ան ինչոցս մի ինչոցս մի  
 պատան մնի փոփոխանա առտոյն մասիկ  
 մամ արարորք յազգառնի ի քաղաքայն ար  
 -մա արք արմի քիզորքն սամ փոփոխարարոն ար  
 -տրդիկի քիզորքն ի քաղաքայն արմի քիզ  
 արդիկան քաղաքայն արմի քիզորքն ի քաղաքայն

Ք Վ Մ

1879 թ.	1	Թաւամաղ մեղոն, (սպառ.)	{	Թարգման. օր. Ն.	— 40
1980 թ.	2	Վարմիր լապաեր,	{	Տ. Մարտիսեանի	— 30
	3	Մանկական երգեր, Գամառ-Քաթիկոսյի			— 15
	4	Թոյմաս եղբոր անակը, Թարգմ. օր. Ն. Տ.-Մ.			— 45
	5	Մորեն և նրա ջնջելու հնար. (սպառ.)		Ն. Տ. Բ	— 10
	6	Նեղ և իրնաւ բնականների մասին, Հ. Ա.			— 10
1881 թ.	7	Մոլիսիի Խորենացոյ Պատմութիւն Հայոց (սպ.)			— 80
	8	Փոքրիկ ձեռնարկ գործնական անտեսութեան			— 50
	9	Գամառ-Քաթիկոսյի բանաստեղծ. (սպառ.)			— 50
	10	Ռօբերտոսի պատմութիւն, Թարգմ. Գ. Բ. Ա.			— 60
1882 թ.	11	Ռեխտաւորք, աշխ. Ռ. Պատկան. (սպառած)			— 75
	12	Գառնուի և Լուսատանիկ, Գմբեղտի, Թարգմ. Ն.			— 25
	13	Սոյաթ-Վօփա, աղգային երգիչ . . . . .			— 5
	14	Ծննդեան պատմութիւնը . . . . .			— 10
	15	Սգաթանդեղեայ պատմութիւն. . . . .			— 4
1883 թ.	16	Գեղարան խալիֆայ, Ա. Արաքսեանի . . . . .			— 50
1885 թ.	17	Վանայ սաղ, Շէրենդի, Ա. Հատոր. . . . .			— 75
	18	Փնջիկ, զրեց Աղէբանդը Արաքսեան . . . . .			— 20
	19	Նամուս, վէպ, Շիրվանդադէի (սպառ.) . . . . .			— 1
	20	Ստեփանոսի Տարոն Ասողկան Պատմ. տիեզերք. . . . .			— 2
1886 թ.	21	Թիֆլիսեցոյ ճառար կեանքը, Գ. Տ. Աղէբս. . . . .			— 1 50
1887 թ.	22	Ղևնու պատմադիր . . . . .			— 2
1888 թ.	23	Սրբազան պատմութիւն (սպառ.) { Ա. Բ. Սա . . . . .			— 30
	24	Դասագիրք կրօնի (ուսուցչ. համ.) { Հակեանի. . . . .			— 1 75
1889 թ.	25	Սոկրատէս, Թարգմ. օր. Թ. Ստեփոյ (սպառ.) . . . . .			— 10
1890 թ.	26	Պատմութիւն Հայոց, Պալասեանի (սպառ.) . . . . .			— 1 50
	27	Ուղեցոյց գործնական շերամապաշ. Կ. Մ. Ն. . . . .			— 40
1891 թ.	28	Ժամանակագրութիւն Հայոց, Յ. Գարգելի . . . . .			— 1 25
	29	Վարդ-Ռէսյն, Սպերի, Թարգմ. Ի. Յ. . . . .			— 10
	30	Նալ և Գամայեանի, Յ. Գմբեղտի . . . . .			— 20
	31	Ստուած գիտէ արդարն ու մեղաւորը, (սպառ.) . . . . .			— 7
	32	Հատարիմ Սալիսերին, Վալլանի . . . . .			— 10
	33	Լինհարգ և Գերարուգ, Պետարոցի . . . . .			— 25
	34	Յաւելուած ի գերս պատմութ. Ստողան . . . . .			— 20
	35	Նաւի փոքրաւորք, Մ. Ռոզենի, Թարգմ. Յ. Լ. . . . .			— 15
	36	Ուսնեց Յոլիսի, Ն. Սպերի, Թարգմ. Ի. Յ. . . . .			— 15
	37	Մեծապատիւ մուրացիաներ Յ. Վ. (սպառ.) . . . . .			— 40
	38	Աղգային ջոջեր, Յ. Պարոնեանի (սպառ.) . . . . .			— 1



125	Գաւիթ Կողպեր-Ֆելլը, Չարլս Գիլիէնսը, Թ. Պ. Պ.	1	—
126	Գասընիերներ, Աննե՛նակայա, Թ. Կ. Իրիւնադար.	—	50
127	Խժռողներ, պրոֆ. Մ. Բողդ. Թ. Լ. Մ. Ադամ.	—	50
128	Ղեկավար պատմութեան, Ար. Ֆ. Դոգէի, Թ. Վ. Փափ.	—	40
129	Հասկիներ, Ա. Ահարոնեանի	—	40
130	Կեանքի տեսարաններ, Քասիմի	—	50
131	Ոսկի շինողներ, Յշօկիէ, Թ. Խ. Մարտիրոսեանի.	—	50
132	Գուլլիէրի ճանապարհորդ, Թ. Ղ. Աղայեան.	—	50
133	Թառչունների անասնաբան տեղագիտութիւնը	—	5
134	Վեներտիկ վաճառականը, Եկեղ., Թ. Յ. Խ. Մառ.	—	40
135	Երկրաշարժ և Հրաբխ. լեռներ, Լուսիկիլիէ.	—	15
136	Վէպիկներ և զբոյցներ, Գի դը Մուրաս. Թ. Ն. Առ.	1	—
137	Բուդդէա, կաղմ. Վ. Մ.	—	20
138	Երկրի և երկնքի մասին, Վ. Լուսիկիլիէ	—	10
139	Կանթուցիտ, կաղմ. Գ. Բաղր.	—	20
1898 Թ.	140 Արդիտիրական օդերործութիւն. Յ. Պետրոսեանի	—	40
	141 Գրեղանոստես. մեքեն. և գործ. Լ. Խան-Աղեանի.	—	50
	142 Կենդանիների աշխարհում, Լուսիկիլիէ.	—	30
	143 Արքայ լիւր, Եկեղ. Թ. անդ. Յ. Խան-Աստեղեանի.	—	50
	144 Յո՛ւ երթաս, Սենկիկիլիէ. Թ. լեհ. Սառ. Լիսիցեանց	1	50
	145 Ինչ է հէքիսթը, Կոմ. Մուրիկայի, Թ. Ղ. Սղ.	—	10
	146 Մարդ եմ, էքերսի, Թ. դերմ. Ս. Մայլասեանց.	—	10
	147 Սղը և կեանքը, Թ. Ն. Նէր-Յակովբեանց.	—	10
	148 Խորամանկ աղուէսը, Սիլիկիլիէ. Թ. Պ. Պաօշեանց.	—	10
	149 Կղզիների լորդը, Վալտեր Կոտտի, Թ. Յ. Չ. Միրզ.	1	—
	150 Վանա, օսղ, Բ. Հատոր (մամուլի տակ)	—	—
	151 Հանրէտ, մ. Կողպէի, Թ. Փրատես. Լ. Խ.	—	35
	152 Պասկալ, Թ. Գ. Բաղր	—	20
1899 Թ.	153 Չեասիկայի առաջին աղօթքը, Թ. Պ. Պաօշեանի	—	20
	154 Երկատարը Անդրիայի, Հառափի, Թ. Շ. Տ.—Ն.	—	5
	155 Հրէայ Արեւելը, շառափի. Թարգմ. Շ. Տ.—Ն.	—	3
	156 Մերէսի պատմ. և Մ. Խորեանցի, Սառ. Մալիս.	—	40
	157 Գալլիէյ, կաղմեց Ն. Առաքելեան.	—	25
	158 Քար-Ալբո, (մամուլի տակ)	—	—
	159 Մանչուկն ու Կուսիկը, Թարգմ. Պ. Պաօշեանի.	—	10
	160 Խնամատարութիւն ասող երեխ. Բժ. Վ. Սըրժ.	—	25
	161 Մանկութիւն և Պատանեկ. Տօլստոյի (մամ. տակ).	—	—
	162 Պուշկին, Ս. Լիսիցեանցի.	—	40
	163 Գլադստօն, Լէօի	—	80

Գիւմել—Тифлист, Тифлисское Общество Изданія Ар-  
мянскихъ книгъ, կամ Tiflis, (Russie), Société de la  
publication des livres arméniens.

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՅՐԱՏԱՐԱԿԸ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1899 թուին ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

150	ՎԱՆԱՅ ՍԱԶ, Բ. հատ. (մամ. տակ). —	
153	ՋՆՍՍԻԿԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԱՂՕԹՔԸ, Թարգմ. —	
	Պերճ Պռօշեանի . . . . . —	20
154	ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՆԳԼԻՍՅԻՆ, Հատ.Փի. —	5
	Թարգմ. Շ. Տ. — Ն . . . . . —	
155	ՀՐԷԱՅ ԱԲՆԷՐԸ, Հատ.Փի. Թարգմ. —	3
	Շ. Տ. — Ն. . . . . —	
156	ՍԵԲԷՈՍԻ ՊԱՏՄՈՒԹ. ԵՒ Մ. ԽՈՐԵՆԱՅԻ, —	40
	Ստ. Մալխասեանցի . . . . . —	
157	ԳԱԼԻԼԷՅ, Կազմեց Հ. Առաքելեան —	25
158	ԳԱՐ ՍԻՐՏ, Հատ.Փի, Թարգմ. Շ. Տ. — Ն —	25
159	ՄԱՆՉՈՒԿՆ ու ԿՈՒՏԻԿԸ, Թ. Պ. Պռօշ. —	10
160	ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆ առողջ երեխա- —	25
	ների. Բժ. Վ. Արծրունու . . . . . —	
161	ՄԱՆԿՈՒԹԻՒՆ և ՊԱՏԱՆԵԿ. (մամ. տակ) —	
162	ՊՈՒՇԿԻՆ, Ս. Լխալեանցի . . . . . —	40
163	ԳԼԱԳՍՏՈՆ, Աէօի . . . . . —	80
164	ԳՆԱՐ ՊՈՒՇԿԻՆԻ . . . . . —	50
165	ՀՋՕՐ ՍԵՄՍՕՆ, (մամուլի տակ) . . . . . —	
166	ԳԺՐԱՍ ԿԻՆ, Մ. Խաախեանցի . . . . . —	45

Դրժեւ — Тифлисъ, Тифлисское Общество Издания армянскихъ книгъ, կամ Tiflis (Russië), Sociéte de la publication des livres arméniens.

10797

2013

